




Վ. Գ. Ի. Ն.

digitised by

1971

0900500

A.R.A.R.@

ԹԻԻ 8

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

|               |                                                                                      |
|---------------|--------------------------------------------------------------------------------------|
| Ա. ՀԱՅԿԱԶ     | «Տուն արի՛»                                                                          |
| Խ. ԱՍՈՅՆԱՆ    | Մուրիմ մէջ                                                                           |
| »             | Շունը չափի լույ դուն                                                                 |
| Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ  | Հէնրի Միլլեր                                                                         |
| Հէնրի Միլլեր  | Հայ գուշակը                                                                          |
| Հէնրի Միլլեր  | Հանդիպում Ամերիկայէն վերադարձող<br>յոյնի մը հետ, յունական կայարանի<br>մը մէջ, 1939ին |
| Յ. ՇԻՐԱԶ      | **                                                                                   |
| Թ. ՈՐԲԵՐԵԱՆ   | Պոչտա մոզէզներ                                                                       |
| ՄՈՒԹ-ԱՐՓԻ     | Երթալու                                                                              |
| Յ. ԶՈՐԵՑԻ     | Հայկական ուղեւորաւիշ                                                                 |
| Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ | Շարական սիրտամոզութեան եւ<br>անուանակոչումի                                          |
| Ա. ՏՕՆՈՅԵԱՆ   | Վերադարձ դէպի Աստուած                                                                |
| Լ. Ս. ՇԱՆԹ    | Տեսական փորձեր կեանքի եւ մտքերու<br>մասին                                            |
| Ս. ԶԵՅԹԼԵԱՆ   | Կնոջ մը կեանքը (Զ. Եսայեան)                                                          |
| Մ. ԷՍԼԻ       | Էթէն Խոնեսթո                                                                         |
| Պ. ՍԵՒԱԿ      | Քրիստոսաւորութեան այլեւ յաւելում չէ                                                  |
| **            | Նշմարներ                                                                             |



# Բագրու

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ժ. ԽԱՐԺ. ԹԻՒՒ Թ

Թ Դ Ո Ս Տ Ո Ս 1921

ԳԼԵՐՈՒԹ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

### «Տ Ո Ւ Ն Ա Ր Ի»

■

Գիտեմ, որ կան բազմաթիւ մարդիկ, որոնք առաւօտները որոշ ժամու  
մը արթննալու համար՝ զարթուցիչ ժամացոյց կը լարեն։ Ես ալ ունիմ հաւո  
մը, բայց իմինս մեքենական չէ, ես չէ, որ կը լարեմ զայն։ Աւելին. ես չէ՛ր,  
որ կ'որոշեմ արթննալու ժամս։ Ոմանք, Շաբաթ ու Կիրակի օրերը, քանի որ  
չնշակտուր աշխատանքի վազել չկայ, չեն լարեր զարթուցիչ զանգակը կառա-  
վարող զսպանակը, որ կուշտ մը քնանան ու միւս օրերու վրէժը լուծեն։ Ես  
նման բան չեմ կրնար ընել։ Այս պահուս, երբ այս սողերը կը դրեմ, երբ  
արդէն լոյս է, երբ արդէն արեւը բարձրացած ու դրացի Հիլիթթէնդի բակին  
կաղամախիներու կատարին ոսկեփռչի է ցանած, երբ արդէն ես մարած եմ  
ծրադս, ահ, այս բաներուն տեղի ունենալէն շատ առաջ, զիս արթնցնելէ  
ետք, դեռ գործի վրայ է, ու յիմարարա՛ր, յիմարարա՛ր կ'աղմկէ։

— Է՛ր, ալ համը փախցուցի՛ր, ապս՛ւշ, ալ գլուխ կ'արդուկե՛ս, —  
կ'ըսեմ իրեն թուղթիս վրայ հակած գլուխս բարձրացնելով, — ի՛նչ յորդած  
առուի պէս կը շաղակրատես... Տէրտդ ի՛նչ է... Ըսէ՛ զարման ընենք...

Քոստովանիմ, որ այդ յանդիմանութեան մէջ գուրգուրանք կայ, ա-  
ռաջին առթիւ ձգած սպաւօրութենէն բոլորովին տարբեր իմաստ ունի. տե-  
սակ մը դնահատական է։ Ջրախօսը, կամ շատախօսը, անհոգի մեքենայ մը  
չէ... Տարիներով մեր տան, մեզի ու մեր պարտէգին կապուած, ապրող, շըն-  
չող, հնուց ծանօթ կարմրալանջ մըն է, ու ինչ որ աւելի կարեւոր է, իր երգն  
ալ անհաճոյ. չէ՛ մեր խնձորի ծառին վրայէն գողութիւն ընող յողապի՛ ձալ-  
նին պէ՛ս։

digitised by

A.R.A.R.@

Իբրեւ իր մասին յանձնաւ տեղեկութիւն, ըսեմ նաեւ, թէ կարգուկ է. կին ունի: Տասնըհինգ-քսան տարիէ ի վեր, մեր տան առջեւ գտնուող հացիին վրայ, իրենք չէ, իրենց նախահայրերը, բոյն էին դրած ու կ'ապրէին մեղի հետ, բարի գրացնութեան մէջ: Ձեռն կարծեր, թէ անոնց կեանքի տևողութիւնը 4-5 տարիէն աւելի է. որքան որ գիտեմ, չատ-չատ, ութ տարի: Լաւը այն է, որ միշտ, ժառանգորդներ ձգելէ ետքն է, որ տարեցները կը մեռնին, կամ արկածահար կ'ըլլան զաղթի ու ճամբորդութեանց ընթացքին:

Ներկայիս մեր ծառին վրայ ապրողները ութներորդ սերունդին կը պատկանին, ու խնդիրը անոնց ու իրենց ծնողքին շուրջն է, որ կը դառնայ: Դեռ շատ մատաղապի են իրենք. մայրերնին, անցեալ աշնան, երբ գիշերները եղեամ իջնել օկտաւ աստիճաններուն եւ դաշտի գոգմաններուն վրայ, ձապերն առաւ ու զնայ հարաւ: Ամէն բան պիտի տայի, գիտնալու համար, թէ ինչպէ՞ս հմաք բարով՝ ըսաւ ամուսնոյն... Թերեւս ալ, երեսը չընենց ու անաղուկ փախաւ: Մնդիրը այն է, որ ամուսինը, ի՞նչ-ի՞նչ պատճառներով, չկրցաւ զաղթողներու կարաւանին միանալ, մնաց ետ ու իր օրերն ու ժամերը անցուց մեր տարբերային տակ, չամիչի վերածուող խաղողի հատիկները ուտելով եւ արեւուն տակ, գլուխը թելին մէջ պահած, քնանալով:

Առաւօտ մը գինքը մեռած գտանք: Ես է, որ գտայ: Փետուրներուն վրայ եղեամ էր նստած: Աչքս մեր տան պատուհաններուն, անապարանքով թաղեցի գինքը առաջին հանդիպած տեղը: Բարի բախտէս՝ մարդ չտեսաւ... Աստուած չընէ՛, եթէ աղջիկս տեսնէր, ալ զո՛րծ ունէինք. զետեքով արցունք կը թափէր ու ալ պարտէզ չէր մաներ՝ մեռելին հոն թաղուած ըլլալը յիշելով:

Բայց ամէն հասարակ մահկանացուի տրուած բախտաւորութիւն չէ վարդի թուփի տակ թաղուելը, ու այդ կարծիք վարդի թուփը, մինչեւ հիմա, կը ծառայէ իբրեւ տապանաքար անոր գերեզմանին:

Բնական է, մեռելաթաղի պաշտօն կատարած պահուս, խորհեցայ հարաւ չուած իր կնոջ ու զաւակներուն մասին եւ ուղեցի գիտնալ, թէ արդեօք ձեռով մը անոնց յայտնի եղա՞ւ, թէ հոս ինչ գործախտութիւն պատահեցաւ... գիտցա՞ն, թէ փափան սեւ հոգը գրինք վարդի թուփի մը տակ...  
 \* \* \*

Գարնան դէմ, զեռ ձիւնը գետնէն չվերցած, անոնք եկան ետ: Այդ օրը մեր տան մէջ ուրախութիւն տիրեց: Մեր մտահոգութիւնը վերջ գտաւ: Լորիկը ապահով ճամբորդած էր ու հարաւի մէջ ալ մանչ մը գտնելով՝ հետը բերած տուն: Իր նախորդին անունը, Թորիկ, տուինք նոր փեսային: Իրաւ է, թէ Լորիկին հետ համեմատած, Թորիկը քաղցրահունչ չէր, բայց յանդը կը ներգաշակաւորուէր Լորիկ անունին հետ... Մենք՝ Հայկիս գիտենք, թէ ամէն զնգեցկութիւն մէկ տեղ գտնելը դժուար է:

Լորիկն ու Թորիկը, միասնաբար, սկսան հին բոյնը այցելել հրեմն, բայց չփորձեցին զայն նորոգել, որովհետեւ զեռ շինանիւթ չկար. ամէն բան թաց էր, անտանելիօրէն թաց...

Կի՛նս ըսես, օրը քանի մը անգամ հեռաձայնին գլուխն էր. աթեմին-չաթեմին կը հեռաձայնէր՝ ըսելու համար, թէ մեր կարմրալանջները աս տարի ալ եկան: Ըսելու համար, թէ Լորիկը հոն ամուսնացեր է, ու իր հետ տնօրէնսայ բերած:

— Ե՛րբ եկան:

— Երկու օր առաջ: Առաւօտուն արթնցանք, որ եկեր են:

— Աչքերնիդ լո՛ւս...

— Թեյնիք հա՛ւ...

— Շնորհիկին ալ հեռաձայնեցի՞ր:

— Քեզմէ վերջ անոր ալ պիտի կանչեմ. առաջ քեզի կանչեցի:

Ու նման բաներ:

Եթէ երկիր ըլլայինք, ու զարկալ-ղուրպէթ դաքած մեր զաւակը վերա-  
դառնար պանդխտութենէ, կամ հեռաւոր արկածալից ճամբորդութենէ մը,  
հաղիւ թէ ասկէ աւելի ուրախանայինք, հոս ու հոն հեռաձայնելով աւետի՛ս  
տայինք... Վերջապէս ամէն բան, մատաղ մորթեղէ ու սուրբերուն առջեւ մոմ  
վառելէ զատ, ամէն բան լման ըրինք: Վստահ եմ, եթէ հայոց հին թէ նոր  
կրօնին մէջ ճամբորդութեանց հսկող կամ զարկաները տուն բերող սուրբ դո-  
յութին ունեցած ըլլար, այդ բաներն ալ կ'ընէինք:

Միայն մէկ մտահոգութիւն կը պղտորէր մեր երջանկութեան ազդէրը.  
— վստահ չէինք, թէ նոր Թորիկը հին Թորիկին պէս պիտի բնականա՞ր, ա-  
ծուները փորձուած պահուս պիտի հետեւե՞ր աշխատանքիս ու շարժումնե-  
քուս, որ դուած պարարտ որդերս իրեն նետէի...

— Հոգ մի՛ ընէր, — ըսաւ տիկինը, — երբ ան տեսնէ, որ Լորիկը այդ-  
պէս կ'ընէ, ինք ալ կը հետեւի անոր:

— Ըսել կ'ուզես, թէ էրիկը բա՛ն կը սորվի կնոթմէն:

— Ըհհ՛:

— Կարելի է, աս աշխարհի վրայ ամէն բան կարելի է, — ըսի ես թե-  
րահաւատութեամբ:

Մինչեւ իրական դարեան գալը, կանաչներուն ծլիլը ու միջատներուն  
մոհեռային քունէն արթննալով արեւ ելլելը, օրը երեք անգամ կերակրեցինք  
զանոնք: Երբ արեւը տաքցաւ ու զարուհր պայթեցաւ, հողէն բուրում ու շոգի  
բարձրացան, զանոնք կերակրելու երեք մումը մէկի իջեցուցինք:

— Թող մակարոյն չըլլան, ծուլութեան չվարժուին, — ըսի:

\*\*\*

Նկատեցի, որ նոր Թորիկը, հին Թորիկին, լուսահողիին պէս կնոջը  
օգնելու ետանդ ցոյց չի տար. կը ձգէ, որ ան աշխատի, ու ինք, ծառի մը  
ոտին թառած՝ կ'երգէ:

Մտքէս բարենիշ մը տուի իրեն:

— Ապրի՛ս, ծօ՛...

Նոյն երեւոյթը նկատող մեր տիկինը դայթակցեցաւ.

— Թշուառականին բռնած գիրքը կը տեսնե՞ս, — ըսաւ, — ծո՛յլ է,  
անպէ՛տ, հաճոյատէր, հիմա՛նլ, ծիտած զաղափարներու տէ՛ր. ուրկից ա՛լ  
Լորիկի դէմն ելաւ...

— Այո՛, այդպէս ըլլալ կը թուի, — պատասխանեցի յանուն բնական-  
կան խաղաղութեան, — կը թուի, թէ կիներու ազատադրութեան ու հաւա-  
սարութեան շի հաւատար, յետադիմական է... Կարծես Արեւելի, Թուրքիոյ  
մէջ կ'ապրի, — կրակին վրայ իւղ լեցուցի ես:

Տարակուսանքով լի աչքերով ինծի նայեցաւ:

— Ի՞նչ է, կը ծաղրե՞ս, — հարցուց:

— Մաղրե՛մ... Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի... Բայց կը կարծեմ, թէ անոնց  
երկուքին մէջ աշխատանքի արդար բաժանում կայ. Թորիկը բազէի աչքերով  
կը հսկէ Լորիկի ապահովութեան վրայ ու երգելով կը հաղորդէ իրենց տիրա-  
պետութեան սահմանները, ըսենք՝ իրենց կայսրութեան սահմանները. ճիշդ

այնպէս՝ ինչպէս ես կը հակեմ քու ապահովութեան վրայ. կը վնասեմ մեր կալուածէն ներս մտնել ուզողները... Ձէ՛ որ բնատնիւրի ապահովութեան հարցը ժամանակներու ուսին է ինկած: Գիշերք, երբ լսեա, որ վարը դողեր կան, դուն չէ, որ զանոնք վրանելու համար, գնդակահարութիւնը աչք առնելով, վար կը վազե՛ս... Այդ քու գործը չէ... Կ'արթնցնես դիւ, որ երթամ սառու-գիւժ ու դուն վերմակդ գլուխդ քաշելով՝ կը կլորուիս մահճակալիդ կեդրոնը: Թորիկի ու Լորիկի պարագան ալ ինքե՛ս այդ է, — աւարտեցի ես իմ ճառը:

Այս փաստարկութիւնը հարցը փակեց, որովհետեւ իր ու իմ յիշողու-թեան մէջ դեռ թարմ էր այն դիւները, երբ գողահար կողմ փոթեց ու բռաւ:

— Արա՛մ, տասնարկօցի՛ր, կկկկկարծեմ վճիվարը գողողեր կկկան: Բա՛ն մըն ալ չկար: Կատուն մուկի մը հետեւէն էր վազած:

❦

Պարունը մեծաքայլ կը յառաջանար: Հաշուեցինք, որ հիմա ձու անելու գործողութիւնը աւարտած՝ թուիս նստելու մասին պէտք է մտածէին մեր հիւրերը: Բայց նման բան ըրած չունէին. թէեւ միշտ միտսին էին բակին ու պարտէզին մէջ:

Ըսենք, թէ Թորիկը նոր էր, ջահիլ. բանէ լուր չունէ՛ր, բայց ի՛նչ էր պատահած Լորիկին... Ձէ՛ որ քանի մը անգամ մայր էր եղած:

Առաջ, հին Թորիկին մեռնելէն առաջ, երբ ան մինակ ըլլար մարդին վրայ, կը դիտնայինք, թէ նախապարտաստական աշխատանքները վերջացած են ու Լորիկը բոյնի խորունկ մասին մէջ գտնուող երեք երկնագոյն ձուերու վրայ թուիս նստած՝ իր մայրական սրտի ու մարմնի ջերմութեամբ զանոնք պարուրելով կը ջանայ կենդանացնել ձուերը: Օրը քանի մը անգամ ալ, կարճ պահերու համար, Թորիկը կը փոխարինէր Լորիկը, որ խեղճը ելլէ, գէշ աղէկ կ'աւանջէ փորը ու շարժէ բնդարմացած անդամները:

Ճիշդ է, թէ Թորիկ իր կեռի պէս շնորհալի չէր՝ իր այդ գրադումին մէջ, բայց շատ զոյճ էր. ձուերուն վրայ կոխելով չէր փնայներ դանոնք, ու մեծ, չա՛տ մեծ խնամքով զանոնք կը դարձնէր, տակը վրան ու վրան տակ կ'ընէր, որ ջերմութիւնը հաւասար բաշխուի ամբողջ ձուին վրայ. յետոյ կուրծքը ունեցուցած, թուերուն տակ կ'առնէր ձուերը ու քնացողի պէս փա-կելով իր սեւ մանրիկ աչքերը, կ'անշարժանար:

Ի՛նչ երջանկութիւն:

Լորիկ, երբ վերադառնար, ժամանելը արդէն մրափ մը առած, հանգ-չած, առուզացած, տեղը կու տար անոր, ու ծառին էն բարձր ճիւղին թա-ռած՝ կ'երգէր լիահագագ:

Ափսո՛ս, որ չէի հասկնար իր լիզուն: Ձէի հասկնար, թէ ի՛նչ կ'ըսէր: Կեռի, կենքի, ընտանեքի սե՛րը կ'երգէր, թէ ոչ... Թերեւս ալ կ'երգէր պար-զապէս, որովհետեւ կ'ապրէր: Ապրելուն, սիրելուն ու երիտասարդ ըլլալուն համար երջանիկ էր...

Երջանիկ էր՝ ու կ'երգէր:

❦

Յուլիս 21ին, օրացոյցը ըսաւ, թէ տարւոյն ամենաերկար օրն է, ու վաղը պաշտօնապէս կը սկսի աճառը:

Առաւօտ կանուխ, երբ ննջարանին պարտէզին վրայ քայլող պատուհանէն

դուրս աչք մը հետեցի, Լորիկն ու Թորիկը միասին կ'արածէին: Խելքս չհասաւ: Ձու անելու, ձալ հանելու համար՝ ալ ո՛ր օրուան կը սպասէին...

Այս հանելուկի լուծմամբ էի գրադած, երբ տեսայ, որ Լորիկը ծունկերը ծալեց, ծոծեցաւ վար՝ ու կանաչ մարդին վրայ, մեծ դիւրութեամբ, երկնադոյն հուկիթ մը անեց:

— Յիմա՛ր, — պոռացի, — դո՛ւմ'ը ձու անելու տեղը... Ձէ՛ր՝ կրնար մինչեւ բոյնդ թռիլ:

Ամուսինը, որ մօտն էր, մարդին վրայի ձուն տեսնելով՝ մօտեցաւ անոր, գլուխը աջ ու ձախ ծռելով մօտէն քննեց դայն՝ չհաւատացողի, հաւատալ չուզողի պէս, քանի մը կարճ բառերով քչքչաց՝ ու կտուցով Լորիկէ դիտուն քանի մը հարուած տուաւ:

— Ասլի՛ս, Թորիկ, — ըսի սրտանց ուրախանալով այդ պատիժին համար, — էլիկ մարդութիւնդ արժեք ունի՝ այդ յիմարին դաս մը տալով:

Թաղորդ օրը, գրեթէ նոյն ժաման, պատմութիւնը կրկնուեցաւ: Ու ծեծէն ետք, երբ Լորիկ կ'աշխատէր հուկիթը կտուցով բռնած բոյն տանիլ, ան խորտակուեցաւ՝ ու անոր պարունակութիւնը թափեցաւ դետին:

Երբ մօտեցայ քննելու, մարդին վրայ, սիսեռի մեծութեամբ դեղնուցը կար միայն, մնացեալը ծծուած էր հողէն կամ կորսուած կանաչին մէջ:

Յուզուեցայ: Ախոսացի:

Ինծի թուեցաւ, թէ սպանութիւն մը տեղի էր ունեցած: Անպաշտպան էակի մը կհանքի թիւն էր կարուած...

Կեանքը, բոյսի, ծառի, ասունի, անասունի համար ալ՝ կեանք է...

Երկար ժամանակ չկրցայ աչքերս դառնլ այդ պատիժ, հաղիւ սիսեռի մը մեծութեամբ հուկիթի դեղնուցէն, որ ասպագայ երջանիկ կարմրալանջի մը սերմը կը պարունակէր: Մէկ խօսքով՝ երգ մը ժեռած էր աչքիս առջեւ:

\*\*\*

Հիմա ամառը բաւական յառաջացած է: Լորիկը չեմ տեսներ ալ: Թորիկն է, որ հացիի ամենարարձը ճիւղին թառած անդադար կ'երգէ: Լման օրը, անդադար կ'երգէ:

Առաջ, առաւօտ կանուխ, եւ արեւուն մարը մօտեցէն ետքն էր, որ կ'երգէր. հիմա ամբողջ օրը կ'երգէ: Բայց տխուր երգ մըն է իբրը: Երբ ակնոյնս հարցուցի, թէ ի՞նչ կը խորհի, սրտաբեկուած տխուր մարդու երգ մը չէ՞ Թորիկի երգը, ըսաւ, թէ ինք ալ նկատած էր այդ բանը, բայց չէր ըսած ինծի՝ վախնալով, որ ծիծաղելի կը դառնամ իր ենթադրութիւնը:

Մեր տան վերնաշարիկի պատուհանէն կը նայիմ բոյնին մէջ՝ հոն Լորիկը նստած գտնելու յոյսով ու ակնկալութեամբ. բայց բոյնը պարա՛պ է:

Եթէ Թորիկի լեզուէն հասկնայի, կը սպասէի պարտէզը ու երբ զար աւազանէն բերան մը երկուք ջուր խմել, կը հարցնէի, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ. բայց դժբախտութիւն է, որ չեմ հասկնար իր լեզուէն...

Երբեմն, անկողնիս մօտ դրուած սեղանին վրայի ժամացոյցը կը մոռնում պակած պահուս լարել, ու ան կը կենայ: Գիշերը, երբ արթննալով կեցած գտնեմ զայն, տեղէս չեմ ելլեր ուրիշ ժամացոյցէ մը ժամանակը ստուգելու համար. Թորիկը, չորսին տատներեք բողջ մնացած՝ կ'արթնայ ու նօսրանալ սկսող աղջամուղջին մէջ, կը նետէ քնաթաթաւ իր առաջին կանչը:

Ձէ՛, սխալ չ'ընե՛ր: Ժամը ճիշդ չորսին տատներեք բողջ մնացած կը

սկսի իր ողբը, կամ երգը, կամ պատարագը, կամ բարի լոյսը: Թերեւս ալ՝  
 Լորիկին ուղղուած աղերս մը...

Իր լեզուէն չեմ հասկնար, որ որոշեմ թէ ասոնցմէ ո՞ր մէկն է իրը:

Թերեւս ալ կը ջանայ թառաօառ արթնցնել իրեն պէս:

Վերջապէս հաւ է, չէ՞...

Լսած եմ, թէ աթորները կը կարծեն, որ ասանց իրենց չեփորին առա-

ւօառ չի գար:

Մարդիկ ու կենդանիները երբեմն որքա՞ն միամիտ են, Աստուած իմ:

Երբ լաւ մը լուսնայ, Թորիկի երգն ալ, կարճ պահու մը համար, կը

գաղտնի:

Նախաճաշի պահն է այդ, գիտեմ:

Յետոյ երգը կը վերսկսի:

Տիկնին ու ես երբեմն կը մտահոգուինք իր կոկորդով:

— Կարծես թէ այսօր իր ձայնը մարած է, — կ'ըսէ ան նախաճաշի

պահուն:

— Բա՛ն մըն ալ չէ եղած. քեզի այդպէս կը թուի:

— Արդեօք ի՞նչ կ'ըսէ. ինչ չվերջացող պատմութիւն եղաւ իրենը:

— Ի՞նչ պիտի ըսէ. քանի որ Լորիկը չկայ, աշխարհին կը Ժանուցանէ,  
 թէ ամուրի է, ու կեանքի նոր ընկեր կը փնտռէ:

— Այդքան շո՞ւտ:

— Երևար ո՞րն է. սեւ հագնելու, սուգ պահելու չէ՞ր, — կ'ըսեմ, — ա-

զատամիտ մարդու հովեր առած:

— Ու՛շ, չեմ գիտեր, չեմ հասկնար:

Յետոյ, պահ մը լուսնեմէ՝ ու հաւանաբար խորհելէ ետք, կ'աւելցնէ.

— Արդեօք Լորիկին ի՞նչ պատահեցաւ, որ մէջտեղ չկայ:

— Ո՞վ գիտէ, Թերեւս քանի մըն ալ չէ պատահած. պարզապէս լքած է  
 ամուսինը: Ձէ՞ որ մեր աչքին առջեւ ծեծ կերաւ ամուսնէն... Դուն գիտես,  
 որ երբ կիները ծեծես, մօրերնուն տունը կ'երթան, ու երբեմն ալ ետ չեն  
 գար...

— Իմ մամսս հոս չէ, որ ես ալ իր տունը երթամ. չեմէ շատո՞նց հոն  
 գացած կ'ըլլայի...

— Ես ալ կու գայի ետեւէդ ու կը համոզէի քեզ, որ տուն գաս: Եւ  
 կարծեմ, թէ Թորիկի բրածն ալ այդ է. կոտորուած՝ կամ բունին մէջ չածուած  
 հակիթի համար կնոջ վրայ ձեռք բարձրացնելուն առթիւ զղջացած է, ու իր  
 զղջումը, գիշեր-ցերեկ, կը պոռայ դրացիի ցարասիին կատարէն: Կ'ըսէ, թէ  
 ամէն բան ներուած է, կը ցաւիմ վրադ կտուց բարձրացնելու համար, բայիկ,  
 տուն եկուր: Եթէ աս տարի չեղաւ, զալ տարի ձադ կը հանենք, սերունդ,  
 Ժառանգորդ կը պատրաստենք: Եկուր, մոռցի՛ր անցեալը, բայիկ, տո՛ւն ե-

կուր, տո՛ւն եկուր, տուն արի՛...

✽

Յուլիս ամիսը վերջանալու վրայ է: Տա՛ք: Բոլոր թռչունները զով շու-

քեր ասպատանած՝ կը հանդիսն: Հացիկ կատարէն մինակ Թորիկն է, որ ան-

ընդհատ կը կանչէ.

— Լորիկ, բայիկ, տուն արի՛... տուն արի՛, տուն արի՛...

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

digitised by

A.R.A.R.@



Վ Է Տ Ե Ր

Մ Ո Ւ Ք Ի Ն Մ Է Ջ

Տօք:  
Վարդ մը՝ այտը ցեխով լուաց:  
Տղայ մը՝ խեղճ:  
Մուրացիկը ափին թփաւ:  
Փողոցին մէջ:  
Կին մը անցաւ ձիւնի պէս մերկ:  
Սառած աչքեր:  
Մարդը քաղց ափին վրայ:  
Պատերուն քով:  
Քարերուն մէջ կիրքը սողաց:  
Կեանքը:  
Վիժեցաւ սաղմն արգանդին մէջ:  
Ամպ մը լացաւ լոյսին վրայ:  
Գիշեր:  
Սրունք մը մերկ: Համբոյրի խաղ:  
Եկա՞ւ միթէ:  
Յայգալոյսը կը յօրանջէր...

ՇՈՒՆՋ ԶԱՌԻՐ ԼՈՎ ԴՈՒՆ

Վրձինս քաթխած ցաւին մէջ հագույս՝  
Գոյներու անող հրաշառութեամբ  
Ի գուր փարձեցի ամբողջացրնել  
Կեանքը պատասխիս,  
Որուն անաւարտ գեղեցկութեան մէջ՝  
Հին յուշեր ու կիրք, ու սիրոյ տրոփ  
Զիրար կերտեցին:  
Ամէն ինչ եղա՛ւ,  
Շնչաւորութեամբ,  
Շունչ չառիր լոկ դուն:

Վրձինս հանգարտ  
Կը հանգչի հիմա  
Նայուածքիս պղտոր  
Յոգնութեան մէջ մութ:  
.....  
Աչքերուս այրող սպասումը թաց  
Սառեցաւ յանկարծ  
Միջոցին դատարկ ձորմութեան մէջ...

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ



## ՀԵՆՐԻ ՄԻԼԸՐ

Գերմանական ծագում ունեցող Հենրի Միլըը ծնած է Պրուրին, 1891ին, Լալըը գերմանկ էր, մայրը՝ մաքրակրոն պուրզ կին էր։ Միլըըները աղքատ էին և Հենրի մեծցաւ փողոցին մէջ, փողոցի միւս լակոտներուն հետ։ Առեւ մը աշխատեցաւ հորը հետ, եւ շատ կանուխէն վճոց զբաղէր բլաւ։ Բաւական զորեւ փոխէլէ ետք, հինգ տարի աշխատեցաւ հետադրական ընկերութեան մը մէջ։ 1922ին, կը զրէր իր առաջին գիրքը՝ «Կրօնում քննք», որ մնաց անտպ։ 1923ին, իր կեանքը ժամանակ մը կապէց Յիւն Սմիթի եւ այդ ժամանակաշրջանը նկարագրէց «Երեք վէպերու մէջ» («Անխաղ, «Փիլէֆոս», «Նեկֆոս»)։ 1930ին, հաստատուեցաւ Փարիզ, ուր մօտ տասը տարի ապրեցաւ ծայրայեղ Բոլշևակներէ մէջ։

1934ին, լոյս կը տեսնէր իր առաջին գիրքը («Tropique du cancer»), որ անմիջապէս արգելուեցաւ։ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ, Հեղինակը արգէն բառաստուներէր տարեկան էր։

1939ին, Հենրի Միլըը Թուշատտան աշտիւց եւ վերադարձաւ ամբողջովին վերանորոգուած։ Երկրորդ անգամ ամուսնացաւ 1945ին եւ ունեցաւ երկու զաւակներ։

Միացեալ Նահանգները մեայն 1961ին վերցուցին իր գիրքերուն հրատարակման արգելը եւ Հենրի Միլըը Ամերիկայի մէջ եւս, դառաւ այն լայնածաւալ ընդունելութեանը, որուն արգէն արժանացած էր Եւրոպայի մէջ։

digitised by

A.R.A.R.@

### Հէնրի Միլլեր:

Դեռ քանի որ տարի առաջ, ամերիկացի այս գանձակալը զրազէտին հետ մտերմութիւն հաստատելը բաւական թափուած էր պահանջէր: Սակայն իր անհատական կողմնակցութիւնը մըջ. այս էր ընդհանրապէս քննադատներու որոշ դասի մը բնորոշութիւնը Միլլերի հանդէպ: Ամերիկեան յափանդանքներուն, ամերիկեան զորութիւններուն և ամերիկեան կենցաղին դէմ պայքարի դրօշ պարզած այս ամերիկացին, ժամանակակիցը Հէմինգուեյի, Ֆիցցերալտի, Ֆոլքերի և Փրիլ Պաթի, Դժբախտ չհասկցուեցաւ, այլևս հայտնուեցաւ իր ստեղծագործական երկտարադր տարիներուն:

Եւ ժամանակի ընթացքին՝ զինք մեր-սողունը, իր ռիսերիմ թշնամիները կարծիք չփոխեցին: Բայց եկան նոր սերունդներ, գաղափարական արդի հասանքներու լայն քաջութիւնը նոր սերունդներ, որոնք կրնային հասկնալ զինք ու հասկցան:

Քարգառ մտայնութիւններու, հետեւողական կեցուածքներու, սնամէջ կարգաթափանքներու և գունամոփ արժէքներու դէմ ծառացող այս սերունդները զարմանքով հաստատեցին, որ Հէնրի Միլլեր կանխած էր նորարար շարժումը: Աւելի քան երեսուն տարի առաջ, ամերիկացի գրագէտը իրեն զլիսաւոր թեմա քննարկած էր ըմբոստութիւնը:

Ըմբոստութիւնը եւ ո՛չ թէ պոռնկագրութիւնը:

Ըմբոստութիւն՝ ընկերային կապանքներու դէմ: Ըմբոստութիւն՝ մարդկային ազատութիւնը կաշկանդող ամուլ պատշաճականութեան դէմ: Ըմբոստութիւն՝ դրամի, նիւթական արժէքներու և անհատական սեփականութեան բռնաւարտութեան դէմ: Եւ, վերջապէս, ըմբոստութիւն՝ այս բոլորը իր մէջ խտացնող ամերիկեան դրամատիքութեան դէմ: Գրական թեմա՝:

Սալոնի, գրասենեակի մարդ չեղաւ Հէնրի Միլլեր, լաւ տաքցուած սենեակի մը առանձնութեան մէջ աշխատող այն

գրագէտ-թէքնիկներուն նման, որոնք աշխարհէն կտրուած՝ կը գիտորդածեն թեմայի մը մասին, կ'անդամահատեն դայն, կը վերամիացնեն, կը զարգարեն, կը մաքրեն, կը գունաւորեն, կը խտացնեն, կ'ընդլայնեն... Ան ուղղակի ԱՊ-Բեյնթի իր թեմաները: Ո՛չ մէկ աններգաշնակութիւն գրագէտի գործին եւ կեանքին միջեւ: Ուրիշ խօսքով՝ Միլլերի թեմաները ի՛ր իսկ կեանքին յարուցած հարցերն են, եւ գործերն ալ գրեթէ միշտ ինքնակենսագրութիւններ:

Նոր սերունդները վերջապէս հասկըցան Հէնրի Միլլերը: Թշնամիներ չպակսեցան հարկաւ, բայց դո՛նէ հեռագէտէ աւելցան հետեւորդներն ու ընթերցողները:

Այսօր, համաշխարհային դէմք է ամերիկացի գրագէտը: Հետաքրքրական է նկատել ստիպան, որ իր յաջողութեան ազդակներէն մէկն ալ կը հանդիսանայ ամէն գնով, անպատճառ, ամէն նորամտութիւն ծափահարողներու մտաւարական սնունդով: Այնքան տառի գոտարար մը, նո՛յն ինքն Հէնրի Միլլերի համար, որուն հերոսները (եւ ինքը, զլիսաւոր հերոսը) շատ զգուշիկ կերպով կը հայհոյեն, կը հազան, կը թրջեն, կը միզեն, փորհարութեան ընթացքին տաքատ կ'ողտոտեն, կ'ուտեն, կը ծխեն, կը խմեն, կը փսխեն եւ կը գուգուտորին, մա՛նաւանդ կը գուգուտորին, այդպէս պա՛րզ, բնական, կարծես իրենց տան մէջ առանձին ըլլային...

Առանձին չեն, դժբախտաբար, որովհետեւ կայ գրգռուած ընթերցողը, որ վերէն կը նայի եւ կը գայթակղի: Շատ աւելի կը գայթակղէր երեսունական, քառասունական եւ մասամբ յիսունական թուականներուն, երբ վէպերու հերոսներուն խստիւ արգելուած էր բնախօսական գործունէութիւնը (աւելի ճիշդը՝ այդ գործունէութեան նկարագրութիւնը): Այսօր՝ ո՛րեւէ քսան տարեկան գրագէտ կամ գրագիրուհի, կրնայ — ի՛նչ կ'ըսեմ — պարտաւոր կը զգայ շարժանկարել իր հերոսներուն գործարանային եւ մա՛նա-

ւանդ սեռական բուռն թրթռացումները... Վարժուած ենք, ա'լ չենք պայթակղիւր:

Բայց Հէնրի Միլլըրի պարապային, զայթակղութիւնը ուսման պէս պայթեցաւ լոյս տեսնող ամէն վէպի հետ: Հերոսները ո'չ միայն զգուհիկ եւ անպատշաճ բաներով զը դրաղէին, այլեւ զը մերժէին ընդունուած բարոյական շափանիւններն ու արժէքները, ամերիկեան քաղաքակրթութեան նիւթական բարօրութիւնը, զամերիկեան երազը: Այդ արդէն անասնելի էր: Եւ սկսաւ խաշակրութիւնը, յանգելու համար դրաքննութեան, հրատարակութեան արդելքի եւ ինչ որ շատ աւելի ծանրակշիռ է՝ հեղինակը չէզոքացնող դաւադիր լուսութեան:

Պէտք է ըսել նաեւ, որ ընթերցող հասարակութիւնը իրեն կապելու համար ո'րեւէ դիմում չկատարեց Հէնրի Միլլըր, ընդհակառակն: Թէ' իր կեանքին եւ թէ իր գործերուն մէջ բացայայտ է քողքենի գաւազանը գործացնելու, խրտչեցնելու եւ կատաղեցնելու մասնաւոր եւ հետեւողական ճիշդ մը: Նոյնիսկ հակասութիւններու եւ տրամաբանական մեղանշումներու զնով:

Արդէն տրամաբանութիւնը շատ մեծ տեղ չունի Միլլըրի գործին մէջ: Ան գիտական միտք չէ — կ'ատէ դիտութիւնը — ո'չ ալ փիլիսոփայ: Իր մերժած ընկերային դրութիւնը փոխարինող տրամա-

բանական նոր դրութիւն մը չ'առաջարկեր անպայման: Կու տայ միայն զբազէտի իր կարծիքը, ամբողջովին զգացական նախադրեալներու եւ տպաւորութիւններու վրայ հիմնուած:

Այս խմաստով կարելի է հաստատել, որ իսկապէս կոյր են իր ատելութիւնները, իսկապէս խտրական, ամբողջական եւ կրքոտ են իր համակրութիւններն ու սէրերը, իսկապէս հակասութիւնները, չափի զգացումը, պաղ տրամաբանութիւնը շատ չեն զբաղեցնէր դիմք:

Եւ ճիշդ այս պատճառով ալ կարելի է գնահատել Հէնրի Միլլըրի գրականութիւնը, առանց երեւք պարտաւորւած ըլլալու ընդունիլ անոր ընկերային եւ բարոյական ընտրութիւնները:

Իր լուսագոյն վէպերէն՝ «Մարուսիի հսկան» կ'ոգեկոչէ յոյն բարեկամի մը՝ Փացիմպալիսի յիշատակը: Մեզի՝ հայերու համար հետաքրքրական է հետագայ հատուածը, ուր Միլլըր եւ Փացիմպալիս կ'այցնեն հայ գուշակ մը, Համալիարհային Երկրորդ պատերազմի նախօրեակին: Հայ գուշակը՝ Արամ Հորապետեան (Հայրապետեան) կը բնակի Աթէնքի գաղթականներէն մէկուն մէջ (Տուրդուրի):

Երկրորդ հատուածը խօսակցութիւն մըն է Միլլըրի եւ ամերիկացուտակ յոյնի մը միջեւ:

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՆԱՆ



## ՀԵՆՐԻ ՄԻՆԼԵՐ ԵՒ ՀԱՅ ԳՈՒԾԱԿԸ

Քաղաքացիական եկած էր ինձի առաջարկելու այցելութիւն մը տալ հայ գուշակի մը, որուն դիմած էին արդէն ինձ եւ իր բարեկամներէն ոմանք: Մեծ խանդավառութեամբ ընդունեցի առաջարկը, մա՛նաւանդ՝ որ կեանքիս մէջ երբեք չեմ չէի կոխած գուշակի մը բնակարանը:

Մեր գուշակը կը բնակէր Աքէնքի այն քաղին մէջ, ուր ազատան գտած էին գաղթական հայերը: Քաղաքին այդ շրջանը ինձի բախտովին անծանօթ էր: Լսած էի, քէ ազատու ու նկարէն թաղ մըն էր, քայց ըստածներէն ոչ մէկը գիտ պատրաստած էր այն տեսարանին, որ տարգուեցաւ աչքերուս: Այս քաղին ամէնէն հետաքրքրական երևույթը անոր միօրինակութիւնն էր: Քսան տարի շարունակ, այս խեղճ գաղթականները սպասեցին այն օրուան, երբ պիտի կարենային հաստատուիլ իրենց խոտաջուած նոր բնակարաններուն մէջ: Այդ նոր բնակարանները, զորոս պետութիւնը շինել տուած է եւ ուրեք կը սպասեն իրենց վարձակալներուն (կարծեմ առանց վարձի), իսկապէս որ տիպաւ շինութիւններ են: Այս տունները իսկապէս որ զարմանալի հակապատկերներն են ա՛յն խրճիթներուն, ուր գաղթականները իրենց կարեւոր ըրին՝ գոյատեւելու համար ամբողջ սերունդի մը ժամանակաշրջանին: Կուտակուած աղտերէն եւ աղտեղութիւններէն ամբողջ համայնք մը կը հայքայրէր իր բնակարանը: Անոնցմէ բնակարան շինած էր ան իր արջառին, իր ընտանի կենդանիներուն: Հոն կը բնակէին ճոյնպէս մուկերը, սփիւնները, մըլուկները եւ միֆրայներ: Քաղաքակրթութեան յառաջխաղացքին շնորհիւ, այդ պալաքտու եւ մարդկային արարածներով խնդուած մրջնաբոյները հե-

ուս եմ արտակարգ տեսարան մը ներկայացնել: Ուրժան աշխարհի մեծ քաղաքները կը դառնան վայելչագեղ ու վայելչածեւ, ուրժան աղիտակի կը դառնան ըմբռնատաքները եւ պատերազմները, ա՛յնքան կը բազմանան անարմատներու, անժառանգներու, անտուններու եւ չփառորներու բանակները, ա՛յն տարբերութեամբ, որ Աթէնքի խեղճ հայերուն պէս, անոնք բախտը չունին օգտագործելու աղտեղութիւններու դէպքեր՝ անոնց մէջ գտնելու համար իրենց հրդի՛ր ծածկող փայտի կամ թիթեղի կտոր մը: Կան, որ օտիպուած են ստուերներու տէս, անդադար քայլի, ուրիշներ, եթէ փորձեն վերադառնալ իրենց հայրենիքը՝ իրենց դէմ կը գտնեն զինուած պահակներ եւ փշաթելեր, եւ որոնք, բորտոններու պէս, ամէն տեղէ կը վտարուին եւ որոնցմէ մարդիկ կը հեռանան, ինչպէս պիտի հեռանային ժամտախտաւորներէ:

Արամ Հուրապետեանի քննարարանը կը գտնուէր լաթիրինթոսի սրտին եւ պէտք եղաւ մէկէ աւելի անգամներ հարցնել Քամբան, Քափառիկ հոս ու հոն, որպէսզի կարելի ըլլայ անոր տեղը գտնել:

Երբ վերջապէս նշմարեցինք փոքրիկ տախտակը, որ ցոյց կու տար անոր քննարարանը, անդրադարձանք, որ հասած էինք որոշուած ժամէն շատ առաջ: Մօտ երկու ժամ թափառեցանք փողոցներուն մէջ: Աղտեղութիւնը մեզ աւելի էր կը գարմացներ, քան եղերականօրէն մարդկային այն ճիւղերը, զորս ի գործ կը դնէին քննիչները՝ զարդարելու եւ յարգարելու համար իրենց ուղտերի խորիքները: Հակառակ անոր, որ այս թաղը ծնած էր ուղղակի աղտերու կոյտէն, անկիտ ունէր աւելի՛ նկարագրի եւ աւելի՛ շնորհ, քան որեւէ արդիական մեծ քաղաք: Անկիտ կ'ոգնէր գիրքեր, նկարներ, երազներ եւ ռոտայակներ: Այս ահաւոր աղքատութենէն, այս տառապանքէն կը ծնէր սուրբ ջերմութիւն մը: Նայն սենեակին մէջ կ'օվ մը, կամ ոչխար մը, մօր մը եւ գակի մը կողքին տեսնելու գարմանքը՝ անմիջապէս տեղի կու տար ակնածանքի: Միայն վիշտն ու տառապանքը մարդը կը մօտեցնեն մարդուն: Այն ատեն միայն կեանքը կը զարդարուի գեղեցկութեամբ: Երբ կը քալէի փողոցէ մը, որ տախտակ մը նետուած էր փոսի մը վրայ, պահ մը կ'անց իտի գրավաճառի մը ցուցափեղկին առջեւ: Կախարդուած էի, տեսնելով արկածախնդրական վեպերու գոյնգոյն կողմերը: Այժմ կը գարնէր մա՛նուանդ ժիւլ վեռնի «20,000 մղոն ծովերու տակ» անուն վեպին յունարէն թարգմանութեան կարմիր կողմը...

Գուշակին կիներ քացաւ դուռը: Անոր կեցուածքին մէջ կար այնքան վեհութիւն, այնքան պարզութիւն, որ շատ լաւ տպաւորուեցայ: Մեզ առաջնորդեց քաղաքի սենեակ մը, ուր ամուսինը նստած էր սեղանի մը առջեւ, զլուխը ձեռքերուն եւ թաղուած՝ հսկայ հատորի մը ընթերցանութեան մէջ: Մեզ տեսնելով՝ ոտքի ելաւ եւ ձեռնուեցաւ իւրաքանչիւրիս հետ: Իր կեցուածքին մէջ ոչ մէկ ձեւականութիւն, ոչ մէկ դերասանութիւն կար: Աւելի կը հմանէր տաղաճազործի մը, քան հագնեալի մը: Մեզի յայտնեց, որ ինք տէր էր ոչ մէկ արտասովոր կարողութեան, այլ՝ երկար տարիներ ուսումնասիրած էր *Գաղալան*, եւ աստղագիտութիւն սորված էր արաբներու միջոցով: Կը խօսէր արաբերէն, քրէներէն, յունարէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ չեխերէն, ու կ'աշխատէր իբր թարգման չեխալուսափեան հիւպատոսարանին մէջ: Ինձի հարցոյց ծննդեան քուակնը, ժամը եւ վայրը, անուսն ու մականունն, ինչպէս նաեւ հօրս եւ մօրս անունը եւ մականունը: Այս հարցումները ընելէ առաջ, քաջիմպալիսին յայտնեց, որ ես կը պատկանէի արամազեան տիպարին եւ այժմեղիւրի ճիւղին: Պրպոնց հատորներ, ըրաւ մանրակրկիտ հաշիւներ, յետոյ աչքերը ինձի ուղղելով՝ խօսեցաւ: Կարտա-

յայտուէր փրանսերէնով, քայց երբ քառերը կը դժուարանային, կը խօսէր յաւարէն եւ Քաջիմպալիս խօսածը կը թարգմանէր անգլերէնի: Կը գտնուէին տան հիւրասենեակին մէջ, ուր ծայր աստիճան մաքրութիւն կը տիրէր: Ինծի յայտնեց հետեւեալը.

— Կը գտնուիս կեանքիդ մէկ նոր ու կարեւոր հանգրուանի նախօրեակին, ցարդ ապրած ես անկայուն կեանք մը եւ շահած ես շատ մը թշնամիներ եւ շուրջիներուդ պատմաւած ես տաղաւել ու տառապանք: Երկու անձ կ'ապրի մէջդ, ա'յնքան, որ ո'չ չէ կրցած է հասկնալ ինք, նշոյնով ամէնէն մտերիմ քարեկամներդ: Բայց այս բոլորը շուտով վերջ կը գտնէ: Որոշ քուակակնէ մը ետք, պիտի գալես նոր ու ազատ ճամբու մը վրայ: Մեռնելէ առաջ՝ աշխարհին պիտի բերես մեծ ուրախութիւն մը եւ ինչ ամէնէն սխալիմ թշնամիդ անգամ պիտի խնամարհի ինչ առջեւդ եւ ներողութիւն պիտի խնդրէ ինքզինքէ: Պիտի արժանանաս մեծ պատիւներու եւ պիտի ստանաս մեծագոյն վարձատրութիւնները: Երեւ անգամ պիտի ճամբորդես դէպի Արեւելք եւ հոն պիտի հանդիպիս մարդու մը, որ ինք պիտի հասկնայ անկի, ինչ որ ասէ՛ր ուրիշ մարդ արարած: Այդ երբորդ ճամբորդութենէն պիտի չվերադառնաս, ոչ ալ պիտի մեռնիս, այլ պիտի անհետանաս լոյսին մէջ:

Այստեղ ընդմիջեցի իր խօսքերը եւ իրեն հարցուցի, թէ անմահութիւնը պիտի գար իմ գրեթէ անհրաժեշտ թէ արարեցնելու: Պատասխանեց, որ ըսածը պէտք է առնէի բառացի իմաստով, այսինքն՝ մահը պիտի չհանչնայի: Ու շարունակեց.

— Կը տեսնեմ նշաններ, գորս երբեք չէի սեւած: Այդ նշանները ցայլով տան, որ դուն աստուածային բան մը ունիս մէջդ, բայց նոյն ատեն շրջապատած ես այս աշխարհին: Ինծի համար մեծ պատիւ է ինչի պէս արտասովոր անձնատրութեան մը առջեւ գտնուիլ: Դուն մէկէ աւելի անգամներ փրկուած ես ստոյգ մահէ: Անտեսանելի հմայք մը կը պաշտպանէ կեանքդ: Եթէ գտնուիս ամէնէն վտանգաւոր կացութեան առջեւ, երբեք մի՛ յուսահատիր, միշտ պիտի փրկուիս: Կը նմանիս նաւու մը, որ ունի երկու դիւ. եթէ մէկը արուի՝ միւսը կը գործէ միշտ: Կը նմանիս քեւաւոր թռչունի մը, որ իր թռիչքը կ'առնէ ա'յն պահուն, երբ իր շուրջիները մահուան կը դատապարտուին: Ունեցած ես եւ ունիս մէկ թշնամի միայն եւ այդ թշնամին՝ դո՛ւն ինքն էս:

Ուրիշ ելաւ, մօտեցաւ ինծի. առաւ ձեռքն ու գայն տարաւ իր շրթներուն: Ինչ որ ըսաւ անցեալի մասին՝ կէտ առ կէտ ճիշդ էին: Կրցած էր երեւան հանել զազտեցիմներս: Ինձմէ խնդրեց, որ երբ Ամերիկա մեկնիմ, ներքաւ Տիբրոյիք եւ տեսնիմ հոն հաստատուած իր եղբայրը, որմէ կը սպասէր նիւթական օժանդակութիւն: Կար նաեւ յատկանշական բան մը. նախատեսած էր փառք եւ համբաւ, պատիւ եւ վարձատրութիւն, բայց զարմանքով յայտնեց, թէ *«Հարստութիւն չէր տեսներ»*: Այս խօսքը զիս խնդացուց լիահագագ: Դրամ երբեք չէի ունեցած, բայց ապրած էի բարեկեցիկ ու գրեթէ երջանիկ կեանք մը: Ինչո՞ւ պէտք պիտի ունենայի դրամի այսօր կամ վաղը: Ամէն անգամ, որ յուսահատուէի նեղ կացութեան մատնուած եմ. միշտ ալ գտած եմ բարեկամ մը: Ես կ'ապրիմ՝ երթադրելով, թէ ամէն կողմ բարեկամներ ունիմ: Եւ գիտեմ, թէ ժամանակի ընթացքին անոնց թիւը պիտի բարձրանայ: Եթէ պատահէր, որ դրամ ունենայի, պիտի դառնայի անհոգ, անփոյթ, պիտի հաւատայի ապականութեան մը, որ գոյութիւն չունի եւ շեշտը պիտի դնէի այնպիսի՝ արժեքներու վրայ, որոնք ունայնութիւն են ու պատրանք: Ես

այլևս վախ չունիմ ապագայի հանդեպ: Եկող ժամանակները պիտի ըլլան սուր և ոչ մէկ ատեն դրամը երաշխիք մը պիտի ըլլայ չարին և տառապանքին դէմ:

Պէտք է ըսել, որ այս տեսակցութիւնը խորունկ ազդեցութիւն գործեց վրաս: Ինքզինքն ծայր աստիճան քիւլեղացած կը զգայի: Քացի այն խորհրդաւոր քեղագրանկէն, որ ըրաւ անմահութեան մասին, ապագայիս մասին իր բրած քոյրը գուշակութիւնները զիս չէին զարմացներ: Ես շատ քան պահանջած եմ ուշխարհէն և միշտ ալ պատրաստ եղած եմ ամէն թան տալու: Փարիզը լքելէ առաջ, ռուսի ա'յն համագումը, որ պիտի կարենայի խորտակել ժամանակաշրջաններու այդ ախտաւոր շրջան, որուն իւրաքանչիւր օղակը ընդհանրապէս կը տնկէր Լօթը տարի: Փարիզէն հեռացած էի պատերազմի նախօրեակին, գիտնալով, որ այդ քաղաքին մէջ ապրելիք կեանքիս տեսչութիւնը մերջ գտած էր: Մէկ տարի արձակուրդ առնելու որոշումս եւ այդ ժամանակաշրջանին մէկ տող իսկ չգրելու առաջադրանքս, իբր գրաստանայր Յաւնատանը ընտրելու զազափարս, այս բոլորը կը դառնային նշանակալից: Փարիզ եղած վերջին տարիներուս, բարեկամներէս ոմանց իմացուցած էի, որ օր մը պիտի երաժարիմ տող մը իսկ գրելէ, կամսովին, ճիշդ ա'յն պահուն, երբ պիտի գտնուէի իմ կարողութիւններուս զագաթնակէտին: Փարիզ հրատարակած իմ վերջին գործս, որ ուսումնասիրութիւն մըն էր Պալգաֆի մասին, կ'աւարտէր այն գաղափարը, որ օկսած էր քիւրեղանայ մէջս, քէ՛ արուեստագէտին կեանքը, ամբողջ գոհաբերութիւնը արուեստի խորանին առջեւ մարդուն անձնապաշտութեան վերջին հանգրուանն էր: Բարեկամներէս ոմանք ինծի ըսին, որ երբեք պիտի չգաղթիմ գրելէ, որ պիտի չկտրենամ դագրիլ: Եւ սակայն բաւական երկար ատեն գրիչը ձեռքս չառի, երբ կը գտնուէի Յաւնատան և գիտեմ, որ կրնամ նոյն քանը ընել ապագային, ե'րբ որ ուզեմ, նոյն իսկ միշտ: Ես ստիպուած չեմ զգար ձեռնարկելու որեւէ գործունէութեան: Ընդհակառակն, մէջս կը զգամ անիլը ազատագրութեան մը, որուն վրայ կը բարդօրէի աշխարհին ծառայելու անդիմադրելի փափակ մը: Ինչպէ՞ս. ե'ս ալ դեռ չեմ գիտեր ինչպէ՞ս, քայց ինծի համար յստակ է, որ արուեստէն պիտի անցնիմ կեանքին, իմ ապրելակերպով փառելու համար ա'յն տիրակալութիւնը, որ ստացած եմ արուեստէն: Ըսի, որ ինքզինքն քիւրեղացած կը զգայի: Ճիշդ է նաեւ, որ կը զգայի վերացում մը: Բայց ամէն բանէ վեր՝ կը զգայի պատասխանատւութեան զգացում մը, որուն նմանը չէի ճանաչած երբեք: Պէտք էր աւելցնել իմ անձին հանդէպ զգացած պատասխանատւութիւնը: Առանց վայելելու այն վարձատրութիւնները, որոնց մասին խօսուած էր, արդէն ի յառաջագումն ըմբռնեմ եի գտնուէի, երեւակայութեան մէջ: Երկար տարիներ գրիչ շարժած եմ և քաջաբերած եմ այն գաղափարէն, քէ իմ հայրենակիցներս գոցէ զիս պիտի հասկնային մահէս նոք: Յաճախ, գրելու միջոցին, նայած եմ աւսիս վրայէն, գերեզմանէն անդին, աւելի դիւրագրած գալիք սերունդներու հակազդեցութեան, քան իմ հայրենակիցներուն ընդունելութեան: Կրնամ ըսել, որ կեանքիս մէկ մեծ մասը անցուցած եմ ապագային մէջ ապրելով: Ինչ կը վերաբերի կենսական ուժիս, խորքին մէջ ես արդէն մեռած մարդ մըն եմ: Ես կ'ապրիմ միայն կարգ մը մարդոց համար, որոնք ինծի պէս ժամանակ չունին սպասելու, որ աշխարհը հասնի իրենց: Ես ասիկա չեմ ըսեր հպարտութեան կամ ունայնատութեան համար, կ'ըսեմ խոնարհութեամբ և տխրութեամբ: Թեյիս տխրութիւն բառը այնքան ալ ճիշդ չըլլայ, որովհետեւ դժգոհ չեմ քալած ուղիէս և չեմ փափաքած,



որ դեպքերը տարբեր դառաւորում մը ունեցած ըլլալին: Հիմա գիտեմ, թէ ինչի՞ւ կը մտնէ աշխարհը եւ այս գիտնալով՝ կ'ընդունիմ զայն, ինչպէս որ է, լաւ կամ գէշ: Ստեղծագործելով ապրիլ՝ կը նշանակէ ապրիլ անշահախնդիր ձեւով, ապրիլ աւելի եւ աւելի՝ մխրճելով աշխարհի մէջ, նոյնանալ անոր, համակելի մինչեւ սրտին խորերը անոր ազդեցութեամբ: Արուեստը, ինչպէս կրօնքը, պատրաստութիւն մըն է, թափանցում՝ ապրելու իսկական ձեւին մէջ: Նպատակը ազատութիւնն է, ազատագրումը, այսինքն՝ աւելի մեծ պատասխանատւութեան մը ծառայելը: Շարունակել գրել, անգամ մը, որ անցած եմ կատարելագործութեան սահմանը, ինծի կը բռնի ռնայն եւ անօգուտ: Ռեւել մարզի մէջ արտայայտուելու տիրապետութիւնը պէտք է անխաւաքելի խորէն առաջնորդէ արտայայտութեան գերագոյն հանգրուանին, այսինքն՝ կենսի տիրապետութեան: Այս մարզին մէջ, մարդս, ստեղծագործութեան տարբերակն հետ դէմ յանդիման գտնուած միջոցին իսկ՝ առանձին է: Փայծառութիւն մըն է, որուն արդիւնքին մասին ոչ ոք կրնայ բան մը ըսել: Եթէ յաջողի՝ ամբողջ աշխարհը կը զգայ զայն այնպիսի ուժգնութեամբ, զոր կարելի չէր ի յառաջագունէ երեւակայել: Ինքզինքն գովելու փափաքը չունիմ, ո՛րչալ կը հետամտիմ պատրաստակամութիւն յայտնել, որ կրնամ առնել այդքան ծանր բայլ մը, բայց իմ միտքս դարձած է դէպի այդ նպատակակէտը:

Հայուն հետ ունեցած հանդիպումէս առաջ, արդէն համոզուած էի եւ կը մնամ համոզուած, որ թէ ինծի առաջարկէն պատիւ եւ վարձատրութիւն, հոս պիտի չըլլամ զանազան ընդունելու համար, եւ աշխարհի հեռաւոր մէկ շրջանին մէջ պիտի ապրիմ միեւակ եւ անծանօթ, հետապնդելով ա՛յն արկածախնդրութիւնը, որ ինծի համար սկսաւ, երբ կը ջանայի Բանին միջոցով. կատարելութեան հասնիլ: Գիտեմ, որ մեծագոյն վտանգները կը պատկանին զալիքին, եւ բուն մամբողջութիւնը հագիւ թէ սկսած է: Այս պահուն, երբ կը գրեմ այս տողերը, արդէն տարի մը անցած է այն վայրկեանէն ի վեր, երբ Արեւիքի մէջ պատահեցան պատմած դէպքերս: Ինծի կ'արտօմուի՝ արդեօք աւելցնել, թէ Ամերիկա ժամանելէս ի վեր, ինչ որ իրարու ետեւէ պատահեցաւ ինծի, իրագործուած փափաքներ, կատարելագործում, տեղի ունեցան գրեթէ մեքենական ճշգրտութեամբ: Խորքին մէջ, ասիկա ինծի սարսափ կը պատճառէ, որովհետեւ, եիմա կը բաւէ, որ փափաք մը յայտնեմ, որպէսզի խնդրանքս անմիջապէս իրականանայ, բան մը, որ երբեք չէր պատահած անցեալին: Կը գտնուիմ անձի մը փափակ կացութեան մէջ, որ պէտք է զգուշանայ փափաք յայտնելէ բանի մը համար, զոր իրականին մէջ չի փափաքիր: Եւ ասիկա պատճառ դարձաւ, որ սկսիմ օրելի եւ աւելի քիչ բաներ փափաքիլ: Միակ փափաքը, որ չի դադրիր անիլ մէջս, տալու փափաքն է: Զօրութեան եւ հարստութեան այս զգացումը, որ առաջ կու գայ այսպիսի կացութենէ մը, սարսափելի բան մըն է, որովհետեւ անոր տրամաբանութիւնը շատ ընդարձակ է: Երբ նայիմ շուրջս եւ նկատեմ, որ իմ նմաններուն ճնշիչ մեծամասնութիւնը կը ջանայ յուսահատօրէն կառչիլ իր ինչքերուն եւ անցնել զանազան, այն աստեւ կը սկսիմ հասկնալ, որ տալու իմաստութիւնը կարծաւածին չափ պարզ բան մը չէ: Տալ եւ ստանալ՝ խորքին մէջ միակ աւ նոյն բանն է եւ անոնք կախում ունին մեր ապրելակերպէն՝ բաց կամ գոց: Բաց ապրելով՝ մարդ կը դառնայ *մեթոիստ*, փոխանցող: Կեանքը կը զգայ իր լինելութեան մէջ, ինչպէս գետ մը, մարդը կ'ընթանայ կեանքին հոսանքին հետ, եւ կը մեռնի՝ վերապրելու համար ովկիանոսին մէջ:

Փարզմ. Ն. Զ.



ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ԱՄԵՐԻԿԱՅԵՆ  
ՎԵՐԱԴԱՐՁՈՂ  
ՅՈՅՆԻ ՄԸ ՀԵՏ,  
ՅՈՒՆԱԿԱՆ  
ԿՍՅԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՋ,  
1939ԻՆ

⊙

Մարդը քոյս նստաւ եւ սկսաւ դու-  
մել ամերիկեան սքանչելի երկաթուղի-  
ները: Գլուխս բաւական արդուկեց: Յոյն  
մըն էր, երկար ատեն Տիթրոյիթ ապ-  
րած, քնականարար:

— Ինչո՞ւ վերադարձայ, ես ալ չեմ  
գիտեր: Հոս ամէնքը աղքատ են: Հոս  
դրամ չինելու միջոց չկայ: Պատերազմը  
մօտ է, իշութիւն ըրի Ամերիկան ձգելով:  
Ի՞նչ կը խորհիք Յունաստանի մասին, կը  
սիրէ՞ք: Ե՞րբ եկաք: Կը կարծէ՞ք, թէ  
Ամերիկա պատերազմին մէջ կը մտնէ:

Որոշեցի իր հերաններէն կարելի ե-  
ղածին շափ շուտ պրծիլ:

— Փորձեցէք անդամ մը. արդեօք  
վայրաշարժը ե՞րբ պիտի գայ, — ըսի,  
հեռագրատունը ցոյց տալով:

— Անօգուտ է, — բաւ, — ոչ ոք  
գիտէ, թէ երբ պիտի գայ: Թերեւս վաղը  
առաւօտ:

Սկսաւ ինքնաշարժներու մասին խո-  
սիլ: Չորտը, օրինակի համար, ի՞նչ  
սքանչելի կառք է:

— Ինքնաշարժներէն բան չեմ հաս-  
կընար, — պատասխանեցի:

digitised by

— Ջարմանալի է. ամերիկացի չէ՞ք:

— Ինքնաշարժները չեմ սիրեր:

— Բայց վերջապէս, երբ տեղ մը եր-  
թալ ուղէք...

— Ո՛չ մէկ տեղ երթալու սիրտ ու-  
նիմ:

— Այս մէկը իրաւ որ զարմանալի է:  
Թերեւս երկաթուղին կը նախընտրէք,  
հէ՞:

— Էլը կը նախընտրեմ երկաթու-  
ղիէն: Քալել ալ կը սիրեմ:

— Եղբայրս ալ ձեզի պէս է: Եղբայրս  
կ'ըսէ. «Ինչո՞ւ ինքնաշարժ կ'ուզես ունե-  
նալ»: Կեանքին մէջ ինքնաշարժ չէ նըս-  
տած: Հոս կը մնայ, Յունաստան, լեռը:  
Շատ աղքատ է, բայց «հոգս չէ», կ'ը-  
սէ, «կը բաւէ, որ ուտելիք հաց մը ունե-  
նամ»:

— Խելացի կ'երեւի, — ըսի:

— Ո՛վ, եղբա՞յրս. ո՛չ, բան չի գի-  
տեր. կարգաւ-դրել չի գիտեր, անունը  
դրել իսկ չի գիտեր:

— Օ՛, սքանչելի՛, ուրեմն վստահօ-  
րէն երջանիկ մարդ մըն է:

— Ո՞վ, եղբա՞յրս. ո՛չ, շատ տխուր

A.R.A.R.®

է, կ'ընէ եւ երեք զաւակները կորսնցուց :  
կ'ուզէի, որ ինծի հետ Ամերիկա վերա-  
դառնար : Բայց զես Ամերիկա ի՞նչ գործ  
ունիմք, կ'ըսէ : Երկար բացատրեցի, որ  
հոն կրնար դրամ չիսել : Դրամ չիսելու  
փոփոք չունի : Կը բաւէ, որ ամէն օր-  
ւան ուտելիք հացը գտնէ : Հոս ոչ ոք  
փառասիրութիւն ունի : Ամերիկայի մէջ  
ամէն մարդ կ'ուզէ յաջողիլ : Օր մը ձեր  
աղան թերեւս Միացեալ Նահանգներուն  
նախագահը ըլլայ :

— Թերեւս, — ըսի, պարզապէս իրեն  
հաճելի ըլլալու համար :

— Ամերիկայի մէջ ամէն մարդ յա-  
ջողութեան բախտ մը ունի, այնպէս չէ՞ :

— Ընդէն :

— Թերեւս վերադառնալ եւ շատ  
դրամ չահիւմ, ի՞նչ կ'ըսէք :

— Ինչո՞ւ չ'փորձել :

— Ծիւղէ է, միշտ եղբօրս կ'ըսեմ,  
պէտք է աշխատիլ : Ամերիկայի մէջ պո-  
նիկի աղու պէս կ'աշխատես, բայց լաւ  
կը վճարեն : Հոս կ'աշխատես, կ'աշխա-  
տես, կ'աշխատես, վե՞րջը : Թերեւս հացի  
կտոր մը ձեռքդ անցնի : Ի՞նչ է այս,  
կ'ըսէք : Դուք ի՞նչ կ'ընէք յաջողու-  
նամար : Վստահ եմ, որ Նիւ Եորքի մէջ  
գէղեցիկ դրամ կը շահիք :

Մոնչիւնով մը պատասխանեցի.

— Ո՛չ, երբեք սեղիք մը չեմ շահած :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք : Գործ չկրցա՞ք  
գտնել Նիւ Եորքի մէջ :

— Եստ մը գործեր գտայ :

— Մէկ գործի մէջ երկար չէ՞ք մը-  
նար, այնպէս չէ՞ք :

— Այդպէս է :

— Թերեւս յարմար գործը չէ՞ք գը-  
տած : Պէտք է բաղմամբիւ գործեր ընել,  
մինչեւ որ լաւը գտնես : Պէտք է նաեւ  
մէկ կողմ քիչ մը դրամ գնել, այդպէս՝  
դէ՛լ օրերու համար...

— Ընդէն :

— Երբեմն կը հիւանդանաս եւ ամ-  
բող դրամդ վրայ կու տաս : Երբեմն բա-  
րեկամ մըն է, կու գայ դրամդ կը կորզէ :  
Բայց պայքարը պէտք չէ դադարեցնել,  
պէտք է վերսկսիլ :

— Ըսածիդ պէս :

— Հաւանաբար լաւ գործ մը ձեռք  
կը սպասէ Նիւ Եորքի մէջ :

— Ո՛չ, — ըսի :

— Առաջուան պէս չէ : 1928ին, ա-  
հադին գործ կար, հիմա ամէն մարդ աղ-  
քատ է : Տասը հազար տոլար կորսնցուցի  
պուրայի մէջ, ուրիշները շատ աւելի  
կորսնցուցին, բայց ես ինծի կ'ըսեմ. հոգ  
չէ, պէտք է վերսկսիլ : Յետոյ երկիր վե-  
րադարձայ, եղբայրս տեսայ : Հոս դրամ  
չկայ, միայն գլխու ցաւ կայ : Կը կար-  
ծէ՞ք, թէ Իտալիան Յունաստանը կը  
նեղէ :

— Ձեմ գիտեր :

— Ո՛վ պատերազմը կը շահի, Գեր-  
մանիա՞ն թէ Ֆրանսան :

— Ի՞նչ գիտնամ :

— Ես կը կարծեմ, որ Միացեալ Նա-  
հանգները պէտք է պատերազմի մտնեն :  
Միացեալ Նահանգները մէկ շարժումով  
կ'աւելնեն-կը մաքրեն այդ բողի զաւակե-  
րը, չէ՞ : Եթէ Միացեալ Նահանգները  
Գերմանիոյ դէմ ելլեն՝ ե՛ս ալ կը կոտորիմ :

— Կեցցե՛ն :

— Անշուշտ. ինչո՞ւ չէ : Ես կոտորի  
չեմ սիրեր, բայց Միացեալ Նահանգները  
լաւ են : Հոն ամէն մարդ՝ աղքատ կամ  
հարուստ՝ հաւատար է : Սոք հօրեղբայր-  
ըն ալ մէկին կը վտիւնայ : Մենք՝ ամե-  
րիկացիներս առաք, քսան միլիոն զինուոր  
կրնանք հանել, այդ բողի զաւակները  
շան պէս կը մեռցնենք, այնպէս չէ՞ :

— Ըսածիդ պէս :

— Ես ինծի կ'ըսեմ. եթէ Սոք հօ-  
րեղբայրը զենք տայ եւ զիս կոտորու  
ղրկէ, հաւատացէք իրեն համար կը կըռ-  
ւիմ : Յոյները չեն սիրեր խալաթները,  
յոյները կը սիրեն ամերիկացիները, ա-  
մէն մարդ ամերիկացիները կը սիրէ...

— Ես ալ ձեզ կը սիրեմ, — ըսի ու-  
քի ելլելով եւ ձեռքը սեղմեցի : — Բայց  
պէտք է, որ հիմա ձեզմէ բաժնուիմ եւ  
երթամ լաւ մը միզեմ :

— Ինձմէ մի՛ քաշուիք, — ըսաւ, —  
կը սպասեմ :

«Միշտ սպասէ», ըսի մտքէս : Ուղ-  
ղուցայ կայարանին խորը, եւ միշտ կող-  
մէն դուրս ելայ, անմընկն տակ :

★ ★ ★

Երբ որ գացունն աչքերս, որպէս աշման ծաղիկներ,  
Ու երբ հոգը ինձ ծածկէ, որպէս ծաղկի մի աշման,  
Ես անտրտունջ կը հանգչեմ այն հոգի տակ սրտակեր,  
Թէ միշտ բացուէ՛ք ինձ վրայ դուք, ծաղիկներ իմ գարնան:

Հոգս քեքեւ կը լինի՝ ձեր բուրմունքի պէս քեքեւ,  
Թէ իմ սրտից կեանք առնէ՛ք, դուք ծաղիկներ իմ գարնան,  
Ես ձեր բուրմունքը դառնամ՝ կ'ելնեմ հոգից՝ քնքշաքեւ  
Նորից աշխարհ կը մտնեմ, քողած վիշտ ու գերեզման...

Եւ անշոշափ հովի պէս ես նոր կեանքը կը մտնեմ՝  
Տեսնեմ՝ հումտերն յոյսերիս հասկաւորուած կը գտնե՞մ,  
Տեսնեմ՝ ի՞նչ է մնացել ինձնից յետոյ՝ ինձանից, —  
Մնացե՞լ է գէթ մի գետ իմ մայրակուրծք Սեւանից:

Անեղաշունչ այս դարից տեսնեմ ի՞նչ է մնացել,  
Մնացե՞լ են... քէ՞ ինձ պէս գերեզման են գնացել  
Եւ ծաղիկներն իր յայտնի, եւ տառասկներն իր քափուն,  
Աստուածացե՞լ է մարդը, քէ՞ սատանան է դեռ նոյն:

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

ՊՈԶԱՏ ՄՈՂԷԶՆԵՐ

Վարանդ տեղորոշութեամբ էր արհեստով, ի պահանջէն հարկին, ինքզինքն կըրնար եւ արուեստագէտ կոչել, բան մը, որ շատ յաճախ կ'ընէր եւ արդարօրէն։ Ներաճաշակ էր եւ կը վայելէր համակրանքը ամէնուն, մանաւանդ կիներուն, որոնք մանաւոր տղարութիւն մը ունին արուեստագէտներու հանդէպ։

Եւ, Վարանդ գիտէր առիթները օգտագործել։ Գիտէր իր յարաբերութիւնները համագործի, ներդաշնակել, երբեմն, նաեւ, անպարարի մը ճարտարութեամբ, երեք-չորս առիթներ միաժամանակ կ'օգտագործէր, առանց խաչմեւումի։

Վերջին տասը տարիներու իր կեանքի ընթացքին, մեծ փորձառութիւն ձեռք բերած էր, իր բոլոր արկածախնդրութիւնները յաջողութեամբ կը փակէր, առանց սայթաքումի։ Ոնեկ կնոջ չէր ըսած չկը սիրեմ քեզ, նոյնիսկ իր ամէնէն երջանիկ պահերուն։ Լաւ գիտէր, որ կիներուն մեծադոյն զէնքն էր այս փոքր նախադասութիւնը, անգամ մը, որ արտասանէր զայն, վերջացած մարդ էր։ Փախուստի ոչ մէկ յոյս՝ այդ անհամ կացութեանէն։

Այս զաղտնիքը երկար առեւ պահ-

պանած էր զինքն «փորձանքներէ»։ Եւ կը յուսար տակաւին երկար առեւ զերծ մընալ ամուսնութեան ծանր շղթաներէն։

Այս օրերուն, յարաբերութիւնները խղած էր վերջին բարեկամուհիին հետ, շատ ճարպիկ ձեւով մը, ինչպէս միշտ, առանց զայն վշտացնելու։ Ինքզինք շատ թեթեւ կը զգար եւ ուրախ։ Այսուհանդերձ, յոգնածութիւն մը կար վրան։

Յոգնածութիւնը՝ նոյն բանը կրկնողի մը, նոյն ձեւով սկսելու եւ վերջացնելու համար։ Նոյն խօսքերը, նոյն հարցումները կրկնել թութակի մը նման եւ ստանալ նոյն պատասխանները, նոյն կեղծ կնամեծարութիւնը, նոյն շոյանքները խօսքերու եւ ձեռքերու։ Երբեմն շատ աւելի հեռու կ'երթար, այդ տուականքը հրաւիրելով իր քնակարանը, ուր ներքին ման ագրիւրները չէին պակսեր։

Չանձրացած էր այս բոլորէն, տեսակ մը նողկանք կը զգար իր արարքներէն։ Բայց ակամայ կը շարունակէր։ Կեանքի այս ձեւը անհրաժեշտ ախտ մըն էր իրեն համար։

Բոլոր կիները նոյնն էին՝ իրենց մըտածելակերպով, խօսելու եւ շարժելու ձեւերով։ Այս նոյնութիւնը շեշտուած էր

առաւելարար, շնորհիւ արդուզարդին, որ նոյնն էր բոլորին համար: Նոյն վարձարդարումը, նոյն գիծերը դէմքին եւ աչքերուն վրայ, նոյն հագուստները:

Իսկ, ամէնէն հառաքակաց գիծը, որ ունէին՝ ամուսնութիւնն էր, իրենց գեղարգոյն նպատակը:

Վարանդ այս հզրակացութեան եկաւ, երբ արդէն հասած էր իր նոր որսին տան առջեւ:

\*\*\*

— Կը հաւատա՞ք այր եւ կնոջ պարզ քարեկամութեան:

— Ո՛հ:

«Ո՛հ»ը այնքան լակոնական էր եւ անսպասելի, որ Վարանդ փոքր ցնցում մը ունեցաւ եւ ինքնաշարժին արագութիւնը փոխեց: Այսքան պարզութիւն, բնականութիւն եւ համարձակութիւն չէր սպասեր այս գեղեցիկ աղջիկէն:

Իմա գեղեցիկ էր, նուրբ: Նուրբ էին եւ զուտպ նաեւ շարժումները, շնորհալի եւ կնոջական: Անոր արտաքինը որեւէ ձեւով չէր արդարացներ իր գոշը:

Կարճ լուծութիւն մը: Ապա՝

— Ո՛հ կ'երթանք այսպէս, — հարցուց իմա:

— Օ՛հ... որեւէ տեղ... տեսնենք:

Վարանդ չփոթած էր: Նախապէս կազմած յայտագրին ծայրը կորսնցուցած էր: Սովորականէն տարբեր կացութեան մը առջեւ կը գտնուէր: Մէկ կողմէ կը մտածէր ո՛ւր տանիլ զայն, միւս կողմէ՝ կը ջանար նիւթ հայթայթել խօսակցութեան: Գէշը հոն էր, որ միամիտանալ չէր կրնար երկուքին մասին մտածել:

Այս անձկութեան մէջ էր, երբ յղացաւ գեղեցիկ գաղափարը: Ուստի... այո՛, ուստի... դարձուց կոճակը: Դասական երաժշտութիւն մը կը փնտռէր ալիքներուն վրայ: Ձար բախտէն, միայն արդի երաժշտութիւն կը գտնէր: Երբ յանկարծ իմա ըսաւ.

— Այս շատ լաւ է. խնդրեմ, ձեռքէ՛ք:

Թեթեւ երաժշտութիւն էր, որուն իմա սկսաւ ձայնակցել եւ դառնալով տղուն՝

— Ձէ՛ք սիրեր, — հարցուց:

— Շատ, — պատասխանեց Վարանդ, — բայց կը վախնայի, որ ձեզի հաճելի պիտի չըլլար:

— Ինչո՞ւ, — զարմացաւ իմա, — ամէն պարագայի այս տեսակ պտոյտի մը ընթացքին հաճելի պիտի չըլլար լսել ուրիշ բան. այդպէս չէ՞ք կարծեր:

— Այո, իրաւունք ունիք... Ը՛հ... դուք կ'ուզէի՞ք մասնաւոր տեղ մը ընթերել:

— Կը ձգեմ ձեր ճաշակին:

Այս արդէն շատ էր: Վարանդ ինքզինք կորսնցուց: Տարիներու իր փորձառութիւնը բոլորովին անօգուտ էր իրեն այդ վայրկեանին: Ո՛ւր տանէր զայն... ո՛ւր... ո՛ւր: Երկար մտածելէ ետք, գտաւ: Ժաշարան մը, ուր խորոված պիտի ուտէին՝ գինիով:

Իմա համաձայն էր: Վարանդ խոր շունչ քաշեց:

Գինին ախորժաբէր էր: Թէեւ, խորովածը այնքան համեղ էր, որ ախորժաբէր օժանդակի մը պէտքը չէր զգացներ: Բայց Վարանդի վերջին եւ միակ յոյսն էր կարծիք ըմպելիով լեցուն այդ գաւաթը, զոր քանի մը անգամներ լեցուց եւ պարպեց մինչեւ ճաշի վերջաւորութեան:

— Ինչպէ՞ս կը գտնէք ճաշը:

— Հոյակապ. շատ համեղ, իսկապէս չէի յուսար: Բայց, ըստ երեւոյթի, դուք շատ չհաւնեցաք, ոչինչ կերաք մինչեւ հիմա: Կ'երեւի, կը նախընտրէք խմել:

Վարանդ որեւէ պատրուակ հնարեց՝ ծածկելու համար ախորժակին փախուստը:

Շուրջը գտնուող սեղաններէն հսկայ ազմուկ կը բարձրանար: Ածուխէ կրակէն ծախը աչք կը կուրացնէր: Բայց, մարդիկ շատ երջանիկ էին: Կը բաւէր,

որ իրենց տուններէն դուրս էին, հետեւ առօրեայ հողերէն: Տեսակ մը իրենց երկրորդ կեանքը կ'ապրէին անոնք՝ առաջինին դուպահեռ ա'յն անմիջական կեանքը, զոր իրենց ձեռքով կը շինէին եւ որ դրամով կը դնուէր եւ ոչ այն միւսը, զոր կ'ապրէին կրաւորական կերպով, ալիքներու առաջտանքին յանձնուած:

Ճաշարանի պատերուն վրայ կային արժանագրութիւններ, բայց... Աստուած իմ... ի՞նչ արժանագրութիւններ: Որեւէ կին առանց շիկնելու չէր կրնար կարգաւ դանոնք:

Գինիի աղդեցութեան տակ, Վարանդինքինք վերադառնալէ:

— Գիտէ՞ք, տարի մը կ'ընէ, որ որոշած եմ հրաւիրել ձեզ, առանց համարձակելու դործնական քայլ մը առնել: Այո անգամ ալ, թերեւս, եթէ դուք չօգնէիք ինծի...

— Զարմանալի է, դուք որ համարձակ մարդու համարաւ կը վայելէք:

— Ամէն ինչ յարաբերական է. ձեր պարագային, համարձակ չէի: Ինչ որ է, կարեւորը այն է, թէ՛ այսօր դուք հոս էք եւ միասին կը ճաշենք: Եւ ես չառ ուրախ եմ:

— Նմանապէս: Կրեա՞նք սիկարէթ մը վառել ձեր այս յաջողութիւնը աօնելու համար:

Իմ մայի ոճը միաժամանակ պարզ էր եւ քիչ մը հեզական, պաշտպանողական եւ թեթեւ յարձակողական:

Սիկարէթ... Ինչպէ՞ս մոռցած էր Վարանդ յայտագրին այդ մասը. կարեւոր այդ կէտը, որ կրնայ խօսակցութեան նիւթ մը ստեղծել: Թէ՛ քանի՞ սիկարէթ կը ծխէր օրական. թէ՛ կրնար ինչո՞ւ կը ծխեն, պէ՞տք է ծխեն թէ ոչ, թէ՛ տարբերութիւն մը կա՞յ այրերու եւ կրնորու շնչառական դործարաններուն միջեւ:

Իմ մա եւ Վարանդ հասան այն եղբակցութեան, որ տարբերութիւնը մեծ չէր, եւ այդ տեսակէտէն մեկնելով՝ մէկական սիկարէթ վառեցին:

Սիկարէթը, ջիղքը հանգարտեցնելու

իր յատկութեամբ եւ ցրուած մտքերը դասաւորելու իր կարողութեամբ՝ բարեբար աղղեցութիւն գործեց անոնց վրայ, առաւելաբար՝ Վարանդին:

— Կը ներկէ որ ձեզ պարզապէս իմ մա կոչեմ:

— Ոնդրեմ:

— Իմ մա, գիտեմ, որ դեռ շատ կանուխ է եւ անգաղտնապահութիւն իմ կողմէս, սակայն, կ'ուզեմ խոստովանիլ, որ բառին բուն առումով յափշտակուած եմ ձեզմով: Այսքան պարզութիւն, բնականութիւն եւ համարձակութիւն չէի սպասեր ձեզմէ: Դու, որ ծայրայեղօրէն լուրջ աղջկայ համբաւ ունիս:

— Զիս անշուք կը գտնէք հիմա:

— Ո՛չ, աղպէս բախ չեմ ուզեր: Վերջը քանի որ գլխով իմաստով: Ըսել կ'ուզէի՝ աւելի վերապահ:

— Դարձեալ վերադառնալ եմ:

— Այո, անշուշտ, այդ քանի չեմ ուզեր: Այսինքն, ինչ որ բախ կ'ուզէի, այսինքն... Կը ներե՞ս, որ քիչ մը դասաւորեմ մտքերս:

— Սիրով:

— Աւելի լաւ կ'ըլլայ, որ ելլենք այս տեղէն: Դուրսը թարմ օդ կայ:

Դուրս ելան:

\*\*\*

Ժամը գիշերուան երկուքն էր: Վարանդ արթուն էր տակաւին, եւ իր տան պատշգամբ նստած՝ կարծէք կ'աշխատէր սիկարէթի տուփը վերջացնել եւ այնպէս մտնել անկողին:

Իրականութեան մէջ սակայն, բնաւ չէր անդրադառնար, թէ ի՞նչ կ'ընէր: Կրնուած ամբողջութեամբ իմ մայով, կը փորձէր կէտ առ կէտ վերակադմել այդ գիշերուան իրենց պտոյտը: Ինքզինք չառ ծիծաղելի կը գտնէր եւ արդարացեցիչ պատճառներ կը փնտռէր իր այդ վարձուներին համար:

«Աս ի՞նչ տեսակ աղջիկ է, — կը մտածէր, — չի նմանիր մինչեւ հիմա իմ ճանչցած տիպարներէս ոեւէ մէկուն»:

Նրկար պատյոյ մը ետք, երբ դէպի տուն ընկերացած էր անոր, աղջիկը ձեռքը երկարելով, հմայիչ ժպիտով մը ըսած էր:

— Շնորհակալութիւն այս շատ հաճելի պտոյտին համար:

— Կրնա՞նք կրկին այս հաճելի պտոյտը, — հարցուցած էր Վարանդ:

— Ինչո՞ւ չէ. եթէ օր մը բոլորովին առանձին զգաք դուք ձեզ եւ ձանձրանաք... Գիշեր բարի:

Վարանդ վերջիւնց այս բոլորը եւ որոշեց «ինքզինք առանձին» չզգալ երբեք: Սակայն, երկար չկրցաւ պահել իր խոստումը:

Ուղեց իր նախկին կեանքը վերադրանքի. կլանուի իր դործով. վերադրանքի իր հին դրաղութները, իր բարեկամ-բարեկամութիւնները. բայց ի՞նչ ուր ալ ընէր, ո՛ւր ալ երթար, իր մաքէն չէր կրնար հեռացնել իմասն, անոր պատկերը, ձայնը, խօսքերը: Անոր անկեղծ եւ համարձակ կեցումները: Շատ կիս ըլլալով հանգերձ, անոր վարժունքը կը մատնէր զօրաւոր անհատականութիւն մը: Առանց բան մը զիջելու իր արժանապատուութիւնէն, զգալ կու տար, թէ իրեն համար հաճելի էր աղուն ներկայութիւնը:

✱

Ծանօթացած էր իմաստին՝ դասախօսութեան մը ընթացքին:

Վարանդ ուշացած էր այդ օրը: Դասախօսութիւնը սկսած էր: Պարապ աթոռ մը կար վերջին շարքին վրայ, ծայրը: Առանց աղմկելու, գրաւեց այդ տեղը: Կողքի աթոռին նստած էր օրինորդ մը, որ մեծ ուշադրութեամբ կը հետեւէր դասախօսին:

Վարանդ ցած ձայնով հարցուց անոր, թէ որքան ատեն է Վեր սկսած էր դասախօսութիւնը:

— Քառսրդ ժամ առաջ, մօտաւորապէս:

«Յառաջարկը կորսնցուցինք», մտածեց: Դասախօսը իր բուն նիւթը հար-

աժած էր: Կը խօսէր հայկական դատին մասին: Ներկայ հայերուն կը բացատրէր հայկական դատին էութիւնը, նման փաստարանին, որ յաճախորդին կը ներկայացնէ անոր դատը, իր՝ փաստարանին ակնոցով դիտուած:

Վարանդ բաւական ատեն հետեւեցաւ դասախօսութեան: Գողտրիկ, թեթեւ անուշահոտի մը բոյրը ստիպեց, որ յանկարծ յիշէ դրացուհին: Բայց չէր կրնար կտրուկ շարժումով մը անոր դռնաւ եւ դիտել դէմքը, հող չէ թէ կողմնակի: Իր տեսողութեան ծիրին մէջ կ'իյնային աղջկան կօշիկներուն ծայրէն մինչեւ նուրբ ծունկերը: Անկէ աւելի չէր կրնար յառաջանալ, որովհետեւ աչքերը կը ցաւէին, երբ փորձէր շարունակել քննութիւնը մինչեւ աղջկան դէմքը:

Վարանդ հատուկապէս քանի մը նախադասութիւններ միայն կրցաւ իւրացունել այդ դասախօսութեան: Այդ սրահին մէջ իր դոյրութեան անդրադարձաւ միայն այն ատեն, երբ որոտընդոտ ծափերու մէջ եւ շոնգաւից վերջարանով մը դասախօսը ծալեց հայկական դատի թղթածրարը:

Ներկաները կը փութային բեմ՝ չնորհաւորելու համար դայն: Շատ քիչէր կ'ուզողէին դէպի դուռ: Անոնց կարգին իր դրացուհին:

Դուրսը բարակ անձրեւ մը կը մաղւէր: Վարանդ կ'աշխատէր շատ չհեռաւ նալ անկէ: Կ'ուզէր կերպով մը խօսակցութեան առիթ մը գտնել: Կը յուսար հանդիպիլ աղջկան նախաւածքին: Ձէր յաջողեր:

Հասան մուտքի մեծ դրան առջեւ: Աղջիկը բացաւ հովանոցը եւ սկսաւ քալել դէպի ինքնաշարժներու կեդրոնը:

— Եկէ՛ք երկուստեք խելացի ըլլանք եւ օգնենք իրարու: Դուք ձեր հովանոցով կը պաշտպանէք զիս մինչեւ ինքնաշարժս, իսկ ես՝ ձեզ՝ մինչեւ տուն:

Աղջիկը, նախ՝ դարձացած, յետոյ՝ շուարած, հուսկ ապա՝ հաճոյացած այս անկող հիւրին անսեթեւեթութենէն, ընդունեց առաջարկը:



Անձրեւը սկսած էր զօրանալ: Տղուն ինքնաշարժը կը գտնուէր բաւական հեռու:

Ելան ճամբայ:

— Էմմա Սարգիսեան:

— Վարանդ Տատրեան: Ուրախ եմ ծանօթանալուս:

— Նմանապէս:



Մօտաւորապէս տարի մը անցած էր այն օրէն ի վեր:

Այո՛: Վարանդ տարի մը ամբողջ վարանած էր հրաւիրել զայն ընթրիքի: Իսկ, հիմա, ընթրիքէն ետք, աւելի եւս կը վարանէր: Ծարունակէ՛ր թէ ոչ:

Եթէ շարունակէր, Էմմա կրնար անտեղի յոյսեր ունենալ: Ինք ամուսնացողը չէր: Յետոյ, ինք իր պարկեշտութեան ալ վստահ չէր: Աչքը ուզէր անոր զգացումներուն հետ խաղալ եւ ապա լքել, ինչ որ պատահած էր իր միւս բարեկամուհիներուն պարագային:

Բայց նաեւ ունէր Էմման կրկին տեսնելու անպոռոզ փափաք մը:

Անով մը գտաւ հետամայնի թիւը այն հիւանդանոցին, ուր կ'աշխատէր ան: Վարանուով կազմէր թիւը եւ ուզեց Էմման: Հարցուցին, թէ ո՞վ է խօսողը: Վայրկեան մը շուարեցաւ: Ի՞նչ ըսէր: Հա՛յրը: Եղբայրը: Բայց չէր գիտեր, թէ Էմման Հայր կամ եղբայր ունէ՞ր: Բնաւ չէր մտածած հարցնել այդ մասին:

Ի վերջոյ, որոշեց պարզապէս իր տնունը տալ: Աւելի պարզ էր: Յետոյ, նոյն տնունը ունեցող անձեր շատ կը գտնուէին:

— Սպասեցէ՛ք:

Վարանդ սպասեց քանի մը վայրկեան եւ երեւակայութեան մէջ արգէն իսկ խօսակցութիւն մը ունեցաւ աղջկան հետ:

— Այո՛:

— Այո՛, Էմմա՞ն է:

— Այո, ո՞վ է խօսողը:

— Հոս Վարանդն է. յուսամ, որ չխնդարեցի:

— Հոգ չէ՛. ուշացայ, որովհետեւ հիւանդի մը մօտ էի: Ամէն պարագայի, հանելիք անակնկալ մըն էր այս...

— .....

— Ի՞նչ նորութիւն... մասնաւոր ըսելի՞ք մը ունէիք ինծի արդեօք: Գիտէ՞ք, անցեալ օրուան պտոյտէն շատ զոհ մընացի:

Այսքանը կը բաւէր քաջալերելու համար Վարանդը:

— Այս իրիկուն ազա՞տ էք:

— Կը ցաւիմ. այսօր դադած եմ. իսկ վաղը՝ գիշերապահ: Եթէ ձեզի յարմար է, Ձորեղաբթի իրիկուն կրնամ ազատ ըլլալ:

— Բիշ մը ուշ է. բայց ինչ կրնամ ընել, եթէ ոչ սպասել անհամբեր:

— Օ՛ր, այդ աստիճան: Լաւ, ուրեմն Ձորեղաբթի իրիկուն: Կը ներէք, որ պիտի գոցեմ, որովհետեւ ինծի սպասողներ կան: Ցանտութիւն:

— Ցանտութիւն, Էմմա:

Պէտք է ըսել, որ այս խօսակցութիւնը բաւական չոր էր, բայց հրապոյրը բացակայ չէր անկէ:

Օրը Երկուշաբթի էր. մինչեւ Ձորեղաբթի երկու գիշեր ունէր անցընելիք: Իսկ ինք, Վարանդ, այլեւս չէր կրնար համբերել: Կ'աճողաբեր տեսնել Էմման, դաշիլ անոր, բռնել ձեռքը եւ սեղմել, մինչեւ որ ցաւէն ճշար ան: Ո՛չ թէ անոր համար, որ կը սիրէր զայն, ո՛չ: Կ'ուզէր տիրել անոր, ոչ թէ տիրանալ: Առնական իր բնազդով կ'ուզէր փչրել բոլոր գոռաբութիւնները, որոնց կը հանդիպէր յանձին այդ աղջկան:

Թեթեւ անտարբերութիւնը, զոր անցոյց կու տար տղուն հանդէպ, այս վերջինը կը քաշէր իրեն հեռագիտէ աւելի: Ի՞նչ ըսել կ'ուզէր արդեօք: Ուշի՞նչ կը զգար իր հանդէպ, թէ անտեղի եւ ձեւական վերապահութիւն մըն էր զայն հեռու պահողը: Թէ ոչ, այս ալ միւսնեւրուն նման, ուրիշ բանի մասին կը մտածէր, այսինքն՝ ամուսնութեան: Է՛հ, ինչո՞ւ չէ. ինքն ալ այլեւս պէտք էր, որ մտածէր այդ մասին. տարիքը հասած էր

այլևս, միջոցները կը ներկին. եւ յետոյ, իմասն գէշ աղջիկ չէ: Թէեւ, տակաւին չի կրնար ըսել, որ դայն կը սիրէ... Թէեւ, ասկաւին լաւ չի ճանչնար դայն... Թէեւ... Թէեւ...:

Բայց տարօրինակ ուժ մը դայն կը քաշէր դէպի այդ աղջիկը:

Ձորեղարթի... Ձորեղարթի օր պէտք էր յատկացնել բոլոր այս հարցերը:

✱

Ձորեղարթի իրիկուն:

Ժամը ուշ:

Վարանդ իր ինքնաշարժով կը սպասէ իմաստի տան առջեւ:

Հինգ վայրկեան ետք, իմաստ կ'իջնէ շատ սիրուն արդուգարգով մը: Պճնասիրութիւն մը կար հոն: Փոքր ճիւղ մը աւելի սիրուն երեւեալ:

— Բարի երեկոյ, — ըսաւ իմաստ:

— Այս ի՞նչ գեղեցիկ արդուգարգ:

— Պէտք է ձեզի յարմարիլ, չէ՞:

— Վրաս կը խնայու:

— Ամենեւին:

Վարանդ անմիջապէս վառեց ինքնաշարժին լոյսը եւ գէժքը դարձուց իմաստին: Եւ երկուքը միասին սկսան բարձրաձայն եւ լիահագագ խնդալ:

— Մէկ բան գիտցէ՛ք, պարոն Վարանդ, որ ինչ որ կ'ըսեմ, կը մտածեմ... I mean... I mean it... Հայերէն չեմ կրընար ըսել:

Վարանդ դարձեալ լուսաւորեց ինքնաշարժը եւ գէժքը դարձնելով աղջկան, խոժոռ նայուածք մը նետեց անոր: Աղջիկը խնդաց:

— Ետտ լաւ, հասկցայ, Վարանդ, եւ ո՛չ պարոն Վարանդ:

— Խեղացի ես, իմաստ:

Լոյսը դարձեալ մարեց եւ իր աջ ձեռքով առաւ աղջկան ձախ ձեռքը, թէեւ, ինչպէս որ խոստացած էր ինքնիրեն, շատ զօրաւոր լոնդոնց դայն, բայց, աղջիկը վերի ակունքերով թեթեւօրէն վարի շրթունքը խաճաւ, բայց չքաշեց ձեռքը:

Քանի մը վայրկեան, այսպէս անձայն եւ անոնց շարժելու քաշիցին, Յետոյ գլուխները դարձուցին եւ գիտեցին զիրար երկար, աղան աւելի լուրջ եւ պարտուած՝ աղջիկը՝ հրեշտակային եւ յաղթական ժպտով մը:

Իմաստ լաւ դիտէր, որ սիրային արեւածայինը թեւան մը մէջ, կիներու տարած առաջին եւ միակ յաղթանակը եղակի այս վայրկեանն է միայն, որմէ ետք իրեն համար պիտի սկսէր գիշերաներու անվերջանալի շարանը:

Ա՛խ, սիրով պիտի ընէր այդ գիշերաները, միայն թէ՛ վստահ ըլլար, որ Վարանդ այն անձն էր, որուն ինք պէտք ունէր: Արդեօ՞ք յուսախաբ պիտի ըլլար այս եւս: Մինչեւ հիմա շատ հաճելի եւ հետաքրքրական կը գտնէր աղան եւ արդէն իսկ պատուանդանի մը վրայ դետեղած էր դայն: Տէ՛ր Աստուած, միայն թէ՛ չիջնէր այդ պատուանդանէն:

— Ուրա՛խ ես, հետո ըլլալուդ համար:

— Կարծեմ թէ այո, շատ, Վարանդ:

— Ուրեմն քիչ մը եւս մօտեցի՛ր ինձի եւ դուրսդ դի՛ր ուսիս:

Իմաստ անոնց ալիւսալի կատարեց առաջարկը:

Վարանդ, քիչ մնաց, որ յուզումէն լար, այսքան լրիւ երջանկութիւն դեռ ընաւ զգացած չէր: Շնչառութիւնը դարձած էր անկանոն:

— Իմաստ...

— Խնդրեմ, Վարանդ, մի՛ խօսիր:

— Կ'ուզե՞ս, որ այսպէս երթանք մինչեւ աշխարհի ծայրը:

— Աւելի՛ անդին:

Ժամերը կը սահէին: Փաղաքին շրջանը երկու անգամ ըրած էին, ինքնաշարժը վառելանիւթի պէտք ունէր:

Մօտակայ կայանին զօրաւոր լոյսերը արթնցուցին զիրենք: Մութին վարժուած աչքերը դժուարութեամբ բացուեցան եւ, Վարանդ եւ իմաստ ստիպուած եղան իջնել երկիր, պատասխանելու համար պաշտօնեային սիրալիր բարեւին:

Ինքնաշարժը հիմա դարձեալ ճամբուն վրայ է:

Իմ մաս սիկարէթ մը վառած է եւ ինքզինքն զտած :

— Ինչպէ՞ս ես, Իմ մաս :

— Ասկէ լաւ չեմ կրնար ըլլալ :

— Ես թեթեւ գլխու պտոյտ մը ունիմ : Ոչինչ : Քիչ-քիչ կ'անցնի : Իջնենք եւ սուրճ մը առնենք :

— Ինչպէ՞ս որ կ'ուզես :

Ճիշդ է, որ մաքուր եւ զով օդը կադուրեց Վարանդը, բայց տակաւին այն տպաւորութիւնը ունէր, որ ածպերու վրայ կը քալէր :

Սուրճը օգնեց երկուքին ալ :

— Իմ մաս, կեանքը գեղեցիկ է :

— Պիտի, երբեմն :

— Միշտ, եթէ ուզես :

— Ինչպէ՞ս կ'ըլլայ այդ :

— Օհ, Իմ մաս, եթէ դուն քեզ եւ զգացումներդ չչղթայես, կարենաս դուն քեզ առանձին զգալ ամբողջին մէջ եւ չազդուիլ նայուածքներու տարափին տակ... եւ եթէ անշուշտ կը սիրես մէկը...

— Շատ ճիշդ են ըսածներդ, բայց դժուար կ'երթարկի մեր ապրած չըջապատին մէջ : Այնպէս չէ :

— Իրաւունք ունիս : Բայց, պէտք է ճիշդ մը ընել : Իւրաքանչիւր երիտասարդի ջանքը այս ուղղութեամբ՝ աշուր, պիտի ստեղծէ վաղուան սերունդին համար զգացական եւ հոգեկան առողջ կեանքի մը կարելիութիւնը :

— Քիչ մը աւելի գործնական ըլլանք : Ուրիշ խօսքով՝ ազատ ոէ՞ր կը քարոզես : Այո՞ : Երբ նոր Ծանօթացանք, առաջին մտահոգութիւններէդ մէկը եղաւ հասկընալ, թէ արդեօք ուրիշի մը կապուած էի, եւ կամ, անցեալին, որեւէ արկածախնդրութիւն ունեցած : Ժխտական պատասխանիս վրայ, դէմքդ ճառագայթեց եւ ես արժանացայ երախտապարտ նայուածքիդ : Այնպէ՞ս է :

— Ինչե՞ր կ'ըսես : Նոյնիսկ եթէ դրական պատասխան մը տայիք ինծի, կը կարծեմ, որ զգացումներս պիտի փոխուէին քեզի հանդէպ : Ինծի համար անձն է կարեւորը, այդ անձին խորքը, մտածելակերպը, հոգին եւ ո՛չ անցեալը :

— Լաւ, որեմն, հիմա կրնամ ըսել, որ սիրած եմ մէկը քեզմէ առաջ :

— Ի՞նչ վնաս : Ինծի համար կարեւորը քու ներկայութիւնդ է հիմա՛, հո՛ս :

— Իսկ դո՞ւն : Ես կրնամ հարցնել քեզի, թէ դուն քանի՞ անգամ...

— Հա՛, հա՛... անշուշտ կրնաս : Ուրեմն, ես... նայինք... երկու... երեք...

— Ձորս, հինգ, վեց, — չարաւետեց ազլիկը :

— Գիտե՞ս, Իմ մաս, շոտենք, որ հիմա այրեր եւ կրներ հաւատար իրաւունքներ ունին :

— Այո՛, գիտեմ : Սա տարբերութեամբ միայն, որ դուն կրնաս ազատ կերպով յայտարարել մէկէ աւելի անգամներ որքան ըլլալ, վերադարձով գոյն տղայութեան, իսկ ես, չեմ կրնար մէկէ աւելի անգամներ սիրած ըլլալ յայտարարել : Առաւելագոյնը պէտք է ըլլայ մէկ անգամ : Այնպէս չէ :

— Ինչե՞ր կը խօսիս : Անշուշտ որ կրնաս : Ըսէ՛, քանի՞ անգամ :

Իմ մաս լիահագազ կը խնդար :

— Ըսէ՛, քանի՞ անգամ, — կրկնեց Վարանդ :

Աղջկան աչքերը արցունքոտած էին չափազանց ծիծաղէն : Եւ ան քանի կը տեսնէր տղուն հարցական եւ մտահոգ նայուածքը, աւելի կը խնդար :

— Ի վերջոյ, պիտի ըսեմ թէ ոչ :

— Ո՛ր, պիտի չըսեմ : Ձէ՞ որ իմ ներկայութիւնս էր միայն կարեւորը, հիմա՛, հո՛ս :

Տղան այլեւս չէր պատասխաներ :

Վշտացած էր : Սիկարէթ մը վառեց եւ մտքով բացակայ՝ աղջիկը կը գիտէր :

Իմ մաս տակաւին մէջընդմէջ խնդուքներ կ'ունենար, որոնք անարժապանգ կը մնային :

— Վերադառնա՞նք :

— Վերադառնա՞նք :

Վերադարձան լուռ : Ճամբու ընթացքին, իւրաքանչիւրը իր հոգիին խորը խօսակցութիւն մը կ'ունենար միւսին հետ :

Հասան Իմ մայրի տան առջեւ : Աղջիկը,

գիշեր բարիի փոխարէն՝ բարեկամական  
Համբոյր մը գրողմեց տղուն ճակտին եւ  
Հեռացաւ։

\*\*\*

Անցուն օրեր, ամիսներ, տարի մը։  
Իմ մայր եւ Վարանդի բարեկամու-  
թիւնը իր լիութեան հասած էր երկար  
ատենէ ի վեր։ Եւ այս կատարուած էր  
առանց բախումի, առանց դժուարու-  
թեան, կարծես իրերու բնական ընթաց-  
քին մէջ ըլլար այս երեւոյթը։

Իմ մայր եւ Վարանդի նկարագիրնե-  
րը այնպէս բաւ անցած էին իրարու, այն-  
պէս ազուցուած, որ կազմած էին մէկ  
կատարեալ ամբողջութիւն։ Իմ մայր շատ  
լու կը հասկնար տղուն տրամադրու-  
թիւնները, իրեն թէ ծածուկ՝ մտքերը,  
կը կռահէր անոր փափաքները։ Այն առ-  
տինան, որ տղան, օր մը, ըսաւ իրեն.

— Իմ մայր, դուն շատ կատարեալ էակ  
ես ինծի համար։

Այս կատարեալ իրարահասկացողու-  
թիւնը ստեղծեց տեսակ մը միօրինակու-  
թիւն, հանդարտութիւն, խաղաղութիւն,  
որոնց վարժ չէր Վարանդ։ Օրեր շարու-  
նակ չէր հեռաձայնէր աղջկան եւ երբ, ի  
վերջոյ, կը անսնէր զայն, աղջիկը դիմե-  
կընդունէր նոյն հանդարտութեամբ,  
նոյն կէս-անուշ, կէս-լեզի ժպիտով, լե-  
զի՝ որ շուտով կը փարատէր առաջին իսկ  
վայրկեաններուն։

Կ'անցնէին շատ երջանիկ ժամեր։  
Վարանդ կը խոստովանէր ինքն իրեն եւ  
նոյնիսկ աղջկան, որ անոր ներկայութիւ-  
նը իր կեանքին մէջ անհրաժեշտութիւն  
էր այլեւս։

Բայց եւ այնպէս, կը խոստովանէր  
նաեւ ինքն իրեն, որ բան մը կը պակսէր  
հոն։ Կարծես Վարանդ կը սկսէր քիչ առ  
քիչ հասկնալ, թէ իմ մայր շատ խելացի  
էր, վերապահ, շատ հպարտ։

Բայց նաեւ՝ շատ չկինք։

Վարանդ ինքզինք նուստացած կը  
զգար, ամէն անգամ, որ աղջկան ներկա-  
յութիւնը փնտրէր։ Ինք, որ վարժուած  
էր միշտ կիններէն փնտրուելու, երբեմն

անախորժութիւն կը զգար իր այս վի-  
ճակէն։

Պէտք էր բան մը ընել։ Վերջ մը դնել  
այս կացութեան։

Որոշեց Կիրակի օրուան պտոյտին  
բացառութիւն խօսիլ աղջկան հետ այս  
մասին։

Օղբ շատ պայծառ չէր, երբ գիւղ ե-  
լան ճաշելու։

Համեստ որճարան մը։ Նստեցան սե-  
ղանի մը առջեւ, դէմ-դիմաց եւ սկսան  
խօսակցիլ։

Իմ մայր մտքով ուրախ էր։ Այսօր ի-  
րենց հանդիպման առաջին տարեդարձն  
էր։ Այս առթիւ, պայուսակին մէջ ունէր  
փոքր նուէր մը Վարանդին, որ, ըստ ե-  
րեւոյթին, անտեղեակ էր ամէն բանէ։

Այս մտածումներուն մէջ էր, երբ  
յանկարծ նետի պէս բան մը անցաւ ոտ-  
քերուն տակէն եւ իմ մայր չկրցաւ սարսա-  
փի ճիշդ մը զոպել։ Այս շարժումը պատ-  
ճառ դարձաւ, որ դուռաթ մը ինչոյ եւ  
փշրուի։ Անակնկալ ցնցումը, վախը եւ  
յուզումը վայրկեան մը հեռացուցին դի-  
րենք իրականութենէն։ Երբ վերադար-  
ձան անոր, նոր անդրադարձան, որ սրբ-  
նարանի կատուն էր պատճառը այս ի-  
րարանցումին, որ իր որսը չփախցնելու  
մտահոգութեամբ, քաղաքավարութեան  
ամէնէն նախնական օրէնքներն անդամ  
զանց ըրած էր։

Որսը մոզէզ մըն էր։ Մոխրադոյն,  
միջակ չափով մոզէզ մը, որ կարելի է-  
ղածին չափ արագ կ'ուղէր խուսափիլ  
կատունի ճանկերէն։ Քանի մը վայրկեան  
ետք, մէկ կատուն եղաւ երկու, ապա՝  
երեք։ Կատարեալ մրցում մը տեղի ունե-  
ցաւ։ Ի վերջոյ, կատուներէն երկուքը  
քաշուեցան եւ իւրաքանչիւրը դիմե-  
րունած՝ հետեւեցան այս քիչ մը տար-  
բիւնակ մրցալիքին։ Երբորդ կատուն վրձ-  
նականօրէն կը հետապնդէր խեղճ մոխ-  
րադոյն կենդանին եւ, վերջապէս, սե-  
ղաններէն մէկուն տակ յաջողեցաւ ձեռք  
դնել անոր վրայ։ Երկվայրկեան մը եր-  
կուքն ալ անշարժացան։ Մոզէզը պոչէն  
փոքրիկ մաս մը կ'որոնցուցած էր։

Հետաքրքիր հանդիսատեսները այս

անսովոր ցոյցին՝ շահակցան բնաւ, թէ ինչպէս մողէղը կը ցաւ փախչիլ կատուին ճանկերէն եւ հեւասպառ հալածանքը վերսկսաւ։ Մէկէ աւելի անգամներ կատուն յաջողեցաւ բռնել իր որսը եւ ամէն անգամ մողէղը մաս մը եւս կորսնցուց իր պուէն։ Ի վերջոյ, ուժասպառ, խեղճ կենդանին յանձնուեցաւ։ Երեւոթապէս անշարժացած էր եւ ընդունիլն՝ պուշատ։

Կատուն թաթը քաշեց, բայց չհեռացաւ, մինչեւ որ մողէղին անշնչացումը շատուզեց, ապա՝ իր առաքելութիւնը լրիւ եւ անսայթաք կատարողի մը նման, իր ծոյլ եւ հանգաբառ քայլերով դնաց, զբաւեց իր սովորական տեղը որճաբանին մէջ, նոր ուժ ամբարեւոյ՝ հաւանական յաջողութիւն որսին համար։

Միւս երկու կատունները տնէին զըժարահաճ հանդիսատեսներու երեւոթ։ Մերթ յորանջելով, մերթ իրենց պիտեւորը ըզուրուտելով, կը դիտէին որճաբանին յանձնորդները, կարծես մեկնաբանելու համար այս վերջիններուն զգացումները։

Իմ մա եւ վարանդ ճաշեցին։ Այս անգամ ճաշը անցաւ շատ լուռ։ Տխուր բլլալու աստիճան։ Անոնց որոճաղբութիւնը դորշ էր՝ երկնքին պէս։

— Սուրճ մը առնե՞նք։

— Առնենք։

Շատ յուսախաբ եղած էր մանաւանդ իմ ման։ Ինք ինչե՞ր կը սպասէր յիշատակելի այս օրէն։ Ի՞նչ սիրով եւ դուրդուրանքով դնած էր այդ նուէրը, որ կը կարծէր հաճելի անակնկալ մը պիտի ըլլար վարանդին համար։

Մինչ վարանդ մութ եւ պղտոր էր՝ մատախապառ օրուան մը պէս։ Իմ մա այդ մատախուղը կը նշմարէր երկար առնակ ի վեր, որ կու գար հեռուէն, բայց հիմա, ան արդէն շատ մօտ էր, իրենց մօտ, զիւրեք շրջապատած էր։ Եւ, երկու երկտասարդները դիտար հազիւ թէ կը նշմարէին այդ մուշկին մէջ։

Վարանդ չէր կրնար ըսել, ինչ որ որոշած էր բռնել։

Բայց իմ մա կը կռահէր ինչ որ կ'անցնէր—կը դառնար տղուն մէջ։

Սուրճը խմեցին։ Կը պատրաստուէին սոքի ելլել, երբ իմ մա պայուսակէն հանեց փոքր նուէրը։ Ծաղկաւոր թուղթով ծրար մըն էր, սրուն վրայ կար փոքր, շատ սիրուն քարթ մը։

Իմ մա զայն երկարեց տղուն։

Վարանդ զարմացած առաւ ծրարը։ Բացաւ քարթը։ Կարդաց. «Մեր հանդիպման առաջին տարեդարձին առթիւ»։ Վարանդ թեթեւօրէն կարմրեցաւ. նախ, ամբողջաւ, որովհետեւ ինք մոռցած էր այս տարեդարձը. յետոյ, նեղութիւն զգաց, ինք, որ կ'ուզէր ձեւով մը վերջ գնել այս յարաբերութեան։ Թէեւ, անխոստովանելի, բայց պզտիկ ուրախութիւն մը եւս զգաց։

— Հա՛պա անունդ. չես ստորագրած։

Իմ մա առաւ քարթը, հանեց գրիչը պայուսակէն եւ կը պատրաստուէր իմ մային գէշն գրելու, երբ յանկարծ կեցաւ մտածկոտ։ Երկվայրկեան մը վերջ կը ստորագրէր։

«Պաշտ մողէղ մը»։

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

### Մ Խ Ա Խ Ո Տ

Ծխախոտի թուղթն եմ այրուող  
Որ գալիս եմ քո շրթերին.  
Թափուն ու լուռ համբոյր քաղում,  
Ու իմ հագունն հանգիստ տալիս:

Կրակիդ մէջ ե՛ս եմ վառում,  
Ու ծուխիդ մէջ փարում դէմքիդ.  
Շայում եմ քո աչքերը հեզ,  
Ու խնդալքին բերում դէմքիդ:

Ծուխի մէջը քուլա-քուլա,  
Հագիս ժպտում է, քարճաւանում.  
Վերելից էլ մայում դէմքիդ՝  
Սիրոյ անյայտ խաղ է տալիս:

Հար կրակից մոխիր դառնում,  
Անճայն ու լուռ թափում ձեռքից.  
Ու փաթուկով քո ստեփին,  
Պաշտամունքից՝ ծնկի գալիս:

Մ Ո Ւ Թ-Ա Ր Փ Ի

### 3. ԶՈՐԵՑԻ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Խեցնք» Հայը հիմ թիւզանդական եւ հայկական ժամանակնու վրայ

ԺԱ.

### ՀԵՌԱՒՈՐ ԱՂԶԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՍՑԷԻՆ

Շիւշի, Պալլէլլէ...

Պոլսական վերջին կիրակիս յատկացուցի գերեզմանաշինարարներն:

Այդ վայրերուն մէջ ալ Հայոց Պատմութիւն կայ. անմոռանալի, սրբատաղրաւ յիշատակներ կան Հայ ըրհանկիրներու, ձկնորսներու, բեռնակիրներու. այնքան յանդուգն ընդդիմութիւններէն, որոնք տեղի ունեցան Հին Կիրակի մը, ընդդէմ հայտնական զինուորներու:

Օսմանեան լրիւ բանակ մը իր բոլոր մարտիկները թող ուղղէ՛ իրենց կուրծքին. վախճողը ո՛վ. Հայ քաջամարտիկն, Հայ համալին աւ պալլէլլէն պատրաստ են մեռնելու իրենց մեռնիներուն անմեռ արժանապատուութեանը սիրոյն...

Թրքացած անդլուհի Մէրի Գէլլամ իրաւունք չունի Հայոց ազգային ուրեւէ գերեզմանատան մէջ թաղուելու. սրբապղծութիւն է:

Նրեք օրէ ի վեր դադարը դուրսը կը մնայ, մահատանի ցանկապատին տակ...

Պոլսոյ անդլիական եւ Ֆրանսական դեսպանները ճնշում բանեցուցած են սուլթան Համիտին վրայ. Համիտն ալ, բարկութիւնը խստօրէն կարմրեցուցած, վաշա ու բանակ զրկած է ըմբոստութիւնը արեան մէջ խեղդելու համար...

Ըմբոստները չեն վախճար սակայն, իրենք ալ կը մնան գերեզմանատան տոջեւ. կ'արհամարհեն կեանքը եւ կ'որոշեն Մէրի Հանրմի դադարին յամրաբայլ մտաքը արգիլելէ չզարգիլ մինչեւ մահ...

digitised by

A.R.A.R.@

Հրամանատար փառանքալուստ «հաղորդ» Հրահանգը տուած է արդէն ու քանի մը երկվայրկեանէն, եթէ կեանքը դաւաճողները չհնազանդին, մարտիմները անոնց ուղղած Համախառն թանկին պիտի հրամայէ՝ «արեւել»...

Անթաքիս մը, երկու, կամ երեք եւ արդէն մահաստանին դուռնի կողմնալ մեղեդաններ կրնար վերածուիլ...

Առտուած նաեւ այդ օրերուն կոնակ դարձուցած էր մեր ազգին:

Ս. Սարգիսի պէս հասնողը հայոց քաջ պատրիարք Սարգիս արքեպիսկոպոսը կ'ըլլայ միայն. իր հօտին իրեն դերագոյն վաճան, կը կանգնի ան հրամանատարին եւ պրկուած ցուցամատներու արդէն իսկ ննթակայ անհամար փլթակներու դիմաց ու կը գոչէ.

— Ժողովուրդս մի՛ ապանեմք, փաշա՛, սուլթանէն ոտացած պատրիարքական քուրա չբարա չբանդը կուրծքիս, կը հրամայեմ, որ հեռանա քանակին հետ...

— Բաքիլ էփենդի, ինծի հրամայելը շատ վեր է իրաւասութենէդ. առաջին սպանուողը դուն կ'ըլլաս, եթէ մնաս կրակին դիմաց...

— Լաւ. քանի որ սուլթանին քուրան անկարող է պաշտպանելու դիւ եւ իմ ժողովուրդս, ուրեմն պէտք չունիմ անոր. կը վերադարձնեմ զայն... տա՛ր իրեն...

Աւ, յուսիկեան խիղախութեամբ՝ յաջորդ օր պատրիարքարանի իր գրասենեակին մէջ, ահարկելի խափիւներու կողմէ նախ մօրուքը փնտռել տալու եւ ապա անխնայ հարուածներու տակ հողին աւանդելու գնով, Սարգիս պատրիարք, սքեմ պատուող բուն շարժումով մը կը փրցնէ քուրան իր կուրծքէն ու կը նետէ հրամանատարի միտ սմբակներուն առջեւ.

— Ա՛ւ, փաշա՛...

Օրտուպաշին կ'իջնէ ձիէն, կը վերցնէ քուրան եւ իր քանակով կը հեռանայ այս տեղերէն...

Ուրեմն... դերեզմանատան մօտենալը վստահաւոր չէ այլեւս...

Յանկապառէն դուրս, երեք մեթր անդին թաղուած օտար Մէրի Քելամին մեզարը տեսնելու փափաքին լուքն իսկ սրտէս չ'անցնիր. ինծի համար կարեւորը իրենց դործերով հողի եւ միտք լեցնող մեր հարազատներն էին, հարազատներուն նուիրական շիրիմները...

Պալքը, Շիշի...

Հոն են Մեծարեւելը, Զարիֆեանը, Մկրտիչ Պէլիկթաշեանը, Եղիա Տէմիրճիպաշեանը...

Հոն է մանուանդ Իսկիւտարի սոխակ Դուրեանը, զոր սիրելը մանուկ օրերէս սորված էի՝ մեր դուրեանապէս ուսուցիչէն:

— Անմահութեանը մէջ իմացար, Մեծարեւել, ըսէ՛, ի՞նչ է անունը մտար ու կամաչէ ցանկապատին շուրջն մտած վայրի ծաղիկին...

— Հիմա եւ ալ չիմտի մօտ կ'ունկնդրեմ երգը՝ տերեւ ու ճառագայթ կտցողներուն, մինչ հոգիս անկապին, հէ՛ք Մատթէոս, քեզի՛. համար ազօքել կ'ուզէ ցած...

— Այո, Պէլիկթաշեան, ընդ աստեղօք ոչինչ կայ այնքան սիրուն, քան գանձակալի եղբայր անուն... մերկան գատուեցանք, սակայն օր մը յիշատակդ մեր սրտերը պիտի զօղէ իրարու...



— Հանդի՞րստ ես, շատ տառապած Տէմիրճիպաշեան... գոնէ՛ հիմա չեալսեր մայրդ, որ կ'անիծէր քեզ այսպէս.

Կ'ըսես «քանաստեղծ եղայ»,  
Անօթի պիտի մեռնիս, եզիա՛... .

Ի վերջոյ, Շիշլիի գերեզմանապահին հետ, ուղղուեցայ դէպի վաղամեռիկ սոխակին շիրիմը, զոր շտեմած արդէն կը ճանչնայի իր գերեզման վերջին էջի նկարէն:

Կանգնած տապանաքար մը, որուն վերի կողմը՝

Պ Ե Տ Ր Ո Ս Դ Ո Ի Ր Ե Ա Ն

Ք Ե Ր Թ Ո Ղ

Եւ ապա՝

Դաժբանագրական բանաստեղծութիւնը, իր կրտսեր եղբոր՝ Եղիշէ պատրիարքին ստորագրութեամբ.

«Աստ հանգչի մարմին Պետրոսի Դուրեան,  
Որ քսանամեայ էջի գերեզման»...

Վերջալոյսը արդէն սկսած էր երկարել շուքերը ծառերուն եւ շիրմաքարերուն...

Խորհրդադեղ հանդարտութեան անձայն երաժշտութիւն մը կը մաղուէր մահաստանին վրայ...

Պահը քաղցրօրէն թախծոտ էր ու տպաւորիչ նոյն ատեն...

Բոլորովին վերաջայ, բանաստեղծին վշտերուն ահազնութիւնը զգացի ներաշնչանչիս մէջ, երբ Դուրեանի հտարնտիք ֆերթուածները գոց սորված գերեզմանապահը սկսաւ սրտոտ-սրտոտ արտասանել.

— «Շատերը գիտ մերժեցին. «Քնար մ'աւնի սասկ» ըսին.  
Միմ՝ «Գոգոգոջ է, ցայն չունի», միւսն ալ ըսաւ «կը մեռնի»...  
Ոչ ոք ըսաւ՝ «Հէ՛ք տղայ, արդեօք ինչո՞ւ կը միտայ,  
Թերեւս ըլլայ գեղանի, Բէ՛ք սիրեմ չը մեռնի»...

— «Ինձի կ'ըսեն «միշտ տխուր ես»...  
Ինչպէ՛ս չըլլամ, մէկիկ-մէկիկ  
Թօթափեցան գլխուս աստղիկք...  
Արշալոյս մը շանցա՛ւ սրտէս»...

Ա՛խ, արտճանուչ Պետիկ...

Քեզի ժամանակակից եղած ըլլայի, բոլոր տխրութիւններդ ինձի՛ բաժին իշխային, միայն թէ՛ դուն երջանիկ ըլլայիր, չքօթափէ՛րն գլխուդ աստղիկք, սրտէդ հաղա՛ր արշալոյս անցնէր...

Դերեզմանապահը կը շարունակէր արտասանել, բայց ես այլեւս չէի լսեր իր ձայնը...

Սիրտս կու լար իր սրտին համար, հողիս կը զայրանար դամբանի մըս-բով գրեւած իր ճակատագրին դաժանութեանը դիմաց...

Լացի եւ զայրոյթի այս անօրինակ դրութեան մէջ, ի վերջոյ չգիտցայ ինչպէ՛ս՝ կիներուն ուղղուած խիստ հայհոյանք մը յանկարծ «փրթաւ ինկաւ» բերնէս, Դուրեանը մերժած, Դուրեանը տառապեցուցած այդ հեռաւոր աղ-լըկան յիշատակին...

digitised by

A.R.A.R.@

ԺԲ.

## «INGILIZLER VURDULAR»...

Յաջորդ օր, պատահաբար, «Հիւրերիէք» կոչուող բլուրին մօտերը կը կր դռնուէի. առ ի հետաքրքրութիւն, երբ վեր բարձրանալով, Թալաթի գերեզմանին մօտեցայ, հոն եւս հայհոյելու բուն պահանջ մը զգացի, բայց չհայհոյեցի, աւելի ճիշդը պատճառ հայհոյանք մը չկրցայ մտաբերել, որովհետեւ... դոյութիւն չունի անիկա. ունեցողներուն ամէնէն կեղտոտն ու դարձելին, Համեմատաբար, կրնայ Հաւասարել մաքրամաքուր մակդիրի մը, որուն արժանանալու «պատիւը» շատ վեր է Թալաթ բորենիէն...

Չհայհոյեցի, այլ միտին, ներսէս, Հետեւելը ըսի, կամ ըսած ըլլալու հոգեմիճակը ապրեցայ.

— Իւրաքանչիւրը սրբութիւն մը արժող քանի՛-քանի՛ մարտիրոս հայ եկեղեցականներ գերեզման չունեցան...

Իւրաքանչիւրը գրականութիւն մը արժող քանի՛ նահատակ բանաստեղծներ, նահատակ գրագէտներ նոյնիսկ շիրմաքարի մը շարժանացան...

Անոնց դահիճին այս մեծ ու փառաշուք մեզար քաշին խղճիդ վրայ չի՞ ծանրանար, հոգիդ չի՞ ճնշեր, չէ՞յ Աստուած...

Սիկարէթին վերջին ծուխը փչելէս ետք, ուրիշներ եկան:

Ինչպէս յետոյ Հասկցայ իրենց խօսակցութենէն, եւրոպարնակ Թուրք փրոֆեսորներ էին անոնք. իրենց պաշտօնակից տեղացի վաքանտաշի մը առաջնորդութեամբ, ուխտի եկած էին... ուղտի գերեզմանին:

Իսթանպուլի Թուրք փրոֆեսորը, իր... զէպրայադոյն վերաբերուն կոճկելով, արարողային առոգանութեամբ ըսաւ միւսներուն.

— Իշքէ պիղիմ ազիզ Թալաթ պուրատա «եաշիյօր»...

Հանեցին քաւեքներն ու ամերիկեան գլխարկները եւ մէկ վայրկեան, ի յարգանս անարդին, լուռ կեցան յուշարձանին գիմաց...

Ազիզ...

Այսինքն՝ անմե՛ղ, ոռ՛ւրբ...

Ներսէս անդապելի խնդուք մը պայթեցաւ ու ալիքները ա՛յնքան բաղձապատկեց, այնքա՛ն բարձրացուց, որ խոր լուսթեան մէջ գիշ մնաց աւազին ծիծաղս իրենք եւս լսէին, իմաստն ալ հասկնային.

— Ազիզը եթէ այս է, հապա իփլի՛ղը ով պիտի ըլլայ...

Անոնք աւելի քան ժամ մը մնացին «Թալաթին» շուրջ եւ անոր մասին գեղճնային ի՛նչ խօսքեր փոխանցեցին իրարու...

Թէ՛

— ԹԱԼԱԹ ԼՈՒՍԱՄԻՏ ՄԱՐԴ ԵՂԱՅ Է, ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԲԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱՅ Է ԵՒ ՄԵՄԼԱՊԷՍ ՆՊԱՍԱՅՏ՝ ԹԻՔԼԿԼԸ ՄՇԱԿՈՅԹԻՆ. (հապա՛... Թալաթը, ջարդը, աւերը մշակոյթ են Թուրքին համար... իսկապէս մեծ եղած է Թալաթին նպաստը իր շաղգին «մշակոյթին»։ Բայց պէտք չէ մոռնալ նաեւ, որ սուլթան Համիտն ալ «լուսամիտ» էր, անոր «մշակութային» արարքներն ալ շատ պզտիկ չըլլալու մեծութիւնը ունին, զայն եւս ազիզ պէտք է կոչել...):

Այսպէս, իրենք թալաւթը գովեցին, իսկ ես, իրենցմէ ջիշ հեռու կեցած, իրենց իւրաքանչիւր խօսքին, ինքնիրենս, փակապիծ բացի, եւ զըրական» հզրակացութիւններ հանելով, իրենց հետ... պատմադիտական գաղտնի աշկապուկ խաղացի մինչեւ վերջ...

Ու երբ պատրաստուեցան մեկնելու, հայու շարք, բայց արդար եոթս հաշուոյն թաքուն պարծանք մը վայելելու համար, մօտեցայ զԵպրայակոյն փրոֆեսէօրին ու հարցուցի՝ անձս թուրք ձեւացնելով.

— Ա՜ֆ Էտէրսիմիզ, պա՛յ. տիյօրլար քի պիզիմ ազիզ թալաւթ փաշան սպանուած է Էրմէնի քոմիթաբնի մը գնդակով. վրէժի հարց է, կ'ըսեն. քոմիթաբնի ալ ՍՈՂՈՒՄՆ ԹԵՂԷՐԵՆԿԸ կը կոչուի եղեր... չիտա՞կ է արդեօք... hakikat ?...

— Նէ՞ Էրմէնի, թէ՞ քոմիթաբնի, ի՞նչ վրէժ, — ահապարեց պատասխանել թուրք փրոֆեսէօրը, — Ալլէ՞ր կ'ըսես դուն, պատմութիւն պիտիյօրստուն սէն. Թեւիթեան-փեհլիվան եօֆ մէտէլէտէ... թալաւթ փաշան անդլիա-ցիները զարկին, ինկիլիզլէր վարտուլար Պէրլիմտէ...

— Եվէք, Էվէք, — ժախակցեցան միւսները՝ կեղծիքը հարապատօրէն կեղծելով. — Թեւիթեան-փեհլիվան եօֆ մէտէլէտէ, ազիզ թալաւթը ինկիլիզլէր վարտուլար...

Ձէ՛տրա, զէպրանե՛ր...

Իրենց շունեցած ազգային արժանապատուութիւնը որքա՞ն բարձր պա-հել կը ջանան...

Հայու, չէ՛, կեալուրի՛ գնդակին «շէնիտ» երթալը նուաստութիւն սեպելով՝ շէն խպնիր պատմական բացարձակ ճշմարտութիւնը, ճշմարտութիւնները վարադուրելու, որպէսզի յանուն իրենց «բարձր» շէնիթին, սիրո՞վ եւ հպարտօրէն, փէրտէլին ետեւ նստին ինկիլիզի... բարոյական խազալին...

Այսպէս եւ թուրքերը:

ԺԳ.

UZAKDAN

VADIHAN

ՄՕՏԷՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Հայերը հապա:

Ինչպէ՞ս են պոլսահայերը:

Անոնք շատ յաճախ, թուրքիայէն դուրս հրատարակուող կարգ մը հայ թերթերու կողմէ որքա՞ն մեղադրուած են իրենց «թրքասիրութեան» հա-մար. մա՛նաւանդ՝ Մեծ Եղեռնի յիսնամեակին, երբ անոնք 50TH ANNIVERSARY OF A GENOSIDE ARMENIAN VICTIMS, «THE ARMENIAN QUESTION UNFINISHED BUSINESS», «ՄԵՐ ՀՈՂԾՐԸ, ՄԵՐ ՀՈՂԾՐԸ...» գրութեամբ պատասաններ բարձրացնող, Երեւանի Պետական ակադեմիական օփերային տպակիները փշոզ հայրենիքի եւ Սփիւռքի իրենց հայրենակիցներուն հակասելով, ծաղկեպսակ դրին թալաւթ № 2 Մուսթա-ֆա Քեմալի յուշարձանին վրայ, մեր մամուլին մէջ հրապարակադրական ի՞նչ ֆալստոններ պայթեցան իրենց հասցէին.

digitised by

A.R.A.R.@

— Ամօ՛թ, ամօ՛թ, ամօ՛թ...

Յիսնամեակին խորհուրդը եղծե՛լ... այսպէ՛ս կը պատդամէ Հայոց Պատմութիւնը, ա՛յս է պատուէրը Հայ ազգային հողին, անհատականութեան, արժանապատուութեան. ամօ՛թ ձեզի «թիւրֆ-էրմէններ»...

Այնին, երբ թերթերէն այսպէս բաներ կարդացի, միտքս իսթանպուլ դնաց. յիշեցի հանդիպումներս զանազան պոլսահայերու հետ:

Անժողովուն հանդիպումներ, որոնք հարազատօրէն կը ճանչցնեն թրքահայատակ մեր արեւակիցները, կը ցոյցնեն Հարազատ պատկերը անոնց անխառն հողին...

Օր մը, Պէոյուք Տէրէ, Չուքուր Չէշմէ եւ այլ վայրեր թափառելէ ետք, նստեր էի բացօթեայ սրահարանի մը մէջ, մայթին շատ մօտ:

Յաղթանդամ թուրք Կոյաքի մը, որ Պեհաշտին Շաքիրին կը նմանէր, զիմացս, ցածիկ աթոռին վրայ նստած՝ կօշիկս կը ներկէր...

Ես ալ, հանդարտ հպարտութեամբ, սիկարէթս կը տանէի շրթներուս, ու ծուխը կը փչէի զետրին գերապատուութեանս՝ զիմաց ծռած, խոնարհած թուրքի զլխուն:

Արիկա քաղաքականօրէն տուած Հայու շրջուած քովփլէֆս մըն է թէեւ, փո՛ւճ է թէեւ, բայց ինչ խօսք, հաճելի է շատ...

Արդէն հաճոյքով կը տրամաբանէի, թէ... տուած-մուծել, քովփլէֆս-մովփլէֆս պարապ բաներ են. լեցունը ա՛յն է, որ ապագան արդար զատի տիրոջ կը պատկանի...

Ձեռքս տարի սուրճի դաւաթին, բայց շրոնեցի, որովհետեւ՝

— Վատիիա՛մ, պէ՛լի, ալաշալլա՛մ սա՛մա, — ձայնող մը ուշադրութիւնս գրաւեց:

Այս մէկը կրկին հազուած երիտասարդ մըն էր, որ քիչ մը հեռունէն, բարձր ձայնով կ'ըսէր, կը կրկնէր իր բարեկամին.

— Վատիիա՛մ, պէ՛լի...

Վատիիան կոչուողը, նոյնպէս ներկայանալի տէլիֆա՛նը, նայեցաւ ետեւ, ճանչցաւ զինք կանչողը ու ժպտեցաւ. յետոյ, մայթ ելլելով, ինձմէջանի մը քայլ անդին կեցաւ եւ... Կէլլէյեց:

Շատ սովորական այս պատկերը (մէկը կ'անցնի, ուրիշ մը կը կանչէ, կանչուողը կը կենայ, կը սպասէ), առօրեայ կամ... առմայթեայ այս պարզ եղելութիւնը ինչո՞ւ հետաքրքրական եղաւ ինձի համար, չէի կրնար հասկընալ, միայն կը գիտակցէի, թէ... սուրճս պիտի մոռնայի դարձեալ...

Բացօթեայ սրահարանին ցանկապատը հազիւ կէս մեթրնոց ցած բարձրութիւն մը ունէր. մայթով եւ վատիիանով կլանուելուս պատճառը ա՛յդ էր արդեօք. ես ինձի այսպէս հարցնելու չմնաց, տեսնեմ, չէ՛... լսե՛մ՝ «վատիիա՛մ, պէ՛լի» ձայնողը, որ արդէն մօտեցած էր զինք սպասողին, մեղմօրէն... հայելիէն խօսելով, անդիտակցարար ինձի հասկցուց, թէ դուրսով հետաքրքրուելուս պատճառը պատի հարց չէր, սպաւենական արեան հարց էր...

— Բարեւ, ՎԱՐՈՒԺԱՆ, ա՛ւր ես, շեւ երեւիր... տասնըհինգ օրէ ի վեր քեզ տեսած չունինք. կարգադրուելիք ահապին գործեր կան, դուն մէջտեղ չկաս... երեսդ տեսողը հա՛մ կ'երթայ... Հա՛, այդ պիտի հարցնէի. մարդուն հետ խանութին խնդիրը ինչպէ՛ս վերլացուցիր. գործիդ եկա՞ն դրած պայմանները...

Որո՞ւ մտքէն կ'անցնէր, որ հեռունէն «վատիիա՛մ» կանչուողը, մօտէն

եւ որոտաճօտ բարեկամին համար հա՛յ ըլլար եւ հայերէնն ալ ի՛նչ լաւ վայել-  
ցրնէր լեզուին :

— Շատ զբաղած էի. հիմա քալէ մեղի երթանք. կը խօսիմ քեզի դու-  
ծերուս մասին... ուրիշ ըսելիքներ ալ ունիմ... երթանք...

Գացին :

Անշուշտ չհասեւեցայ իրենց. նախ՝ որովհետեւ կօշիկներս փրչալի տակ  
էին, ապա՝ իրենց անձնական գործերը, խանութի խնդիրները ինծի համար  
չահեկանութիւն չունէին ի հարկէ :

Մնաց որ՝

Շահեկան ապաւորութիւնս արդէն առած էի իրենցմէ, «վատիքամ»,  
«վարութեան» անուններէն :

Յաջորդ օրերուն, Պոլսոյ զանազան վայրերուն մէջ, տեսայ, լսեցի  
նմանօրինակ ուրիշ իրողութիւններ եւս :

Թղթաճաճառատան մը արման կը կարգաս — MUNIR : Ներս կը մտնես  
յուշատետր մը գնելու. բարեկց դուրս կու գայ, որ տէֆթէր սարան Մուհիբը  
Միհնէ՛՛՛ մըն է. յիշան հայ մը եւ պատուական հայր մը նոյն ատեն :

Նախակրթարան դացող իր դաւակը, արձակուելէ ետք, խանութ եկած  
է, հայերէնի քննութեան թուղթը եւ թուղթին վրայի 85 նիշը ցոյց կու տայ  
պապային՝ արդարօրէն պահանջելով սիմնմա երթալու խոստացուած արտա-  
նութիւնը :

— Խօսք տուիր, որ եթէ հայերէնի քննութիւնս յաջող տամ՝ սիմնմա  
երթալ մը հախիւ է. ահա՛, տես հայրի՛կ, նիշս 85, յարդէ՛ խոստումդ. կէսօրէ  
ետք դպրոց չկայ. պիտի երթամ, տեսնեմ... զաղտնի ոստիկանական աղուոր  
ֆիլմ մը եկեր է, շա՛տ հետաքրքրական է կ'ըսեն, հայրի՛կ, տէ՛...

Կ'ուզես ածիլուիլ :

Սա գիտացը «SALON TAHSIN» մը կայ :

Թահսինը թուրքի անունն է հարկաւ :

Ուրեմն՝

— Թուրքի հետ դործ պիտի ունենամ, — կը մտածես կամ կը կար-  
ծես...

Սակայն՝

— Հոգ չէ, — կ'ըսես դուն քեզի. նպատակդ ածիլուիլ մըն է միայն,  
երես մաքրել տալ մը. շատ բարակը չես մազեր, կը մտնես սալոնէն ներս՝  
թուրքի... Եաթաղանիկին ենթարկուելու կաժաւորութեամբ :

Պատկերը բոլորովին կը փոխուի սակայն...

Հաշիւդ սխալ դուրս կու գայ, մոռցուած ձեռք կայքի մը պատճառով :  
Այս պարագային, ձեռք կանչ թիւ չէ, դէ՛ր է, կամ գէրեր են խոշոր-  
«ՄԱՐՄԱՐԱՆ» կը կարդացուին...

— Պաւլար, սլայ, հոշ կիւտիմըզ, — ըսելով ոտքի ելլող սափրիչը  
«Մարմարա»ն սեղանին վրայ կը գնէ եւ ցոյց կու տայ աթոռը :

Ա՛լ բնական է, «Մէրիապա»դ կը կախակայես, ու՛

— Բարե՛ւ, — կ'ըսես ժպտելով :

— Աստուարին, ճանս, քարի եկար, հազար քարի... ինչպէ՞ս ես...  
առաջին անգա՞մն է, որ կու գաս մեր սալոնը. գոհ պիտի մնաս... երկուս ա-

միտ հազիւ եղաւ այս իմ Բանութիւնը քանակաւ... առաջ, Զեմպէրի թաղ, անկիւն մը ունէի, լաւ չէր, նեղ էր, մարդ դաւ չէր ուզեր հոն...

Հայ սափրիչի աւանդական շատախօսութիւնը լաւն առնել կը սկսի արագէն...

Սակայն, անգամի մը համար, չես դժգոհէր շաղակրատութենէն. նոյն իսկ կ'ուրախանաս՝ «Թախսիմաթ ծաղտուած ԹՈՐՈՍԻ՝ սիրոյն...

— Ճա՛նն, հոս Թուրքիա է. Թահսինը շուկայի՛ անունն է. հայութիւնս ի՛նչ գործ ունի շուկայի հետ. ես՝ ե՛ս ինձի Թորո՛ս եմ, հայ եմ եւ... տէրտէրի Թո՛ր...

Ընդհանրապէս այսպէս են պոլսահայերը. Ռուբէն Մամուլեանի կողմէ շարժանկարի վերածուած «ՏՈՐՔ. ՃԵՂԻՐ» գործին նման. երկու տարբեր մարդեր՝ նոյն մորթին տակ. մէկը՝ որ իսկական անձն է, ներսի աշխարհին համար, միւսը՝ դուրսի. ներսինը կը կոչուի Վարուժան, Մինաս, Թորոս, դուրսինը՝ Վատիհան, Մուսիր, Թահսին:

Իրենք գիտեն իրենց կացութիւնը...

Մեղի կը մնայ շանգիտանալ, թէ «թիւրք-էրմէնի» ներքը դտարին հայեր են:

MUNIRը տէֆթէր ծախող է սոսկ. դուք նկատի առէ՛ք՝ հայերէնի զըննութեան մէջ յաջողած իր զաւկին սինեմայի արտօնութիւն եւ դրամ տուող հայր ՄինԱ՛ՍԸ...

TAHSINը ապակիի վրայ գրուած անուն մըն է միայն. դուք մի՛ մոռնաք ինքն իր մէջ հայ եւ տէրտէրի՛ թոռ ԹՈՐՈՍԸ...

Քեմալ Աթաթիւրքի յուշարձանին ծաղկեպսակ ղնողները ուզաւտան VADIHAN կանչուողներն են. դուք մօտեցէ՛ք ՎԱՄՈՒԺԱՆՆԵՐՈ՛ՒՆ, տարէ՛ք զիրենք Երեւան, ապակիները փշրուած Պետական Օփերային փեղկերը, դուռներն ալ կը կօտրեն, հաւատացէ՛ք, պատերն ալ կը փլնեն... Յետոյ զայն նորոգողը, չէ, աւելի դեղեցկացնելով վերականգնողը, հաւատացէ՛ք, դարձեալ իրենք պիտի ըլլան:

(Շար. 4)

Յ. ԶՈՐԵՅԻ



# ՇԱՐԱԿԱՆ

## ՍԻՐԱՏԱՆԶՈՒԹԵԱՆ ԵՒ

## ԱՆՈՒԱՆԱԿՈԶՈՒՄԻ



Բայց ինչո՞ւ քողը:

Աչքերուդ առջեւ ես անվարժ դպիր  
 Եւ քարթիչներուդ սարդոստայններուն  
 Համբարդն յոգնատանջ,  
 Միջնադարեան մոր հովիւր մահեւ աշխկերպուող,  
 Որ, տե՛ս, կը քաղէ սաղմոսներ քեզի:

Բիրերդ հուր եմ  
 Եւ դուն՝

արեւուն պէս եւ անոր չափ  
 հեռաւոր հրայրք՝  
 մերկայութիւն էական:

Հարիւր մորթ փոխած,  
 Հարիւր վերք շալկած  
 եկած եմ քեզի

Բայց քողդ գորդեան  
 հմայիչ,  
 խրթին,  
 անթարգմանելի,  
 ես ինչպէ՞ս լուծեմ...

Օ՛, ինչո՞ւ քողը,  
 Պարիսպը՝ ինչո՞ւ:

Մնաց մէկ միջոց. օգնութեան եկան երգեր շրթներուս,  
 Նոր, խրթին երգեր, կենսատու, անտաշ, անսանձ, խօլ ճիրքեր՝  
 երգեր արիւնէ...

... Եւ արեւուն պէս  
 Եւ իմ անցեալի սաղմոսներն արեւ  
 Եւ իմ պատմութեանս սաղմոսներն արեւ  
 Ու սաղմոսներուն թրթիռներն արեւ  
 Հոգմերը սիրոյս,  
 Նար ու եին ուխտիս հոգմերն ամենի,  
 Նար ու եին ուխտիս կտակարանին տառերը բոլոր  
 Բացի քու առջեւ,  
 Եւ իմ քառերուս,  
 Եւ իմ երգերուս անժանգ խաղերուն  
     ծով սիրոյս ծովուն  
     եռքին մէջ անհուն՝  
     խռովայոյզ ծով...

Մատուցեցի դրան սեմին պատարագները բոլոր  
 Բայց քո՛ղդ, քո՛ղդ քանձրացաւ կրկին...  
 Մինչեւ ե՛րբ քեզ աղօթեմ,  
 Երագներս դուն տանջող իմ քշմամբ՝ բարեկամ:

Ինչպէ՛ս կարդամ քեզ այսօր,  
 Ինչպէ՛ս լուծեմ երեւէն, հիփնոսացնող աչքդ խոր,  
 Աչքիդ խորհուրդն՝  
     Իմ սեպագիր սո՛ւրբ սաղմոս...

Քեզ որոնած բոլոր, բոլո՛ր պահերուս,  
 Գոյն ու գիծերն այեկոծ  
 Ու հաշիշով շաղուած քառերը բոլոր  
 Անձրեւի պէս տեղացին մառախուղին մէջ գինով...

Անցեալի բոլոր ժառանգութիւնս տուի կրակին՝  
     պատկերդ մնաց,  
 Տուի կրակին սիրտս սիրայորդ, բայց քո՛ղդ գա՛րձեալ  
     անքափանց մնաց:

. . . . .  
 . . . . .  
 . . . . .

...Ու բոլոր, բոլո՛ր հաշիշամուկներն  
 Հչացին, բսին քառեր ջլապիրկ  
 Արծուի պրկուած ժանիքի նման՝  
 Ու գարձան մէկ ձայն՝  
 — Մկրտէ՛ դուն քեզ...  
 Ու կոշուեցայ ես Աղամ, Նազովրեցի ու Ներոն



Ու կոչուեցայ ես Աբէլ, Բամսիս, Դաւիթ, Մուհամմէտ,  
Բագուս անուններ որոնցան մտքիս տումարին մէջ ծուխ,  
Կոչուեցայ Կայէն, Ղազար, Հայկ, Պուտուտ, Վահագն, Ապի Հոլ,  
Կոչուեցայ Վասակ, Մովսէս, Զրադաշտ, Յուդայ, Արամազդ,  
Եւ այլ անուններ ճշացին ինծի՝ յիմար, անուանի, տժգոյն,  
մեծափառ.

Բայց երբ ինգիւնքս կոչեցի ես Սէր՝  
Հաշիշամուկներն արբեցան իրենց մեծ յաղթանակով  
Ու վարդը դարձաւ ծովածաւալ բոյր,  
Ու մարդը դարձաւ սիրով մկրտուած,  
Ու կեանքը՝ խինդի ալեկոծ ովկեան՝

դարձաւ լոկ մանուկ  
մանկութիւն բուրեան,  
մանկացաւ աշխարհ,  
մարդիկ մանկացան,  
ու ես միշտ մանուկ,  
բայց դուն միշտ նոյնը  
նոյն անլոյժ քողը:

\* \* \*

Գիշեր էր պայծառ,  
Ու ջինջ ամառուան գիշերով անհուն,  
Արեան տենդերու իբրեւ Ամագոն՝  
Իջայ լեռներէն ու հաւաքելով հողմերը անհուն  
Կարդացի հողդ, ջուրդ ու հոգիդ,  
Հասայ անտառներ՝ կոյս, վեհ ու մթին,  
Ուր լոյս եւ ստուեր ձուլուած են այնքան՝  
Որքան կեանքի մէջ վատը ու բարին:  
Եւ օր ու գիշեր ու տարւոյն բոլոր՝ եղանակներուն  
Իբրեւ հրարաւ արձանագրեցի  
Ճշմարտութիւններ, զորս քաղեցի կոյս անտառներու  
զազանանոցէն.

Դեռ արձանագրեցի աղաղակներն ու շշուկները սուրբ  
Ու լեռներն հսկայ՝ քարացած ցասում,  
Ու գետերն անսանձ՝ սիրոյ ասմունքներ,  
Ու տիղմերը նենգ՝ նախնացած մարդոց ներքին լուսանկար:  
Եւ ամագոնեան տարերքով հուժկու շրջեցայ աշխարհ,  
Աշխարհն, որ օր մը կոչուեցաւ քառս,  
Ու քառսին մէջ ներաշխարհներու՝  
Գտայ միա՛յն քեզ,  
Եզայ ջրհեղեղ,

Միրոյ թարգմանիչ եւ արեան երգիչ  
 Ու ֆարտէսիդ թիւր լեզուներն ամբողջ սերտելէ յետոյ,  
 Ապրեցա՛յ ես քեզ,  
 Երգեցի՛ ես քեզ,  
 Զգալով յանկարծ  
 Հոն մոխրալիկուած իմ եսի ծառին արմատներուն մէջ  
 Արարչագործուող սերմերը բարի...

\* \* \*

Օ՛ր, ֆողդ արդեօք պիտի պատռե՞ս դուն,  
 Ե՛րբ, ըսէ՛, ըսէ՛,  
 Ու պիտի տեսնե՞ս ինքզինքդ աչքերուս,  
 Ուր դուն լրացած կ'այրիս ու կ'ապրիս՝  
 Իբրեւ չհատնող անկէզ մորենի...

Ափրիկէի կիրք,  
 Ափրիկէի կոյս անտառներուն՝ լոյս ամուսի՛նն եմ ես,  
 Սէրս՝ անձրեւ, բոյրս՝ արիւն:

Լեռնանան պիտի խարուած, անտեսուած  
 Սրտիս ջուրերը, քննվզումը յորդ:  
 Բայց դո՛ւռը, դո՛ւռը...  
 Օ՛ր, ո՛ւր է դուռը,  
 Եւ ո՛ւր է յոյսը այն տղուն բարի,  
 Որ միշտ կը ցանկար  
 Յիսուսի նման ծափով, ռստերով,  
 Ծիծաղով կանաչ՝ աշխարհիդ նուաճել...

Ինչպէ՛ս նուաճեմ:  
 Յիշատակներու եւ ճշմարտութեան  
 Բարեկոն ես դու՝  
 Կառնակ, փլատակ, հմայի՛չ հրաշք,  
 Ու ջուրին վրայ՝ փայտերն դարպասիդ՝  
 Ազամայքերու վարձու կոծերու նման ծփացող...

ԵԳԻՊՏԱՅԻ ՉԵՄ, ՈՐ ՔԵԶ ԶՄՈՍԵՄ:

Բայց պիտ' նորոգեմ մարմինդ, հոգիդ,  
 Որովհետեւ ես՝ տանջուած սէրերու եւ հոգիներու,  
 Մեռած իղձերու, անտէր սրտերու ու երազներու՝  
 Բոբբ արիւն տուող յարալէզն եմ ողջ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ



**Պ Ե Տ Ր Ո Ս  
Դ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի  
Մ Ա Հ Ո Ւ Ա Ն  
100 Ա Մ Ե Ա Կ Ը**



Յառաջիկայ տարի, Յունուար 21ին, կը լրանայ հայ գրականության քաջունիկ երեսոյթներին Պետրոս Դուրեանի մահուան 100ամեակը:

Գրական գործունեութեան ընդամենը 4-5 տարիներու կենսագրութիւն մը ունեցաւ Դուրեան, բայց բնատուր իր հանճարին շնորհիւ, անոր առաջացուցած տարերային մղումով ստեղծեց բանաստեղծական ու արձակ աշխատք՝ վաստակ մը, որ ո՛չ միայն որակական իր անկրկնելի փայլատեղութեանով, այլեւ քանակական առումով ապշեցուցիչ պիտի մնայ զբանութեանց պատմութեան մէջ:

Բոլոր քաջատիկ ծնունդներուն պէս, Դուրեան եղաւ շնորալից ծայթերում մը, որ ետքնեցաց շունէր ու շունեցաւ նաեւ հետեւորդ, մնաց իր բարձրութեան մէջ մինակը, անմերձենալի ու ճառագայթարձակ:

Հանճարներուն մօտ միայն հաստատելի արժանիքներու զուգարով մը՝ Դուրեան կանխած էր իր ժամանակը, եւ սիրոյ, բնութեան ու հայրենական կալուածներուն մէջ զբոսնարած իր Ներքին Հրաժառութիւնները, խոստովանութիւններ ընելու ուժը, պայծառութիւնը, պայծառաստեղծութիւնը, արտայայտչական զորութիւնը, լեզուի, պատկերի, փոխրկութիւններու եւ հակադրութիւններու բոլորովին նոր, քնքնեկ, իրաւ, յախուռն ու յանդուգն նուաճումները կը ներկայանան մեզի առաջին օրերու իրենց թարմութեամբ:

Պ. Դուրեանի մահուան 100ամեակին առիթով, ճեղքիմք իր ԺԱ. տարւան առաջին թիւը որոշած է ամբողջութեամբ յատկացնել պատանի հանճարին, յիշեցնելով իր աշխատակիցներուն, որ այդ մասին պատրաստած իրենց գրութիւնները խմբագրութեան հասցենն ամէնէն ուշը մինչեւ Դեկտեմբեր 1:

Դուրեանի ծուրեան ճեղքիմքի քաջատիկին համար խմբագրութիւն արդէն կատարած է որոշ աշխատանքներ եւ առաջիկայ ամիսներուն ոչ մէկ ճիշդ պիտի խնայէ, տալու համար այդ ճեղքիմքին բանաստեղծին մեծութեան վայել վայելչութիւն մը:

digitised by

A.R.A.R.@

## ԱՐՄԵՆ ՏՕՆՈՅԵԱՆ

## Վ Ե Ր Ա Պ Ա Ր Ձ

## Դ Ե Պ Ի Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Արդի բանաստեղծութիւնը տաղնազ մը կ'ապրի:

Մարդիկ յոգնած կը թուին ըլլալ տնոր դասական լրջութենէն: Կեանքի բոլոր մարզերուն վրայ իր կնիքը դնող ֆռնքէզին հասաւ նաեւ Ապողոնի արւեստին:

Տեսանք ու ամէն օր կը վայելինք արդիականութիւն կոչուող բանաստեղծութիւնը, որ այսօր կը ցնցէ մեր հոգիները, կը ցնցէ մեր էութիւնը, զիցարանական եւ քնադանցական հակումներով տակաւին հարուստ, անոնց տիրապետութեան ենթակայ մեր հոգիները:

Վերջին տասնամեակին, այդ մոմտութենքը առաջնորդեցին բանաստեղծները իմաստասիրական բոլոր ա'յն էական թեմաներուն, որոնցմով դասական բանաստեղծութիւնը կը շարունակէ մնալ մեզի համար այժմէական:

Իսկ իբրեւ էական եւ հիմնական թեմա՝ ի՞նչ ունի մարդկութիւնը աւելի տաղնապալի, քան հոգիի էարանական քննութիւնը, մահուան ու կեանքի հարցը:

Աստուծոյ գոյութիւնը, մարդկային եւ տիեզերական ծնունդն ու կազմութիւնը եւ բաղմամբիւ բնականացական այլ հարցեր, այսպիսով, գիտութեան շլացուցիչ արեւէն երկար ատեն թաքնուած, այսօր կու գան կրկին շուարած, դժգոհ, անմխիթար մարդկութեան վրիչին:

Կու գան՝ բարեխոսուած կինսարանական եւ ճակատագրապաշտ ձգտումներով: Ծակատագրապաշտ՝ ո'չ միայն աստուածաբանական եւ ընկերաբնական սահմանումով: Ծակատագիրը այսօր վերացական եւ մխիթար քրիստոնէական հարց մը ըլլալէ աւելի՝ հոգեբանական ճշմարտութիւն մըն է: Զըլմամբութիւն մը, որուն յստակ շեշտադրումը, բաղմամբիւ հարցերու կողքին, մասնաւորաբար կը լուծէ մշտնջենական տիլէմա՝ — մարդը ազա՞տ է՝ թէ ոչ: Կը լուծէ՝ տալով հետեւեալ լակոնական պատասխանը.

digitised by

A.R.A.R.@

— Ամէն մարդ գերին է իր անցեալին: Անցեալին, որուն անքակտելի կապանքներուն տակ կը մնայ մարդը իր ֆիզիքական, հոգեկան, նոյնիսկ մտաւորական կարելիութիւններով:

Այս բոլորը, այս անգամ, բանաստեղծները կ'ըսեն մեզի:

Հետագայ քերթուածը մեզի կու գայ Մայրապետին Արեւելքէն, ուր բանաստեղծը կ'երկնէ նոր օրերու «Երգ ծննդոց»ը:

Քեզի, ո՛վ ստեղծիչ, բեզի, ո՛վ ամենագոր,  
Կը ձօնեմ այս նորատունկը,  
Նոր պտուղը ծառի՞ն՝ հի՛ն:  
Դուն ես տէրը, մե՞նք՝ քաւակներդ լոկ:  
Քեզի, ո՛վ ստեղծիչ, ո՛վ ամենագոր, բեզի՛  
Կը ձօնեմ այս նորատունկը:

Կրօնաշունչ խոստովանութիւն կամ աղօթք մը չէ ասիկա, այլ տկարութեան ու անգործութեան արտայայտութիւն, նորածինի թէ յայտնութեան տոբիթով բանաճեւուած անգործութիւն:

Նոյն այս որոշադրութիւնը շեշտող եւ ազատութեան գաղափարը աւազող չիւսացի բանաստեղծը կը զբէ՛

Շունն կը հարցնէ Զանկին.

— Սկզբունքը կրճա՞յ տիրապետի,

— Դուն նոյնիսկ քու սեփական մարմնի՞դ տէրը չես,

Ինչպէ՞ս արքեմն պիտի տիրաճաս սկզբունքին. —

Կը պատասխանէ Զանկի:



— Եթէ իմծի չի պատկանիր իմ մարմինս, հապա

Ռո՞ւ կը պատկանի, —

Կ'ըսէ շունն զարմացած:

— Երկնքին աւ երկրին,

Ռո՞ւմ մէկ մասնիկն է, —

Կը պատասխանէ Զանկի, —

Քու կեանքդ հիւլէ մըն է, տիեզերական ներդաշնակութեան մէջ:

Քու բնութիւնդ եւ ճակատագիրդ

Հիւլէներն են տիեզերական համերաշխութեան:

Քու գաւակներդ

Եւ բռններդ բեզի չեն պատկանիր

Այլ մեծ Ամբողջին,

Ռո՞ւմ ժայթքումներն են ամո՞նք:

Կը քալես, առանց գիտնալու, թէ ո՛վ կը մզէ բեզ.

Կանգ կ'առնես, առանց գիտնալու, թէ ո՛վ կը կեցնէ բեզ.

Կ'աւտես, առանց գիտնալու, թէ ինչպէ՞ս կ'իրացնես:

Ինչ որ ես դուն, ճիշդ մըն է՝

Տիեզերքի անդիմադրելի մասնակցութեան.

Ուրեմն ի՞նչ բանի կընաս տիրապետի...

Գիտութեան, լուսնարշաւային այս զարուհի, համաստեղածութեան, տիեզերքի մէջ ձուլման այս ձգտումը մեզ կը գնէ միշտ դրուած, բայց երբեք սլատասխան չտալով հարցերու առջեւ: Մահուան ու կեանքի հարցեր, որոնցմով Հոմերոս գոգիսականօք առասպելն ու ողբերգութիւնը կը կերտէր, Բանաստեղծութեան մէջ՝ այս ողբերգութեան մեծագոյն տիպարին, մահուան առջեւ մարդ էակին սարսափին կը հանդիպինք Շէյքսպիրի «Համլէթ»-ին մօտ, անկրկնելի թոնով եւ ուժգնութեամբ:

Իսկ այսօր, շինական յուսահատական ճիշդութեան կը միանայ ալճերիացի արաբ բանաստեղծ Ապուլ Հասան Ալի Մուզաֆֆար Սիպիթի.

Ըսէ՛ք, զիս մեռած կարծող եղբայրներուս,  
Որովք զգրացին զիս,  
Թէ ի՞նչ կը մտածեն իմ կեանքիս մասին...  
Ես զանա մըն էի, պահուած քողի մը տակ,  
Աստուծոյ կողմէ...  
Կախարդական փառքի, կարստեան դատապարտուած...  
Ես քոչուս մըն էի, ասիկա իմ վանդակս էր,  
Կամ իմ բանտս, ուր կ'ապրէի արգելափակուած:  
Քանդեցէ՛ք ուրիմն տունս, խորտակեցէ՛ք վանդակս,  
Յրուեցէ՛ք մնացորդներս,  
Պատեցէ՛ք մարմնական շապիկս, եւ  
Պատեցէ՛ք անկէ՛ դատարկ կուռքի մը նման քալիսմանս,  
.....  
Հանդերձակերծեցէ՛ք ձեր հոգիները ձեր մարմիններէն  
Եւ անպայման կը տեսնէ՛ք զԱստուած...  
Իմ հոգին ուրիշ բան չէ, եթէ ոչ դուս ինքզի,  
Իմ հուստս կը նշանակէ ա՛յն՝ քէ դուս ես եմ...  
Հոգիներու էութիւնը եզակի բան մըն է՝,  
Նայեն է նաեւ մեր մարմիններուն համար:

Բանաստեղծական արդիական հոսանքին մէջ գերբնականին ապաւինելու այս ճիգը անմիջականօրէն պոռթկացող հակազդեցութիւնն է նիւիլիստականութեան, որ ամբողջ Եւրոպայի քաղաքակրթութեան վրայ ուրուականի նման տարածուեցաւ 20րդ դարու սկիզբը: Ընտանիքի, իշխանութեան, պետութեան եւ ամէն տեսակ կազմակերպուած հաստատութիւններուն դէմ ու անոնց մէջ միայն ապսխլաբար տեսնող յոգնած ուղեղներուն, հաշիշի ազդեցութիւնն ու թմբիրէն արթնցող ու զղջումի լացին մէջ միութարութեան մա՛յնն է թանձր ողբերգութեան այս ներկայացումը: Ողբերգութիւն մը, զոր ապրելու սահմանուած է մարդ էակը: Այդ ներկայացումը կարելի է կէտադրել ժպիտներով, նստաբեկ սեւութիւնը, հաւատալով մարդկային բարոյական կորուսին եւ Մարդ-Աստուած յարաբերութեանց մէջ ջանալով գտնել կեանքի համապարփակ իմաստն ու տանելիութիւնը:

Ահա թէ ինչո՛ւ ի յառաջագանձ կաղաց այնքան ծանր ու առողջ դա՛գափառարանութեամբ Ռասուլիան իմաստասիրութիւնը: Պերթրանտ Ռասուլ զրիշի մէկ հարուածով քիչեց գերբնական ամէն առաջագորութիւն ու մտահոգութիւն. «Ինչպե՞ս մտածել անգոյ Աստուծոյ եւ Տիեզերքի կազմութեան մասին: Առէ՛ք Տիեզերքը այնպէս՝ ինչպէս անիկա կը ներկայանայ ձեզիք»: Առաքելայապաշտ այս տրամաբանութիւնը չի հանդարտեցներ ի բնութենէ հար-

դասէր մարդ էակին միտքը: Աստուծոյ վերացումով՝ հարցերը ո՛չ միայն լուծուած չեն ստանար, այլեւ ծնունդ կու տան աւելի բարդ խնդիրներու:

Այսօր մարդկութիւնը խանդավառութեամբ կը հետեւի արեւմտեան աշխարհի յղիացած մտքէն հեռու ծաղկող այս խաղաղ մտորումներուն: Որոնք մեր կարելիութիւնները ազատ ու անկաշկանդ օգտագործման անկակալութենէն, ինչպէս եւ զգացումներու վրայ մտքի բացարձակ տիրապետութենէն յուսահատ՝ կը վերադառնան դասական ճշմարտութեան:

Եթէ Պղատոն ապրէր այսօր, հաւանաբար փոխէր իր կարծիքը եւ իմաստասէրներու փոխարէն, առաջարկէր պետութիւններու դէկը յանձնել բանաստեղծներուն:

Գաղափարներու անմահութեան, գերազոյն ձեւերու եւ մարդկայնական մշտնջենականութեան այս տեսակէտը նոր չէ քաղաքակրթութեանց պատմութեանց մէջ, մարդկային հոգեկան տագնապներուն մէջ, նոր է՝ Չորդ դարուն անոր վերադառնալու անդօր շունչն ու ճիւղը:

Նիցշէ անկեղծօրէն կը դուռար եւրոպական քաղաքակրթութեան կերտիւններուն:

«Ո՛վ Եւրոպացիներ, որքան ապա՛ւշ էք դուք, որ այնքան կը զինուիք մտով, առանց անդրադառնալու, որ անիկա ձեզ կործանման պիտի տուա՛ն ձերդէն»:

Այո՛: Մարդկութիւնը յոգնած է մանապէտ ջղադարձեր պատրաստելու աշխատանքէն եւ սկսած է զգալ, թէ տիեզերք կոշտած մեծ ինքնաշարժին մեքենավարները գինովցած են այլեւս, սկսած են կորսնցնել իրենց հաւատարակչութիւնը:

Թունաւորուած, կուրցած, պինովցած կամ թմրած:

Մարդկութիւնը այսօր միայն կ'անդրադառնայ մտաւորական այն ոճերին, զոր դործեցին կարգ մը իմաստասէրներ:

Դարերը մեզի սորվեցուցած են կարենալ ապրիլ տառնց գիտութեան ու իմաստասիրութեան, բայց ոչ՝ առանց զրականութեան:

Այսօր, թէեւ տկար, բայց սկսած են բարձրանալ քրտառուշ աղաղակներ, Աստուծոյ մէջ փնտռելու հոգեկան այն անդորրութիւնը, որ կորսուած էր:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ



ԼԵՒՈՆ Ս. ՇԱՆՔ

## ՏԵՍԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

### ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄՏՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է կեանքը:

Ի՞նչ է մտածումը:

Անհատնում դարերու մշտնջեն ընդ-  
մէջէն մարդոց միտքը միշտ շարժարած  
են այս երկու հարցումները: Քսաներորդ  
դարու սկիզբը գիտնական մը բաներ մը  
ըսաւ, բաներ մը փաստեց, սակայն իր  
գործերով հետաքրքրուեցան միայն գի-  
տական աշխարհի մասնագէտները:

«Ձար» մարդիկ օգտագործեցին այդ  
մասնագէտները, 20րդ դարու կէսերուն  
պայթեցնելու համար ահաւոր ուժ մը:  
Ամբողջ մարդկութիւնը սարսափեցաւ:

Այսօր, երեք միլիառ մարդոց մէջ  
մտած է ուժերին վախը: Այդ վախը գէթ  
վայրկեան մը մոռացութեան տալու հա-  
մար, քանի մը դոռող փիլիսոփաներ, ի-  
րենց հտեւէն քաջիշխով հարիւրաւոր մի-  
լիոններու «բանիմաց» մարդոց ամբոխ  
մը, կը շարունակեն հարցնել, թէ ի՞նչ  
է կեանքը, ի՞նչ է մտածումը... Եւ  
Տարուինեան յեղաշրջումներու ջուրը կը  
ծեծեն ու կը ծեծեն:

Իսկ այն զանգուածը, որ մարդկու-  
թեան մեծամասնութիւնը կը կազմէր, չի  
հետաքրքրուիր, թէ ի՞նչ է կեանքը: Ան  
հարց կու տայ, թէ նպատակը ինչ է իր  
պոտտաշական, քրիստոնեայ, մահմե-  
տական, հրեայ եւ մարքսիստ կրօնա-  
ւորներուն: Անոնք լայնածաւալ եւ լրիւ  
պատասխաններով լիովին կը զոհացնեն  
իր հետաքրքրութիւնը:

Այսպիսով, մարդիկ չեն անդրադա-  
նար, որ կրցած են պիտուելն եպատակը  
ըմբռնել՝ առանց գիտնալու, թէ պի-  
տուեն ի՞նչ է: Անհեթեթ են այսպիսի  
մտքերը:

Մարդկութիւնը պէտք է վերջ տայ  
ըսյլամի քաղաքականութեան: Գլուխը  
աւագին մէջ խրելով չէ, որ բարդ իշ-  
դիրներ իրենք իրենց պիտի լուծուին, ոչ  
ալ աթոմական ուժերը ինքնիրեն պիտի  
անյայտանայ:

Սարսափինք ուժերէն, բայց ծանո-  
թանաւք անոր գաղտնիքներուն: Այն ա-  
տեն պիտի տեսնենք, թէ այլեւս պէտք  
չկայ հարցնելու, թէ ի՞նչ է կեանքը,  
մտածումը: Այդ հարցումներուն պա-  
տասխանը հոն է, ուժերին մէջ:

Հետեւեալ ուսումնասիրութիւնը փորձ  
մըն է այդ պատասխանները մեկնաբա-  
նելու: Արդի գիտնականները դեռ փա-  
տացի չեն նկատեր հոս մէջբերուած տե-  
սութիւնները: Իսկ աստղերու ծնունդի  
մասին կ'առաջարկեմ իմ տեսութիւնս,  
թէ եւ անկարելի չէ, որ այսօր իսկ գիտ-  
նականներ այդ ուղղութեամբ պրպտում-  
ներ ընեն: Նոյնը կրնանք ըսել վերջին  
«մտածումներու» տեսութեան մասին:  
Բայց կարեւորը այդ չէ: Կարեւորը՝ այդ  
եւ նոյնանման տեսութիւններու ծնունդ  
տուող մեկնակէտին իրական ըլլալն է:  
Նոյնքան իրական, որքան հիւլէական  
ուժերը:

digitised by

A.R.A.R.®



✱

Հոս գործածուող նախադասութիւններէն զրեթէ ամէն մէկը հարիւրաւոր, երբեմն հազարաւոր գրգեբու եւ ուսումնասիրութիւններու նիւթ դարձած է:

Ընդհանրապէս բանի մը համար «կ'ապրի» կ'ըսենք, երբ այդ բանը իր շրջապատին հետ փոխանակութիւն մը ունի: Ոչ-գիտնականի մը համար շատ դժուար է ապրող եւ կեանք չունեցող բաներու մէջ տարբերութիւն դնել: Ապրող էակի յատկանիշներէն կրնայ թուել ծընելու, շարժելու, շնչելու, ուտելու, մեծնալու, մեռնելու, սերնդագործելու, մտածելու եւ այլ կարողութիւնները:

Բայց գիտունի մը համար այս տարբերութիւնները հետզհետէ կը պակսին, կ'անհետանան... Եւ փաստուած է, որ այդ յատկանիշներուն մեծ մասը արդէն անկենդան աշխարհը ունի, իսկ միւս մասը (շնչել, մտածել) հասարակաց երեւոյթի մը մէկ տարրեր արտայայտութիւններն են:

Ո՛րն է այդ տիեզերական հասարակաց երեւոյթը: Ատիկա նիւթ (matter) եւ էներգիա (energy) միջեւ եղած փոխանցումներն ու ձեւափոխութիւններն են: «Էներգիա» բառը, որ զօրութիւն կը նշանակէ, պիտի նախընտրենք, քանի որ «զօրութիւն» բառը գիտականօրէն անպոյն է: Իսկ «նիւթը» փաստուած է, որ նոյնպէս էներգիա է, բայց մթերուած վիճակի մէջ:

Իբրեւ նիւթ, առնենք օրինակ, երկաթի կտոր մը: Այս մետաղի կտորին բոլոր հիւլէներուն մէջ մթերուած էներգիան եթէ կարելի ըլլար մէկ անգամէն ազատել, կ'ունենայինք բաւարար աաքութիւն, ո՛չ միայն հալեցնելու, այլեւ կազի վերածելու մեր երկրագունդը:

Այս ուղղութիւնները հիւլէական եւ ջրածնային (hydrogene) ռումբերն են:

Ամէն ինչ, որ տիեզերքի մէջ գոյութիւն ունեցած է, ունի եւ պիտի ունենայ՝ էներգիա այս երկու ձեւերու փոխանցումներուն՝ մէկ համեմատութիւնը:

Հիմնաւորելու համար այս հաստատածը, պիտի առնենք նախ՝ «անկենդան» աշխարհը, ուր՝ բոյսերը, կենդանիները եւ մարդիկ:

✱

Անկենդան համարուած տիեզերքի մէջ էներգիա եւ նիւթի փոխանցումներն ու ձեւափոխութիւնները տեղի կ'ունենան աներեւակայելի եւ հսկայական շափերով եւ, ընդհանրապէս, մեր ժամանակի հասկացողութեամբ՝ շատ դանդաղ:

Օրինակ, աստղերու արձակած ընդհանրական կարելի է հաշուել անոնց տարիքը: Մանիւկագոյն, կարճ ալիք (high frequency) ճառագայթ արձակող աստղերը՝ երիտասարդ եւ խիտ աստղերն են: Կարմիր, երկար ալիք (low frequency) ճառագայթ արձակողները՝ ծերացած եւ նօսրացած աստղերն են:

Վերջին երեք հարիւր տարիներու ընթացին, գիտուած է, որ պայթած են քանի մը կարմիր աստղեր: Կարգ մը գիտուններ հիմա համոզուած են, որ այդ մեռած աստղի կտորներն են, որ ճառագայթով պարապին մէջ, դարձած են մօտակայ աստղի մը (կամ աստղերու) արբանեակները (planet):

Ուրեմն՝ մենք հաւանաբար կ'ապրինք մեռած աստղի մը, մեր արեւուն ձգողական ուժի դաշտը ինչպէս կտորի մը վրայ: Մեր արեւը դեռ բաւական երիտասարդ աստղ մը կը նկատուի, եւ, գիտնականները անոր ճառագայթումը, այսինքն՝ նիւթէն էներգիա փոխանցումը ընդօրինակած են մեր ջրածնային ռումբի շղթայական հակադէպութիւններով (chain reactions):

Փաստուած է ասկայն, որ դարերու ընթացքին ո՛րքան արեւի նիւթէն էներգիա փոխուի, ա՛յնքան կը նօսրանայ անիկա եւ իր ճառագային ուժը կը պակսի: Արդիւնքը ա՛յն կ'ըլլայ, որ մենք ամէն տարի մէկ մեթր կը հեռանանք արեւէն... ուրեմն՝ ամէն տարի մեր երկրի կեղեւք քիչ մը աւելի կը պաղի, կը խտանայ եւ կը կարծրանայ:

Բայց երբ աատիողիտակները տիեզերքին ուղղենք, միայն կարծիք եւ մաշակեմք աստղեր չէ, որ կը տեսնենք, այլ՝ կը տեսնենք ամէն տարիքի եւ մաշակեմք երիտաւորդ մանրակագոյն աստղեր: Ամէն տարիքի աստղերու զոյաւորութիւնը անմիճելի եւ փաստաւած իրողութիւն է, ինչպէս նաեւ կարծիք աստղերու մահը: Այս փաստերն են, որոնք զիտունները մղեցին բախու (մօտ 20 տարի առաջ), թէ մանրակագոյն այս աստղերը նո՛ր կը ծնին, նո՛ր կը ստեղծուին:

Յառաջիկայ հարեւրամիակներուն, գիտուններուն զործը պիտի բլլայ լուծել անոնց ծնունդի հարցը: Այնչիւս յաջողեցաւ նիւթը էներժիկ վերածել: Բայց ազատ էներժիկն միւլքացնելու համար զեռ բանակ մը Այնթաւներու կարեքը կայ...: Ուրիշ խօսքով՝ զիւրին չէ ստեղծել մետաղի կտոր մը: Այսօրուան հասկացողութեամբ՝ մեր արեւի ճառագայթներու էներժիկն ամբողջութեան հաւասարող էներժիկ մը պէտք է կարողանանք վերարտադրել տարրալուծարանին մէջ, որպէսզի այդ մետաղի կտորը ստեղծելու համար ունենանք բաւարար տաքութիւն, պայմանաւ, որ գտած ըլլանք այդ տաքութիւնը նիւթացնելու կերպը:

Տեսնե՛ք, թէ որքան էներժիկ պէտք կայ փոքր մետաղի կտոր մը ստեղծելու համար: Իսկ եթէ նկատի առնենք, որ աստղ մը այդ մետաղի կտորէն քանի միլիոն անգամ աւելի մեծ է, զաղափար կը կազմենք այդ աստղը ստեղծելու անհրաժեշտ էներժիկ քանակին մասին...: Աստղերու ծնունդի մասին տեսութիւններ շատ կան: Օրինակ, ա՛յն տեսութիւնը, որ ազատ էներժիկն ուրիշ գերազոյն ձեւի մը գոյութեան կարելիութիւնը կ'առաջարկէ. ձեւ մը, որ զեռ անմահօթ մնացած է գիտուններուն եւ կը տարբերի ճառագայթումի կամ ձգողական եւ մագնիսական ուժերու էներժիկէն, Ուրիշ գիտնականներ, ընդհակառակն, կը պնդեն, թէ ձգողական ուժի զաւտերը շատ աւելի հզօր են, քան ինչ որ մենք կը հաշուենք: Մեկնելով այս

տեսանկիւնէն, կ'առաջարկենք «Ձգողական զաւտերու քարդայքներ» անուն մեր տեսութիւնը, որ հետեւեալ ձեւով կը բացատրէ աստղի մը ծնունդը:

Այս տեսութիւնը հասկնալու համար, նախ պէտք է ըսել, թէ այսօրուան գիտութիւնը թէեւ կ'ընդունի աստղէ մը արմատալուծ ճառագայթին ալիքային էներժիկ ըլլալը, բայց նոյն ատեն կը պնդէ, թէ այդ ճառագայթին մէջ գոյութիւն ունին մեծ թուով նիւթի (մթերութեան էներժիկ) փշրանքներ (particles): Այս պատճառով է, որ ճառագայթ մը իր ուղղութիւնը կը շեղէ, երբ անցնի ձգողական ուժի զաւտէ մը:

Փաստացի երեւոյթ է, որ աստղերու իրարմէ հեռաւորութիւնը կը ճշգրտի իրենց ձգողական զաւտերու փոխադարձ հաւասարակշռութեամբ:

Օրինակ, եթէ նկատի առնենք հաւասարակշռում եռանկիւն մը, որուն զաւթները աստղերէ կազմուած են (մօտաւորապէս նոյն խտութեամբ եւ մեծութեամբ աստղեր), պիտի տեսնենք, թէ այդ եռանկիւնի ճիշդ կեդրոնը (կորիզը) անոնց ձգողական զաւտերը այնպիսի մեծով մը կ'ազդեն, որ Հոն ինկող նիւթի փշրանք մը չկարենալով այս կամ այն աստղին վրայ իյնալ՝ պիտի սկսի իր անշարժացած առանցքին շուրջ դառնալ: Ասիկա ձգողական զաւտերու բարդոյթին ամենապարզ օրինակն է:

Բարդոյթի երեք աստղերը կրնան տարբեր ուժի ձգողական զաւտեր ունենալ (նայած իրենց խտութեան): Իրենց եռանկիւնը կը դադրի հաւասարակշռում ըլլալէ եւ, ըստ զաւտերու ուժին, իր կողմերու հեռաւորութիւնները անհուն թիւով համեմատութիւններ կ'առնեն:

Սրեք աստղերէ բաղկացած բարդոյթի մը մէջ գոյութիւն ունին երեք գոյթ աստղերու զաւտային յարաբերութիւններ: Իւրաքանչիւր զոյգ ունի իր զաւտային հաւասարակշռութեան դօտին: Բարդոյթի կորիզը այդ երեք դօտիներու խաչաձեւման վայրն է:

Տիեզերքի ձգողական զաւտի. բարդոյթները կազմուած են երեք կամ քսան

աստղերէ։ Որքան շատնայ անոնց թիւը, այնքան կը մեծնայ բարդոյթի կորիզին մէջ ծնուելիք աստղին ծաւալն ու խտութիւնը։ Այսպէս, իրական բարդոյթները կրնան ըլլալ բրդաձեւ, պրիսմակաձեւ, եւայլն։

Փաստացի իրողութիւն է այն, որ վերջերս, գիտունները յաջողեցան, զօրութեամբ մագնիսական դաշտի մը մէջ, երկու «կամմա» ճառագայթներու ընդհարումով նիւթի «Պեթա» փշրանքներ ըստեղծել։ Այս փշրանքները ընդհարումի շրջանակէն դուրս ժայթքելով՝ կը հետեւին մագնիսական դաշտերու ուղղութեան։

Առնենք հիմա բարդոյթի երկու մօտիկ գազաթններուն աստղերը։ Անոնց ճառագայթները ընդհարում կ'ունենան նաեւ այն գոտիի մէջ, ուր իրենց ձգողական դաշտերը իրար կը հաւասարակշռեն։ Հոս, շնորհիւ գոտիին, ճառագայթներու ընդհարումէն յառաջացած նիւթի փշրանքներէն մաս մը կը կորսուի պարապին մէջ, իսկ ուրիշ մաս մը, մենք արդարեւ թեմամբ հետեւելով հաւասարակշռութեան գոտիին, կը հասնի կորիզ, ուր բախում կ'ունենայ միւս հաւասարակշռութեան գոտիներէն հոն հասած նիւթի փշրանքներուն հետ։

Նայած բախում ունեցող փշրանքներու թիւին եւ արագութեան, կը կազմուին այս կամ այն քիմիական տարրի (element) առաջին հիւլէները։ Այս հիւլէները պատճառ կը դառնան, որ բարդոյթի կեդրոնը հասնող նոր նիւթի փշրանքները աւելի շուտ հիւլէանան։ Այս ձեւով, դարեւրու ընթացքին, կը մեծնայ կեդրոնական կորիզը։

Նշենք, որ այս կորիզի կազմութիւնը անտեսանելի է՝ քանի որ բարդոյթին կեդրոնը ոչ մէկ ճառագայթում տեղի չ'ունենար։ Այսինքն՝ եթէ աստղաբաշխները նոյնիսկ հաշուած ըլլային այդ կորիզի կազմութեան ճիշդ տեղը եւ հոն ուղղած ըլլային իրենց հեռագիտակները, նորէն խորին մթութենէ դատ բան մը պիտի չտեսնէին...։

Ըսինք, թէ դարերու ընթացքին բար-

դոյթի կեդրոնը կազմուած աստղային կորիզը երթալով կը մեծնայ։ Բարդոյթին կեդրոնը զտնուող կորիզին առանցքը, ձողական դաշտերու աղեկցութեան տակ, կ'անշարժանայ եւ կորիզը կը սկսի դառնալ այդ առանցքին շուրջ։ Միանալով խտացող կորիզի հիւլէներուն մագնիսական դաշտին, այս հոլովոյթը կը ստեղծէ կորիզի ինֆնուրյն օգնական դաշտը։ Այդ պահուէն է, որ ձգողական դաշտերու բարդոյթը կը լուծուի։ Բարդոյթի աստղերու ձգողական հաւասարակշռութիւնը խախտելով, բարդոյթի գազաթններուն զտնուող աստղերը կը սկսին իրարմէ հեռանալ, մինչեւ որ աստղային մաս կազմեն ուրիշ բարդոյթի մը։

Կը սկսի հակառակ երեւոյթը։ Նոր ստեղծուած հակառակ կորիզի ձգողական դաշտի աղեկցութեան տակ, կորիզին մակերեսին վրայ գտնուող հիւլէի շփերածուած մասնիկները կ'արագանան եւ կը ոժրակոծեն մակերեսային հիւլէները՝ շփառակալ հակաղեկցութիւններ յառաջանելով, այսպէսով նոր կորիզը կը սկսի ճառագայթել զուտ մասնիկալիւրոյ մը։ Նոր աստղը ծնած է։

Այս ձեւի աստղի մը ստեղծումը կրնանայ ապագային փաստացի իրականութիւն դառնալ կամ չդառնալ։ Մեզ հետաքրքրողը այն է, որ կենսիկ յատկանիւններէն ծնունդը եւ մանր նոյնպէս կը զտնենք անկենդան կարծուած տիեզերքին մէջ։

Տեսանք ուրեմն, թէ ինչպէս աստղերը (եւ անոնց մոլորակները) այսինքն՝ ամբողջ անկենդան աշխարհը, մթերուած եւ ազատ էներգիայի փոխանցումներուն եւ ձեւափոխութիւններուն տարրեր համեմատութիւններն են։

\*\*\*

Առնենք հիմա բուսական եւ կենդանական աշխարհը։

Որեւէ կենսաբանութեան լուրջ գիտնականը մանրամասն կ'անդրադառնայ նիւթի եւ էներգիայի փոխանցումներուն։ Արդի կեն-

աբանները փաստած են, թէ բոլոր եւ կենդանի ուրիշ բան չեն, եթէ ոչ, նիւթի եւ էներգիի փոխանցումներուն մէկ ներկայութիւնը:

Կենսաբանական քիմիադիտութիւնը այսօր հասած է նուաճումներու աշխարհի՝ կատարելութեան մը, որ մարդիկ, մեկնելով քիմիական պարզ տարրերէ՝ սրուակներու մէջ սնունդ կը պատրաստեն: Նոյնիսկ կրնանք առանց ծիծաղելի զանալու վախի հաստատել, թէ սկսած են սրուակներու մէջ, բլիշներու հիմքը կազմող փոքրուկազմաի պատրաստութեան: Բաւ է յիշել, որ զեռ վերջին տարիներու Նոպէլեան մրցանակաւոր մը յաջողած էր կորիզային թթու պատրաստել (nucleic acid):

Բայց եւ այնպէս, ծանրանալէ առաջ մարդկային աշխարհի վրայ, պիտի ուզէի, շատ արագ ակնարկով մը, եզրակացութիւններ հանել բոյսերու եւ կենդանիներու աշխարհէն:

Ըսինք, որ երկրագունտը ամէն տարի արեւէն մէկ միլիարդ կը հեռանայ: Փառնի մը հարկէր միլիոն տարի առաջ մեր մայրաքաղաք շատ աւելի տաք էր, քան հիմա: Մակերեսը կէս հարած վիճակի մէջ, Ասիկա հրաբխային լրջանն էր, ուր բուսական կենսական գոյութիւն չունէր: Բայց արեւէն հեռանալով, հեազհետէ երկրագունտի կեղեւը պաղեցաւ, խտացաւ եւ կարծրացաւ: Շատ մը հեղուկներ կարծրացան եւ կարգ մը կազեր դարձան հեղուկ, ինչպէս ովկիանոսի ջուրերը: Սակայն ուրիշ կազեր՝ թթուածին, բնածխային կազ, բորակածին (nitrogene), եւայլն, յամառեցան եւ մնացին օդին մէջ: Օդին մէջ գտնուող թթուածինը հիւլէական կառոյց ունեցող չափազանց գործունեայ տարր մըն է, որ շատ դիւրին կը միանայ ուրիշ շատ մը տեսակի տարրերու հետ: Ասիկա քիմիապէս քայքայումն էր կոչենք (oxydation): Բոլոր այրումները էներգի կը պատրաստեն:

Բոյսերու մէջ նիւթի եւ էներգիի փոխանցումներու կեղերոնատեղին տեսակներու բլիշներն են: Տերեւի բլիշները արեւի ճառագայթներու էներգի կ'օգ-

տագործեն արմատներէն հասած ջուրը տարադադրելու համար, կազմուած գծնող ջրածինը, միանալով օդէն եկած բնածխային կազին, կը կազմէ բլիշին սնունդը (glucide): Բլիշը այդ սնունդը կ'այրէ՝ գլիկոլութեամբ՝ ներս եկած թթուածինով: (Բոյսերու շնչառութիւնը կը տարբար բնոյթ չունի, այլ կազերու յարատեւ հոսանք մըն է օդին եւ բլիշին միջեւ): Կը ստեղծուի էներգի, որը նետեւալ ձեւերով կ'օգտագործէ բլիշը:

Ա՛յ — Այրումի էներգիէն մաս մը բլիշը նիւթի կը վերածէ եւ կը շարունակէ սնունդի դեռեւ շարած մնացորդներուն հետ, առանց նիւթը մեափոխելու եւ իր փոքր-միջոցային նմանցնելու համար: Այսպէսով, բլիշը կրնայ երկարել կամ բազմապատկուել (աճումի երկու ձեւերը):

Բ՛ — Բլիշը այրումի էներգիէն ուրիշ մասով մը կը պաշտպանէ իր ներքին կազմակերպութիւնը, չէզոքացնելով իր քիմիական անկախ խմբաւորումներու միջեւ գոյութիւն ունեցող միաձուլող էներգիաները:

Գ՛ — Այրումի էներգիէն ուրիշ մաս մըն ալ բլիշը կը փոխանցէ իր գրաջի բլիշներուն, եթէ արագօրէն տեղափոխուելու (սերնդագործութեան բլիշները) կամ ներքնապէս բաժնուելու (սերմերու աճում) կարիքը կայ:

Դ՛ — Այրումի էներգիին մնացածը կարգ մը բլիշներ տաքութեան կամ պըսպղուն լոյսի ձեւով դուրս կը ճառագայթեն (հոս կը վերադառնան աստղերու հետ բոյսին նմանութիւնը):

Ի՛ր տուած է, որ այդ նիւթի եւ էներգիի փոխանցումներու որոշ համեմատութիւններ, զորս մենք բոյսին գլխանքը կը կոչենք, հակամէտ են ինքնապաշտպանութեամբ յարատեւելու:

Այսպէս, եթէ բոյս մը գոց տուփի մէջ գնենք եւ տուփին մէկ կողմը ծակ մը բանանք, ուրկէ լոյս երեւայ, պիտի տեսնենք, թէ բոյսը դէպի լոյս պիտի աճի, իսկ երբ ծակին տեղը փոխենք, բոյսը կը կրկին աճումի ուղղութիւնը պիտի փոխէ, ուղղուելով միշտ դէպի լոյսը:

Այս աճումի ուղղութեան փոփոխութիւնները արդիւնք են բոյսի որոշ բնական երկարութիւն, իսկ հակառակ կողմի բնական գարգացման կասեցումին: Բնական երկարացումը եւ կասեցումը իրարու վրայ գումարուելով՝ կը ստեղծուի շարժումը: Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ էներգիի եւ նիւթի փոխանցումներու որոշ համեմատութիւններ, գոյատեւելու համար, բոյսին կը ստիպեն շարժիլ:

Միխոնուոր տարիներու ընթացքին՝ արեւը կը շարունակէր հեռանալ: Ովկիանոսի ջուրներու գորշիւնները կը դանդաղէր, յարգաւատ հեղեղներն ու հողին ջուրը քիչ պակսէին: Բոյսերու համար աւելի ու աւելի կը դժուարանար սնունդ գտնել եւ սնունդէ շատերը կ'անհետանային:

Բայց արեւի հեռացումը եւ ճառագայթներու տկարացումը նոյն ատեն պատճառ կը դառնային, որ Նիւթի եւ էներգիի փոխանցումները տեղ-տեղ ու նոր համեմատութիւններով աւելի արագ կատարուին: Ովկիանոսներու յատակը մէլուկ կու գար բոյս-կենդանիներն եւ վերապէս կենդանիներ, որ կրնար բոյսերէն շատ աւելի արագ շարժիլ, նոյնիսկ տեղափոխուիլ երկրի մակերեսին վրայ, օր-նուրէր դառնելու համար (բոյսեր կամ ուրիշ բուսակեր կենդանիներ): Նոյն տեսակի կենդանիներու ծնունդը, կենդանիի մը սերնդագործութեան մանրամասնութիւնները՝ իրենց էներգիի փոխանցումներով, կրկնութիւն են յառաջացած բոյսերու մօտ պատահածին: Արդի կենսաբանները նաեւ կ'ընդունին, թէ բոյսի եւ կենդանիներու բնական հիմքը կազմող փրօքթըրալամն նոյնն է երկուքին մէջ:

Սկսած կենդանական աշխարհի դանդաղ ճյուղոյթը: Նոր տեսակի կենդանիներու ծնունդը (mutation) դիֆուզիոնային կը բացատրուի արեւի ճառագայթներու, արեւի ձողողական ուժի, երկրի ներքին հնոցներու տկարացումով: Նիւթի եւ էներգիի փոխանցումներու արագութիւնն էր, որ միշտ կը փոխուէր: Որքան երկրագունդի մակերեսը պաղէր, այնքան կ'արագանային այդ փոխանցումները: Այդ-

պէս է, որ յայտնուեցաւ զգացող կենդանիի բնական մէջ կատարուող Նիւթի եւ էներգիի փոխանցումներու արագացոյցը: Բայց, որ պարտադիր կը դարձնէր բնական մէջ մեծ քանակութեամբ թթուածինի մշտական ներկայութիւնը: Բայց թթուածինի աշուտները նոյն ատեն կը յառաջանէին բնական մէջ մեծ քանակութեամբ թունաւոր բնածխային կազեր, զորս պէտք էր նոյն արագութեամբ արտաքսել: Այս փոխադրուելիք կազերու հետզհետէ անոյ քանակը եւ փոխադրութեան շատ արագ կատարուելու կոթիքը, հետզհետէ ստիպեցին, որ կենդանիի բնական թիւերէն խումբ մը մասնագիտանա՝ այս պաշտօններուն մէջ: Դարերու ընթացքին զարգանալով, անոնց խմբաւորումները դարձան միզի ծանօթ արեւն շրջանառութեան կեդրոնացած դրութիւնները (որ բոյսերու քով գոյութիւն չունին):

Միայն փոխիւփոխ եւ զօրաւոր պըրկումներ եւ թուլացումներ կատարելու ընդունակ բնական մկանային խումբ մը (սիրտը) ի վիճակի էր շրջանառութեան մէջ դնելու այդքան կազեր դէպք մարմնի իւրաքանչիւր բնական փոխադրող միջավայր մը (արեւն): Սիրտը իր արագ եւ կշռութեամբ պրկումներով բնական կը հասցնէ ո՛չ միայն թթուածին, այլեւ արեւն մէջ անցած սնունդը:

Կենդանիի շնչառութեան սկզբունքը նոյնն էր նաեւ բոյսին քով, բայց կենդանիին եղած կազային մեծածաւալ փոխանցումները՝ անհրաժեշտ կը դարձնէին զօրաւոր օդի շարժակ մը (pump): Թոքերէն արեւն եւ արեւն ճամբով բնական հասնող թթուածինը, բնական կ'օգտագործէ այրելու համար նոյնպէս արեւն համբով իրեն հասած սնունդը: Այրումը կը ստեղծէ էներգի: Այս ձեւով ստեղծուած էներգիին բնական կողմէ օգտագործուելու զանազան ձեւերը, զորս արդէն թունցինք բոյսերու բաժնին մէջ: Հոս միայն աւելցնենք կարեւոր պարագայ մը՝ մկանային բնական կեդրոնային աշխարհի էներգիան, որ փրօքթըրալամի բաղադրութիւնը կը խտացնէ:

Մարմնին մէջ ազատ էներգիի լուսա-  
գոյն օրինակը՝ ջրային կամ զգացական  
հոսանքն է։ Գիտունները այս հոսանքը  
չստ կը նմանցնեն երկարական հոսան-  
քին։ Զօրաւոր ձայնի մը պատճառած ա-  
կանջի թրթռացումներու էներգիան, կեն-  
դանիկի մօտ, շիզֆրենիա մարմնի կը հասնի  
ուղեղին։

Արդի կենսաբանները եւ ուղեղի մաս-  
նագէտները կը պնդեն, թէ ուղեղի յիշո-  
ղական բջիջը հասնող զգացական էներ-  
գիան օրկանային մագնիսական ձեւով  
կ'արձանագրուի բջիջի կորիզային կեն-  
սաինքնին մէջ, յատկապէս կենսա-  
նիւթի մանր մեկուկերով։ Այդ ձե-  
ւակերպումները ընդունակ են հրկար  
ժամանակ անվթար մնալու, ա՛յնքան եր-  
կար, որքան կենդանին կրնայ ձայն մը  
կամ պատկեր մը պահել իր յիշողութեան  
մէջ։ Այս կենսանիւթի ձեւակերպումին  
սկզբունքը նորագոյն արուեստական ու-  
ղեղներու մէջ (computers) կը կիրառ-  
վուի։ Սակայն արուեստական ուղեղնե-  
րու անսահման յիշողութիւնները փաստ  
մը չեն, թէ կենդանիի (եւ հետազային  
մարդու) ուղեղին մէջ ալ մթերումը նոյն  
ձեւով կը կատարուի։ Արդի կենսաբան-  
ներու այս տեսութիւնը, ցնոր անօրինու-  
թիւն, կրնայ ճիշդ կամ սխալ ըլլալ։  
Անձնապէս կասկածներ ունիմ, որ սխալ  
է։ Հիմնական կասկածս կ'ուղեմ օրինա-  
կով մը դրսեւորել։

Շուն մը ի վիճակի է տասը տարե-  
ներէ ի վեր կորսնցուցած ախրով ձայնը  
ճանչալ, երբ ան խօսի փակ դրան մը  
ետեւէն։ Երբ նկատի առնենք, թէ շան  
յիշողութեան բջիջներու կենսանիւթը  
զրեթէ ամէն վայրկեան վերանորոգուե-  
լու (արեան բերան անունդի ախրումին  
էներգիայով) եւ նոր ձեւակերպումներու  
(ուրիշ արտաքին էներգիի բազմապե-  
կան մթերումները) ենթակայ է՝ զիչ մը  
դժուար կրնանք հաշուել բջիջին մէկ  
անկէնը պահուած ձեւակերպումին  
տասը տարուան անազարա մնալուն հետ։

Ասիկա իբրեւ մեկնակէտ ունենալով՝  
կ'առաջարկենք մեր անձնական տեսու-

թիւնը, որ կարծիք մը ըլլալէ աւելի՝ հիմ-  
նաւորուած համոզում մըն է։

Ո՛րն է այն էներգիի մթերումի ձե-  
ւը, որ կրնայ ժամանակի հարուածներուն  
զիմանալ՝ եթէ ոչ նիւթր։ Զգային բջի-  
ջներու շղթայակապ հոսանքը թէեւ ճանչ-  
ցուած է իրրեւ ալիքային էներգի, բայց  
պէտք է, որ իր մէջ պարունակէ Բիւրի  
հետքեր։ Երբ այս հետքերուն շնորհիւ  
ջրային հոսանքը յիշողական բջիջ կը  
հասնի, հոն կը վերածուի Բիւրի փշրան-  
քի (փշրանքներ, որոնց մեծութիւնը դա-  
տելով բջիջ հասած էներգիի քանակէն,  
կարելի չէ տեսնել աշխարհի հզօրագոյն  
մանրագիտակով)։

Ուրեմն, ականջի թրթռացումներու  
էներգիան, երբ խողովան ջրերու ճամ-  
բով հասնի յիշողութեան բջիջ՝ կը վե-  
րածուի նիւթի փշրանքի, բայց ոչ ամ-  
բողջութեամբ։ Էներգիի յաւելեալ մասը  
կը հասնի միւսեւ ուղեղի մղիչ բջիջնե-  
րուն (motive) կեդրոնը։ Մղիչ բջիջը,  
պահելու համար իր հաստատակցու-  
թիւնը, ազատ կ'արձակէ համապատաս-  
խան էներգիա մը։ Այս մղիչ էներգիան ու-  
րիշ ջրերու ճամբով կը հասնի կենդանիի  
մկանները։ Նայած ձայնի ուժգնութեան՝  
տարբեր մղիչ կեդրոնի բջիջներ կ'ազդ-  
ւին եւ տարբեր մկաններու խումբեր կը  
պրկուին։

Որքան ալ այսպէս ըլլան կենդանիի  
զգացումները՝ զգացական մեքանիզմը կը  
մնայ նոյնը։ Կենդանիի հինգ զգայա-  
րանքներու ճամբով ուղեղ հասած էներ-  
գիան յիշողութեան բջիջներու մէջ նիւթի  
փշրանքներու կը վերածուի։ Այդ մթե-  
րումները կը կատարուին ուղեղի կեդե-  
ւին յիշողութեան բաժանմունքներուն մէջ  
եւ ներքին յաւելեալ էներգիի հոսանքնե-  
րով կրնան ազդել մղիչ կեդրոնին վրայ։  
Այդ պարագային է, որ կենդանին կ'ու-  
նենայ հակազդող շարժում մը։

Հոս լենք ուղեր Ժանրանալ հակազդող  
շարժումներու ուրիշ ձեւի մը վրայ, ան-  
դրադարձ շարժում (reflex), որ կ'են-  
թադրէ էներգիի աւելի պարզ փոխան-  
ցումներ։ Ինչպէս բոյսերու մօտ նիւ-  
թի եւ էներգիի փոխանցումներու սրու-

համեմատությունները գոյատևելու համար բոլորը շարժումի կը մղվին, այնպէս ալ, կենդանիներու մօտ, այդ փոխանցման ուղիչ համեմատությունները գոյատևելու համար կենդանիի մղիչ բնական մէջ կ'արձակէին էներգիան, որոնք մեղի ծանօթ են կենդանիի շնորհիւ մղումները կամ «բնագոյները» անուանաւ:

Հետագայ միլիոնաւոր տարիներուն, երբ արեւի աստիճանական հեռացումով կենդանիի ուղեղին մէջ նիւթի եւ էներգիի փոխանցումները կը բազմապատկուէին, յատկացնելով նոր համեմատություններ, կարգ մը բլիշներ, որոնք էներգիի փոխանակություններ կ'ընէին միայն մղիչ բլիշներու հետ, սկսան էներգիի կամուրջներ ստեղծել միաժամանակ ուղեղ հասած ժայնի փշրանքներ պարունակող յիշողական բլիշներուն եւ լոյսի պատկերին փշրանքները պարունակող յիշողական բլիշներն միջեւ:

Կամքի բլիշներն էին անոնք:

Մնած էր նախամարդը: Ըստ գիտածներուն, նախամարդու մտածելու կարողութիւնը շատ մօտ է մէկ տարեկան մանուկի կարողութեան:

Եթէ մանուկին մօմ մը ցոյց տանք եւ «Թաթա» ըսենք, մանուկի յիշողութեան երկու բլիշներուն մէջ կը նիւթանան մոմի պատկերին եւ «Թաթա» ձայնի էներգիաները, այնպէս մը, որ կամքի բլիշ մը կամուրջ կը ստեղծէ այդ երկու յիշողական բլիշներուն միջեւ, հանդիսանալով էներգիի հաղորդակցութեան ուղղակի կամ հակադարձ միջոց մը:

Առկէ ետք, երբ մանուկին առանց բան մը ցոյց տալու «Թաթա» ըսենք, այդ ձայնը նիւթանալով կը գումարուի անոր յիշողական բլիշին մէջ գանձուող «Թաթա» փշրանքին վրայ: Փշրանքը, պահելու համար իր հաւասարակշռութիւնը, կը ճառագայթէ համապատասխան էներգիի մը, որ մէկ կողմէ կը վերադառնայ հոգե-յոդական (psycho-auditive) բլիշներուն, զգացնելով մանուկին, թէ այդ ձայնը լսած է արդէն, իսկ միւս կողմէ՝ կը հասնի կամքի կամրջող քիթը: Կամքի

բլիշը, նայած մանուկին ուղեղուն կամ չուղեղուն, կընայ իրեն հասած էներգիի փոխանցել զէպի միւս կողմի մոմի փշրանքացած պատկերը պարունակող յիշողական բլիշը, կամ բնականաւոր, յիշողացնել այդ ճառագայթումի էներգիան: Մանուկի «ուղեղուն» պարագային, «Թաթա» ճառագայթումի էներգիան ուղղակի անցնելով կամքի բլիշի ընդմէջէն՝ կը հասնի յիշողական երկրորդ բլիշը, ուր նիւթանալով կը գումարուի մոմի պատկերի» փշրանքին վրայ: Այս փշրանքը, իր կարգին, պահելու համար իր հաւասարակշռութիւնը, կը ճառագայթէ համապատասխան էներգիի մը, որ հասնելով մանուկի հոգե-տեսողական (psycho-visual) բլիշին, կը պատկերացնէ մոմը (սակի մանուկի մտապատկերին կազմութիւնն է):

Նոյնպէս, երբ մանուկին մօմ մը ցոյց տանք «Թաթա» պիտի ըսէ: Նոյն ձևի մտածումներ ունէր նախամարդը, այսինքն՝ անոր ուղեղին մէջ ալ ձայններ ի վիճակին էին պատկերներ ստեղծելու եւ, փոխադարձաբար: Գլխաւորաբար ժյոյ է, որ մարդը կը զանազանէ կենդանիներն:

Հետագայ հարիւր հազարաւոր տարիներու ընթացքին եւ մինչեւ այսօր, մարդոց ուղեղներու մէջ նիւթի եւ էներգիի փոխանցումները օկտան ռանձարձակ ընթացք առնել: Հիմա, «արդի» մարդու յիշողութեան բլիշներուն մէջ նիւթացած էներգիաները հանգիստ չունին: Արտաքին ձայնի մը կամ պատկերի մը անպայման պէտք չկայ այլեւս: Ինչպէս կենդանիներու մօտ նիւթի եւ էներգիի ձեւափոխումներու որոշ համեմատությունները, գոյատևելու համար, կենդանիի մղիչ կեդրոններուն մէջ քնազգային էներգիաներ կ'արձակէին, այնպէս ալ, մարդոց մօտ, նոր, աւելի արագ էներգիի ձեւափոխումները, գոյատևելու համար, ենթադրական ցանկութիւններու կեդրոնները կ'արձակէին՝ փափաքներու էներգիաներ կամքի կամրջող բլիշներուն վրայ:

Այսպէս, եթէ դարձեալ առաջուան

օրինակը առնելով, փափաքինք բթան մը ըսելն, մեր ենթագիտակցական փափաքի էներգիան կը հասնի մեր կամքի ընդհանրու-  
նէ, օրինակ, կրնանք մեր ուղեղին մէջ՝ «մոմ» ձայնը լսել: Այդ կը նշանակէ, թէ մեր փափաքի էներգիան անցնելով այն կամքի կամքընդ ընդհանր, որ իրարու կը կապէ «մոմ ձայնի» փշրանքը եւ «մոմ պատկերի» փշրանքը պարունակող երկու յիշողական ընդհանր, նիւթացած եւ գու-  
մարուած է «մոմ ձայնի» փշրանքին վը-  
րայ: Անցնելով քիչ առաջ նկարագրուած փոփոխութիւն, այս ձայնի փշրանքը կը ճա-  
ռագայթէ մոմի ձայնը մէկ կողմէ մեր հոգեւորական ընդհանր մէջ, միւս կող-  
մէ՝ ետ՝ դէպի մեր կամքընդ կամքի ըն-  
դը: Կամքի ընդը կրնայ շեղագնացել այդ հակադարձ էներգիան, կամ ալ նոյնու-  
թեամբ փոխանցել «մոմ պատկեր» փշը-  
րանքը պարունակող յիշողական ընդհանր: Վերջին պարագային՝ ոչ միայն մոմ կը  
լսենք, այլեւ մեր հոգեւորական ընդհանրը  
ընդհանր մէջ կը «տեսնենք» մոմի պատկերը:  
Կամքի ընդընդ ուրեմն հետզհետէ  
կը մասնագիտանան ենթագիտակցական  
մղումները Ֆրիդրիխ Կոբնիսի  
թեան վերածելու, կամ, ընդհակառակն,  
«մոմանգ» մղումները շեղագնացելու  
մէջ:

Մտածումը եւ երեւակայութիւնը  
պատկերներու հաւաքածոներ են: Երբ  
մեր ուղեղը արթուն է, այսինքն՝ ընդու-  
նակ գուրսի հետ էներգիի փոխանցում-  
ներ կատարելու, կամքի ընդընդ են, որ  
այդ փոխանցումները իրարու կը կապեն  
կը կազմակերպեն մէկ կամքի ընդընդ  
միւս կամքի ընդընդ անցնող էներգիի շեղ-  
թայեղակա հակադրեցութիւններով:

Երբ ուղեղը քուրի մէջ է, կամքի ըն-  
դընդներու մեծ մասը վերածուած է էներ-  
գիի փոխանցումներու տկամայ շեղութի-  
ւոյ: Կամքի ընդընդներու կամքընդները  
կազմակերպելու կարողութիւնը շեղ-  
թայեղակա է: Ասոր կարկառուն փառքը ու-  
նինք երազներու մէջ, երբ, օրինակ,  
սպասուած կատու մը դիտելու բաւարա-  
րութիւնը կ'ունենանք աջոր մը պատ-  
կերացնելով եւ երբ այդ աջորը զրկենք՝

կատու մը զրկած ըլլալու զղացումը  
կ'ունենանք: Հոս բացայայտ կամքընդ  
սխալ կայ: Այսինքն՝ խնդրոյ առարկայ  
կամքի ընդընդ, փոխանակ «կատու ձայ-  
նի» փշրանքի ճառագայթումը կամքընդ  
«կատու պատկեր» պարունակող յիշ-  
ողական ընդընդ, կ'ուղղէ դէպի այլ կամ-  
քի ընդընդ, որոնցմէ մէկը փոխա-  
ցումի նոյնքան արտառոց սխալով մը  
աջորի պատկերին փշրանքը պարունա-  
կող յիշողական ընդընդ ճառագայթել կու-  
տայ աջորի պատկերը մեր հոգեւորա-  
կան ընդընդ մէջ:

Իսկ կամքի ընդընդներու միւս մասը  
կը փոքրեն, երբեմն յուսահատութիւն,  
կարգի բերել ենթագիտակցութեան  
պոսթկոնիւմները (ուսասպառ ընդը երազ-  
ները):

Մարդու ենթագիտակցութեան ընդը-  
նդներու մէջ փշրանքացած է ցանկութիւն-  
ներու, տեսչիւն, հակումներու եւ յու-  
շերու հարստութիւն մը: Այս հարստու-  
թիւնը կը ստացուի մասամբ ժառանգա-  
բար, մասամբ միջավայրէն: Օրինակ,  
երազի պարագային, կը բուէ, որ տար-  
տամ զղացում մը (ներքին էներգի) որեւէ  
պատճառով ազատ արձակուի ուղեղի են-  
թագիտակցութեան մէջ, որպէսզի այդ  
էներգիան, ուղեղի «յիշողութիւն» կամ  
«երեւակայութիւն» կոչուած բաժնին-  
քու ընդընդներու մէջ նիւթացած փշրանք-  
ներուն ճառագայթել տայ բնութագր  
պատկերներու եւ ձայներու շարքով  
մը:

Երբ փափակելու համար մեր տեսու-  
թիւնը, տեսանք, թէ ինչպէս գուրսի է-  
ներգիան կ'արմատանան մեր ուղեղին  
մէջ փշրանքներու ձեւով եւ կամքի ընդը-  
նդներու շարքիւն այդ փշրանքներու ճառա-  
գայթումն է, որ մեզ մտածում կը կո-  
չենք: Սակայն տրուած ըլլալով, որ այդ  
փշրանքի վերածուող էներգիի քանակը  
ընդընդ է, հարց կը ծագի, թէ երբեւեց  
մարդկութիւնը ի վիճակի պիտի ըլլայ  
կատարելագործած որեւէ միջոցով տես-  
նել այդ փշրանքը: Իմ կարծիքովս, de-  
terminisme-ի հարցը հոս չառ լուրջ է,  
այսինքն՝ փշրանքը այնքան փոքր է, որ



նոյնիսկ հեռուոր ապագային, դինք տե-  
սանելի դարձնելու որեւէ փորձ անուղ-  
ղակիորէն ազդելով իր վրայ, պիտի ձա-  
խողի:

Սակայն, ինչպէս սկիզբը ըսինք, կա-  
րելորդ մեր տեսութեան ճիշդ կամ սխալ  
ըլլալը չէ, այլ ա՛յն դիտակցութիւնը, թէ  
ինչպէս էներժիի եւ նիւթ փոխանցում-  
ներու որոշ համեմատութիւններ մենք  
տիեզերքի մէջ՝ աստղ կը կոչենք, բոյսե-  
րու, կենդանիներու եւ մարդոց բջիջնե-  
րու մէջ՝ կենսք կը կոչենք, իսկ ուղեղի  
բջիջներու մէջ՝ մտածում:

Էներժիի ազատ եւ մթերուած (նիւթ)  
ձեւերը, իրարմէ անկախ գոյութիւն չեն  
կրնար ունենալ եւ մէկը ծնունդ կու տայ  
միւսին: Հոս կը ծագի փիլիսոփայական  
հարց մը, թէ ի՞նչ էր այդ էներժիի եր-  
կու ձեւերուն ստեղծողը: Այս հարցումը  
կը կանխուի ուրիշ հարցումով մը, թէ՝  
«էներժիին իր երկու ձեւերով ստեղծուած  
է: Ստեղծուել՝ կ'ենթադրէ ժամանակին  
մէջ սկիզբ մը ունենալ:

Գիտենք, թէ ժամանակը յարաբերա-  
կան դադափար է: Այնքա՛յն փաստած  
է, թէ երբ աստղէ մը հեռանանք լոյսի  
տրագութեամբ, ժամանակը մեզի հա-  
մար կը դանդաղի: Ընդհանրապէս, ժո-  
ղովուրդին հասկցած ժամանակը, զոր կը  
չափենք արեւի շուրջ երկրագունտի կա-  
տարած հոլովոյթներով, անբաւարար է  
տիեզերքին մէջ: Ամէն աստղ կարելի է  
կապել ժամանակի դրութեան մը իր  
«սկիզբով»: Նոյնիսկ կարելի է ամէն մէկ  
աստղային դրութեան (galaxy) կապել  
ժամանակի դրութիւն մը. բայց հոս ար-  
դէն ժամանակի դրութեան սկիզբը երե-  
ւակայածին կը դառնայ, քանի որ կա-  
լախի կազմող աստղերուն մեծ մասը

տարրեր ժամանակներու մէջ ստեղծուած  
են: Կալախի հեռաւորութիւններու  
միութեան մը դադափարն է եւ ո՛չ թէ  
ժամանակներու միութեան մը:

Ձենք կրնար հարց տալ, թէ ե՞րբ  
ստեղծուած է մեր կալախին (Միլկա-  
թինը). քանի որ Միլկաթինը դիմագծող  
աստղերէն շատերը այլեւս գոյութիւն  
չունին... Իսկ շատ մը աստղեր, որոնք  
ներկայիս մեզի ծանօթ Միլկաթինին ձե-  
ւը կու տան՝ առաջ գոյութիւն չունէին:  
Ուրեմն, ժամանակի ընթացքին, Միլկա-  
թինի դիմագիծը յարափոփոխ ըլլալուն,  
անոր որոշ մէկ երեւակայածին դիմագծին  
սկիզբը միայն կարելի է ժամանակին մէջ  
զատորոշել (extrapolation սկզբունքով):

Իսկ երբ նկատի առնենք, թէ տիե-  
զերքին մէջ անծանօթ թիւով մեր Միլ-  
կաթինի նման աստղային խմբաւորում-  
ներ կան եւ որ բոլորն ալ էներժիի եւ  
նիւթի փոխանցումներու այլազան հա-  
մեմատութիւններ են, կ'անդադառնանք,  
թէ որքան անիմաստ է հարց տալ, թէ  
ե՞րբ այդ փոխանցումները ժամանակին  
մէջ սկսած են, ստեղծուած են: Անոնք  
չունին սկիզբ եւ չունին վախճան...

Էներժիի ձեւափոխումներու համե-  
մատութիւններուն մէկ շարքով, որ կը  
ճառագայթէ մեր ուղեղին մէջ, կրնանք  
պատկերացնել տիեզերքի էներժիի փո-  
խանցումներուն կարգ մը համեմատու-  
թիւնները միայն: Էներժիի ձեւափոխում-  
ներու որոշ համեմատութիւններն են,  
զորս կրնանք տեսնել, բռնել, հաշուել եւ  
այդ ձեւափոխումներու համեմատու-  
թիւններն են, որոնք անվերջ փոխուելով՝  
«կը ստեղծուին», ունին սկիզբներ եւ  
վախճաններ: Բայց ինքը, էներժիի ձե-  
ւափոխումը, «է»:

Լ. Ս. ՇԱՆԹ

## ԿՆՈՋ ՄԸ ԿԵԱՆՔԸ



(ՋԱՊԵՆ ԵՍԱՅԵԱՆԻ

ԳՐԱԿԱՆ ԺՍԻՄԱՆԳՈՒԹԵԱՆ

ԸՆԴՄԵՋԷՆ)



Գ.— ՊՈԼԻՍ ՎԵՐԱԴԱՐՁ — ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, Ջ. Եսայեան վերագործաւ Պոլիս անհանգիստ հոգիով, սակայն գրական արդէն իսկ յստակ համոզումներով: Ան լաւապէս կ'ըմբռնէր, որ Պոլսոյ ժողովրդական շրջանակին մէջ միջակ գրագիտուհի մը հեղեանք պիտի գտնէր լոկ, մեկուսացման պիտի դատապարտուէր: Լաւապէս կ'ըմբռնէր նաեւ, որ գրական առաքելութիւն մէջ յարատեւելու քաջութիւնը քիչերու արուած է, որովհետեւ ինչպէս տեսած էր արդէն Փարիզի մէջ, ընթերցողները յաճախ անկարող էին ըմբռնելու, միւս կողմէ՝ շատ յաճախ ումէնէն նենգաւորները եւ խորհրդանշերը կը յաջողէին այս առաքելութիւն մէջ, մինչդեռ ճշմարիտ արժէքներ անկարողութեան կը մատնուէին, կը ճաշակէին խալթող լեզուներու մաղձը կամ պարզապէս լրջապատին քար անտարբերութեան, «բացարձակ մեռելութեան» յուսահատութիւնը կ'ապրէին: Եսայեան թերթերն ու հրատարակիչները կը ստիպէին գրագէտը, որ հետեւի գրական աշխարհի գոհակութիւններուն, այլապէս նիւթական այնպիսի դժուարութիւններու կ'ենթարկուէր, որ կեանքը կը դառնար մշտապէս մղձաւանջ մը:

Մեծ առաքելութեան մը գիտակցութիւնը եւ ինքզինք արտայայտելու անընտրելի կամքը կընային փրկել գրագէտը: Այդ առաքելութեան գիտակցութիւնը ունէր Ջ. Եսայեան եւ այդ ձեւով միայն կրցաւ ինքզինք պարտադրել գրական գործունէութեան կեդրոն Պոլսոյ մէջ:

«Հոգիս ահարեալսն մէջ կը հաստատէ, թէ իբրեւ գրագիտուհի, իմ նպատակը եղած է «գտնել մարդոց հոգիներուն ճամբան, համադրել մարդկային ալեկոծութիւնները, կեանքի տարբերքն ու ըլլալ պատգամախօսը ա-

պագային, որ տակաւին տարտամ, ամեն ու ամէտրիկի երազ է բազմութեան համար» :

Սակայն, հակառակ այս առաջադրանքին, իր գրականութեան մէջ չի ներկայանար մեր ժողովուրդը իր բարքերով, իր հոգեբանութեան բազմապիսի երեսներով, իր ցանկութիւններով ու ստղնապներով: Իր հերոսահերոսները չեն ապրիր ժամանակուան մտահոգութիւնները, այլ կիներու հոգեկան խռովքները ներկայացնող յորինումներ են: Անոնք կաղապարուած են ներկայացնելու ամէնէն առաջ ի՛ր, գրագիտուհիի՛ն մտածումներն ու զգացումները, կեանքէն բխող զգացած ապրումները: Ամէնէն անի իր Կ'ամ է, որ զինք գրադնցուցած է ու այդ գորաւոր եւր մերթ հիացումով համակած է զինք, մերթ վարտով, մերթ ալ անձկութեամբ: Իր գրիչը կ'առաջնորդուի ներքին զգացումներու յազումով եւ ան ներուժ կեդրով կը վերապրի եւ արուեստին հրաշքով կը վերարտադրէ ու կը բանդակէ իր անցեալ ժամերը՝ իրենց արախութիւններով ու տխրութիւններով: Ահա եւ իր խոստովանութիւնը «Վէպչին մէջ» — «Եստեցնի... գրականութեան մէջ էր հոգիիդ ամէնէն ազնիւ բնագոյնը, ... Բու մէջդ ամփոփուած»՝ որոտի Բու զգայնութիւններու ամէնէն քանկազինը: Իսկ «Հոգիս ախարեային մէջ կը նկարագրէ իր ձեռնշնչումի ազդեցութիւնը»։ «Ներշնչումը ինձ չի ներկայանար տեսիլներով, այլ երաժշտութեամբ: Տեսալ մը խուլ, ներքին խորախորհուրդ համեմատաբար է, որ կը տեսնուի կամ միմեջիկ հոգեւոյ մէջ: Անկիւտ նման չէ ո՛չ մէկ յայտնի նուագարանի եւ ոչ մէկ մարդկային ձայնի հնչակեցութեան: Անկիւտ անի լայն ու դաշն կշռոյքը ծովին, Բամիին կամ անտառին ու երբեմն ալ միմեջացող առաւելի մը: Ուրիկոց կու գայ այդ դաշնակութիւնը իմ մէջ, ուրիկո՞ւ կը բխի անկիւտ կամ ի՞նչ արտաքին պատճառներ կարող են ստեղծել այդ, չեմ կարող յստակ բնկարտաքին աշխարհին եւ իմ ներքին էութեան միջեւ եղած կապերը յաճախ կը խզուին, կամ ինձ համար աննկատելի կը դառնան եւ հոգեւոյ խորքին մէջ է, որ ինչպէս անպատելի եւ անծանօթ գանձարանի մը կը բազմ իմ ներշնչումս» :

Դժուար էր ամբողջութեամբ գրականութեան նուիրուիլ խռովայոյզ այդ օրերուն: Գաղափարական հարցերը կը զբաղեցնէին մարդոց մտքերը, ազգային հարցը անձկութեամբ կը լեցնէր Պոլիս հաւաքուած հանրային գործիչներուն սրտերը, «մ'նաւանդ»՝ որ դաւաններէն կը հասնէին բացայայտ թշնամանքի մասի տեղեկագրեր, ժողովուրդը կ'ապրէր օրը օրին, առանց ետ նայելու եւ առանց համարձակելու ապագայի մասին յոյսեր սնուցանելու: Այս պայմաններուն մէջ արուեստագէտին դժուար էր ամփոփուիլ եւ պարապիլ զուտ գրական գրադումներով:

Այս ծանր ու բախտորոշ օրերուն, Զ. Եսայեան ձեռնածալ չէր կրնար մնալ: Ան կը հաւատար, որ հայ գրագէտը կարեւոր դեր ունէր կատարելիք: «Կարծես դարերէ ի վեր բռնութեան եւ ստրկութեան ճնշումին տակ հեծող ժողովուրդին ազատագրումի ճիշերէն մէկն է, որ պէտք է արձակել, ուժովը իմ սեփական տաղանդիս, իմ ներքին եւ առանձին գործքեմքս: Ու այդ զգացումը այնպիսի տարերային ուժով մը զիս կը վերացնէ, որ բոլոր եւթնոյնները եւ տխրութիւնները, կնոջ յատուկ փառասիրութիւնները կը քուլին անի վր մոխիր, դէպի երկնակամարը սլացող բացի մը շփեղութեան ճով»։ («Հոգիս ախարեայ») :

Զ. Եսայեան անուսման երանդով ու խանդավառութեամբ փարեցաւ հանրային ծառայութեան գործին (Սկիւտարի Տիկնանց Միութիւն, Ազգ. Հա-

յուհեաց, Ալիսատանքի Տուն) : Այդ շրջանին Պոլեոս գտնուող Թուրքներ, զնահատելով հանդերձ Զ. Եսայանի նուիրումն ու անխոնջ աշխատանքը, հետեւեալ դատումը կ'ընէ անոր զաղափարական դեգերումներուն մասին. «Անոր հակումները յեզափոխութեան, քարացած քարֆերու յեզաշրջման եւ նոր գրութեանց ստեղծման կողմն էին, թէեւ ինքը չուներ յստակ եւ վերցնական համազումներ : Այդ պատճառով՝ ան յեզաշրջուկ էր, անհանգիստ, որոնման մէջ, ամէն ինչէն դժգոհ եւ միշտ նորութիւն փնտռող : Ան նման է ծաղկէ ծաղիկ թռչող մեղուին. որ սղգալով կ'այցելէ ամէնքին, իւրաքանչիւրէն քիչ մը փաշի եւ քիչ մըն ալ նեկտար կը հաւաքէ, բայց միշտ կը սղգայ» («Հայ յեզափոխականի մը յիշատակներ», Զ. Հատոր, էջ 326-327) :

Ժիւղ է, որ Զ. Եսայան յստակ համոզումներ եւ վճռական դիրքորոշում չունէր, սակայն տեսակ մը օտպետական հպարտութենէ մղուած՝ եռանդով ծառայեց իր ժողովուրդի դատին : Արդարութեան պապակը ունէր անոր հոգին. մանկութեան կ'ուզէր մանչ ըլլալ եւ առասպելական հրէշները կոտորներէն բռնել ու սանձահարել : Հետագային, սուլթանին մահափորձին մասին լսելէ ետք, կ'ուզէր «էջփա», «խաչախճի», նոյնիսկ լեռը ապաստանող աւազակ ըլլալ, արդարութիւն գործադրել եւ այդ ճանապարհին վրայ հեշտանքով մտնել : Իր ժողովուրդի ճշմարտման, երբ արդէն հասուն կ'իյնէր, իր բուն զգացումները ո'չ յուսահատութեան, ո'չ ալ համակերպումի մղեցին զինք, բնդհակառակն, մղեցին յոյս ու հուսաք ներշնչելու շուրջիններուն, վարակելու զանոնք իր անսպառ կենսունակութեամբ :

Մէկ ալ հասաւ շնորհուցիչ լուրը. կիլիկիոյ աղէտը... :

Զ. Եսայան մէկն էր հանրածուէր կիներու այն պատգամաւորութեան, որ անմիջապէս ճամբայ ելաւ դէպի Ատանա, որքերու խնամատարութեան գործին ձեռնարկելու համար : Իր այս ուղեւորութիւնը, արիւնքաւոր ու հրդեհուած զաւառէն իր կրած տպաւորութիւնները անմահացած են «Անբախնումն մէջ» հատորով, գրական հագուադիւտօրէն խիտ դործ մը, վաւերական հաղորդութիւն մը ցեղին ցաւին հետ :

Այս ճամբորդութեան ընթացքին յատկապէս երկու իրականութիւն այնքան խոր ազդեցութիւն գործեցին Զ. Եսայանի վրայ, որ հետագային իր առնելիք ճակատագրական որոշումներուն մէջ կարեւոր դեր կատարեցին : Ան իր աչքերով տեսաւ, որ հակառակ տարածուող աւերակներուն, հակառակ հուրին ու սուրին՝ «ցեղին հանճար» խուսափած էր ռերագործներուն տապարներէն, զանակներէն, հրացաններէն, խարոյկներէն : Ասիկա էր «ցեղին վրէժը»՝ իր վերնձիւղումը աւերակներուն մէջէն : Մէկ կողմէ կոտորածին կսկիծն ու տառապանքը, միւս կողմէ հպարտութիւնը՝ ի տես մնացորդացին վերածնութեան ամենակարող հանճարին, Զ. Եսայանի հոգիին մէջ քանդակեցին անդամահատուած այլ յամառ, անկփելի, ապրելու եւ տեսելու բուն տենչանք ունեցող իր ժողովուրդին ծառայութիւնը, ինչ զնով ալ ըլլաւ այդ ծառայութիւնը :

Իր կրած երկրորդ ուժգին տպաւորութիւնը զաւառներու երիտասարդութեան կորուստն էր : Վճիռ դիմելով մակատագիր է մերը, որ մեզի թալլ չէ տաւած այդ արի, ընդունակ եւ օժտուած երիտասարդութիւնովը պարծնալու բարձրագոյն» («Անբախնումն մէջ») : Հետագային այս անարգարութեան զէժ ծառացող իր հոգին էր, որ մխիթարութիւն գտնել կարծեց Խորհրդային Հայաստանի ազատութեան եւ հուսաբարութեան քարոզչութեան հեղեղին մէջ :

Ե. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ —

ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԳՐԱԳԻՏՈՒՀԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Հայութեան համար մղձաւանջային այս օրերուն, Զ. Եսայեան հազիւ ճողովարկեցաւ մտաւորականներու սպանդէն եւ ապաստանեցաւ Պուլկարիտ: Մակայն չէր կրնար իր պատենանին մէջ քաշուիլ եւ իր ազատութեան մասին միայն մտածել, չէր կրնար մեկուսանալ եւ անմասն մնալ իր ժողովուրդի մղած գերմարդկային ճիգերէն դարեւու ստրկական լուծը թոթափելու համար: Ուստի՝ անցաւ Կովկաս, մօտէն հետեւեցաւ հետզհետէ կազմակերպուող կամաւորական շարժումին եւ Շոն էր, որ դրի առաւ Մուրաթի յուշերը՝ Սվազէն Պաթում կատարած իր ճամբորդութեան մասին:

Մակայն զժգոհ էր Զ. Եսայեան եւ հակառական զգացումներ կը խոռովէին հոգին: Դժգոհ էր, որ ժողովուրդի ճակատագրով դրաշագ դեկավար շրջապակները դինք լուրջի չէին առնէր, իրեն տեղ չէին տար, մինչդեռ ինք բուն ժամադրը ունէր գործելու, հերոսանալու: Ռուբէն այս կը վկայէ իր յուշերուն մէջ, կը հաստատէ ընդհանուր տեսակէտը, թէ ան «շնորհալի» գրադիրուհի մըն էր, սակայն իբրեւ հանրային գործիչ առաւելաբար զգացումներու ենթակայ եւ փոփոխամիտ էր եւ կ'աւելցնէ. «Ձապելը դժբախտ էր, արովիտեւ չէր գգար, որ ռզնայար չուներ»:

Զ. Եսայեանի հոգին փոթորկող տեսնած ուժերը առիթ կը փնտէին արտայայտուելու, հակառակ անոր, որ ինք կը գգար, թէ «ծոզովուրդը կ'անգիտանար զինքն եւ արիտմարիան կ'ընթերցար մեծագոյնը էր իր հետաքրքրութեան նկատմամբ» (անանկեղ ռուբէն): Ի վերջոյ ան դարձաւ նոր մայնէրու եւ ոգեւորուեցաւ հետզհետէ տարածուող Համայնավարական դաւաժաններով:

«Ճշմարտութեան» այս նոր խարխալումներուն արդիւնքը եղաւ Թուլ կառնցով միտող վէպ մը՝ «Նանահընդ ռուբէն»: Ինչպէս վէպին մէջ ալ կ'արտայայտուի, իր մտքին մէջ յօտակ չէր, թէ նոր դաւաժանութիւնը որքան հարազատ էր իր ժողովուրդի դարաւոր բաղձանքներուն, ձգտումներուն, երազներուն: Ան տարածութիւն կ'ըմբռնէր, թէ ճշմարտութիւնը հոն պէտք էր որոնել, սակայն հարց կու տար ինք իրեն, թէ ի՞նչ էր այդ «ճշմարտութեան կերպարանը»: «Ուզեց զայն պատկերացնել եւ տեսնել եւ ահա տեսաւ մարդու զէմքով, թեւաւոր եւ առիւծ, որ չոքած է իր գէմ եւ կը նայի իրեն ինչպէս Թեթի ափինը: Եւ անոր վեհապետական եւ քարեղէն աչքերն անկարեկիր եւ հեղինական կ'ըսեն իրեն»:

— Գուշակէ՛ ինձ, լուծէ՛ իմ առեղծուածը, ասլաթ Եւ կը լսի ինք Բ. Գրախտարար, Զ. Եսայեան չկրցաւ ժամանակին լուծել առեղծուածը, չկրցաւ ժամանակին գուշակել ճշմարտութիւնը եւ ան յուսախարութեամբ վերջացուց իր կէանքը:

Համաշխարհային պատերազմէն ետք, ժողովուրդին բեկորները ցրուեցան աշխարհի ամէն կողմերը: Ի վերջոյ Փարիզ ապաստանած Զ. Եսայեանը սրտի սեղմումով տեսաւ, որ դաղթականները մեծ մասով զանկոչ եւ իրաւազուրկ հիւրերն էին օտար հողին վրայ եւ չարաշար աշխատանքի գնով միայն կրնային կեանքի ամէնէն անհրաժեշտ պահանջները գոհացնել: Կար աւելի սարսափելին. խաւարը պատած էր ժողովուրդի մնացորդացին հոգին: Ազատութեան եւ անկախութեան իր դարաւոր երազին իրազորման ի խնդիր նուիրարեւած արիւնը, իր մտաւորական ընտրանիին կորուստը, հայրենիք

ստեղծելու իր գերմարդկային զոհողութիւնները, բոլորն ալ ի դուր անցեր էին: Ժողովուրդի յուսաբեկ բեկորները կարծես դիակնացած հոգիներ էին — կորսուած անցեալով, թշուառ ներկայով եւ անհորիզոն ապագայով: Ինչպէս կը նկարագրէ հետազոյն իր վերջին վէպին՝ «Բարպա խաչիկ»-ին մէջ (գրուած Հայաստանի մէջ 1936ին եւ հրատարակուած 1966ին): «Այդ ժողովուրդը, որ իր հաւաքականութեան զգացողութիւնը, իր լեզուն եւ գրականութիւնը, իր ազգային արժանապատւութիւնը ունէր, կը կորսնցներ այդ բոլորը: Խօսում էր այն թելը, որ անհատները կը կապէ իրարու: Եւ ամէն մէկը՝ ու՛րիկորոյն եւ մոլորուն, նոր հայրենիք կ'որոնէր, տեղ մը, ուր իր ներկայութեան հանգուածէն, ուր կարենար պատուաստել իր գաւակներու կեանքը... Խզուելով հազարամեայ անցեալէն եւ գրկուելով արեւէ եռամկաբէ, այդ բեկորները կը կորսնցնէին իրենց կեանքի իմաստը»:

Այս պայմաններուն մէջ քնական է, որ արուեստագէտին ճակատագիրն ալ մոթ ըլլար: Անհայրենիք արուեստագէտը զրկուած էր այն «կենտանիութեն», որ «պիտի ուճացնէր եւ ծաղկեցնէր» իր տաղանդը: «Ամէն մէկը միանակ ենթա իր լուսավորող պարագային աստիկ մը պէս կ'անցնիմ օտար երկնակամարներու վրայէն. ինչքան ալ փայլուն ու շողողուն ըլլայ մեր թոգած լուստար հետքը, անիկա դատապարտուած է ճարտանալու եւ կորսուելու: Մեր առանձին ձայնը համերգի մը ներդաշնակութեան չպիտի խառնուի երբեք: Մենք մեր կողերը դատարկ կը զգանք եւ այդ է պատճառը, որ մեր հագին շղթայուած է մեր անձնական ցաւին եւ տրախութեան մէջ: Ամէն անգամ, որ անիկա անհանգիստ իր գերութենէն ուզէ թափահարել, իր թռիչքը կը խորտակուի մեր յատուկ կեանքը ռաիմանափակող պարիսպներէն: Հաւաքական կեանքի աչկած ծովը եւ ազատ հորիզոնը միայն պիտի շնորհէր մեր ստեղծագործութեան զօրեղ շունչը: Մինչ մենք մեր վրայ խտացած, ստիպուած ենք քիւրեղանալ, խզուած անցեալէն եւ արգելափակուած՝ ասպայէն» («Հագիւս աքորեալ»):

2. Եսայիան ի վերջոյ յաջողեցաւ թօթափել այս ճշող, ամուլթիւն առաջնորդ հոգեվիճակը՝ շնորհիւ դիմադրականութեան իր զօրաւոր մղումին եւ ներքին մեծ հպարտութեան: Կիլիկիոյ սահմաններուն մէջ ակահատեալ եղած էր ցեղին անպարտելի, կենսաբուխ, հաւաքական տենչանքին: Ակահատեալ եղած էր կամքի ու զգացումի խլրտումին հալածանքի մտրակներուն տակ կորացած քամակներով մողովուրդին մէջ: Ուրեմն ինչպէ՞ս կրնար այս յորդ զգայնութեամբ օժտուած կինը անտարբեր մնալ, երբ Նոյիսի կոտորուած ժողովուրդին խլիկները «կուրծէն, քնազօրէն իրենց արիւնստած, պատառատուն գոյութիւնը պիտի տրամադրէին բոլոր յառաջընթաց հասանքներուն, ծառանալու համար եայրենիքին սպառնացող ամենամեծ վտանգին, բռնապետութեան վերադարձին դէմ, ի՞նչ նոր ձեւով եւ ի՞նչ դիմակով որ ան մերկայանար» («Աւերակներուն մէջ»):

2. Եսայիանի կենսունակութիւնը լուսատես արիւթեամբ կը դիմադրուէր ապագան ու ան ինքզինք կը տեսնէր այս յատուկ առաքելութեան լոյսին տակ: «Թէ մոլորիկ հրաժարումը որոշ ընտանի գաղափարներէ եւ մտքի ռովորոյթներէ, արիւթիւն է տեսալ վայրկեանին եւ թէ խառնի՝ բայց դարձեալ ստեղծագործ դեր կատարել է, երբ մարդս կարող է դառնալ կամուրջ իրարմէն հեռացող ժամանակաշրջաններու մէջ, արպէսգի անցնին անոնք, որ ուժ ունին անցնելու եւ Յոյն իսկ քանգին այդ կամուրջը վերադարձի մամբաները խզելու համար» («Պրումքէտս ազատագրուած»):

digitised by

A.R.A.R.@

Ու ան իր գրիչը տրամադրեց Խորհրդային Հայաստանի քարոզչության եւ տարիներով վարեց «Երեւան» պարբերականը, Վերջնական, հակառակ իր բարեկամներու թելադրանքներուն, վճռեց հաստատուիլ Խորհրդային Հայաստան այն վստահութեամբ, որ հոն կրնար դրական գործ կատարել:

## Ձ. ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Ք. Հայաստան կատարած իր այցելութեան տպաւորութիւնները ամփոփուած են «Պրամէթէս ազատագրուած» հատորին մէջ: խանգաժառ տողերու մէջէն յատկօրէն կ'արտայայտուին իր նոր դիրքորոշման գլխաւոր պատճառները:

1. Պրալետարական գրականութեան հմայքը.— Ձ. Եսայանի համար արտասահմանի դրականութիւնը իր ենթահողը կործնեցուցած վհատ ու լալկան նահանջի դրականութիւն մըն էր, անկարող ղեկարուեստական մեծ գործեր արտադրելու, մինչդեռ Ք. Հայաստանի մէջ կը հաւատար, որ պրոլետարիտները մեծ յարգ ու պատիւ կը վայելեն եւ «նեցուկ ունին իրենց կազմակերպութիւնը, կուսակցութեան ղեկավարութիւնը եւ աջակցութիւնը եւ գիտակից ընթերցողներու անմիջական խրախոյսը» («Պրամէթէս ազատագրուած»): Այս ապահովութեամբ, պրոլետարիտը իր նիւթը կը քաղէր առօրեայ կեանքէ, կ'ենթարկէր գեղարուեստական ձեւակերպման եւ կը ստեղծէր համադրական տիպարներ, որոնք ճշմարիտ օտեղծագործութիւններ էին այն չափով, որ կրնային հանդիսանալ «առաջնորդող աստղեր», իրենց կարգին ուղղելու համար զանգուածները դէպի գեղամասեր ոգեւորութիւն:

Պրոլետարիտը ունէր մեծ առաքելութեան մը դիտակցութիւնը, գեղարուեստական բարձր սեւերու մշակման համբով՝ ան պիտի արտայայտէր խորհրդային իրականութիւնը, պայքարի եւ յաղթանակի օրերը, գերագոյն նպատակներու իրագործումը՝ ինչպէս զանգուածներու վերամշակումը, գիւղատնտեսութեան «կոլեկտիւացումը», արդիւնաբերութեան զարգացումը:

Ձ. Եսայանի նման խորապէս զգացական կնոջ մը համար, որ չէր կրնար մոռնալ զարիւնի եւ հրդեհի արհաւիրքներէն խենթեցած ժողովուրդին մղձաւանջը, չէր կրնար մոռնալ այն կտրիճները, որոնք ինկան «անհնարին» բաղձնեցներու, զի զուրք յայտնու եւ երազներու ճամբուն վրայ, Ք. Հայաստանը, հայկական պետական կեանքը հրաշքի համազօր երեւոյթներ էին: Մինչ արտասահմանի մէջ «պարտուած» մարդիկ «մանր» վէճերով կը զրադէին, Հայաստանի մէջ ժողովուրդի յառաջդիմութեան համար էական զորք կը կատարուէր:

Ձ. Եսայանի ներգործական բուռն խառնուածքը խանդավառուեցաւ նոր կեանքով, մանաւանդ՝ որ հինը իրեն միայն թշուառութիւն եւ յուսահտութիւն բերած էր ու հոգեկան ապաստանարան մը գտած ըլլալու վստահութեամբ, ամուր կառնեցաւ նոր կարգերուն: Իրրեւ գրադիտուհի զնո՞ր դիմի՞ կ'ուզէր լիցնել իր բաժակին մէջ, կ'ուզէր ապրիլ ու արտայայտել խորհրդային իրականութիւնը, կ'ուզէր գտնել ներշնչման նոր աղբիւրներ, արտայայտման նոր ձեւեր, կ'ուզէր իր բաժինը բերել՝ կերտելու համար յաղթական նոր գրականութիւն մը:

Իր այս նոր առաքելութեամբ հմայուած, արտասահմանի հին մեծ ու փոքր վարպետներուն դժկամակութեան, տհաճութեան կամ նոյնիսկ բացառաւթ թշնամանքին ենթարկուիլը թերեւս առանձին հանգիստ ալ պատճառեց իր

ըմբոստ, յանդուզն, դիմադրականութեան գորաւոր ձգտում ունեցող խառնուածքին: Ինչպէս կը խոստովանի Հետադային Հայաստան գրած իր մանկութեան յուշերը սրբփակող «Սիլիկոնարի պարտէզները»-ուն մէջ. «Եւմ ամհատական տրամադրաւթիւններս կը հանդիպէին բոլորն դիմադրաւթիւններու եւ եւ կը պայքարէի անընդհատ փրկիքալէս եւ խելիով: Երբեք չէի համարեր, որ ուժէս վեր է այդ պայքարը եւ հաւանքելու որեւէ զաղափար չունէի... Այդ էր իմ կեանքի անհրաժեշտութիւնը եւ այդպէս ալ մնաց մեծնալէս յետոյ իմ կեանքի բոլոր շրջաններում, տարբեր պայմաններու եւ հանգամանքներու մէջ»:

2. Կրթական գործին հմայքը. — Կիլիկիոյ աւերակներուն մէջ իր կատարած շրջապատյոյ ընթացքին, Չ. Եսայեան խորապէս տպաւորուած էր տարուած Լիւզեմբրի մը պատին վրայի ճղնածամային մէկ արձանապատութենէն. «Լո՛յս, լո՛յս, լո՛յս»: Մա՛հ արհամարհող, դէպի լոյս ձգտող, վերածնունդի եւ անմահական գորութեան այդ ուժը թշնամիին դաւադրութիւնները անկատարութեան պիտի մատնէր:

Չ. Եսայեանի համար լոյսի կեդրոնը Լզուա Խ. Հայաստանը: Արդարութեան պապակը ունեցող իր հոգին մխթարութիւն գտաւ, տեսնելով մարդոց «հասարակութիւնը», ներուժ աշխատանքի թափը, ոգևորութիւնն ու աշխոյժը, մանաւանդ թշուառութեան ու տգիտութեան զէմ շուայուած ճիւղերը: Ինչպէս կը հաստատէ «Պրոմէթէոս ազատագրութեան» մէջ. «Լուսաւարտութիւնը տարածել մինչեւ ամենեւնի յետին եւ աշխարհէս չի կասկածուած անկիւնները. լոյս աշխարհի բերել թափուն ուժեր, շարժման մէջ դնել դեռ չի յայտնուած գորութիւններ, ձայն տալ համը շրթներու, մզում եւ կամք բազուկներու»:

Այս երեւոյթները գինք պահեցին «մտաւոր բարձրագոյն յուզումի մէջ». ան այլեւս չէր ուզեր վերսկսել զաղութահայ ճամուլը՝ կեանքը, այլ կը նախընտրէր «հոգեկան անդորրութեամբ եւ պայծառ տրամադրութեամբ» իր աշխատանքի ըստինքն բերել ամէն կարգի աշխատաւորներու կողքին, ի փառս Խ. Հայաստանի լուսաշող ապագային:

Ի հարկէ, ինչպէս տեսանք անցեալին, Չ. Եսայեանի դատումները առաւելաբար ուժանթիւ բնոյթ ունին: Անոր հոգին ծարսը ունէր մեծ զգացումներու, մեծ գոհողութիւններու, հիացումի, քաղցրութեան, տառապանքի: Ան պիտի նախընտրէր «սասանեցնող եւ նոյնիսկ մահացու» զգացումները՝ «ջուրտ եւ հանդարտ քունէն»: Ինչպէս կը հաստատէ իր հոգիին դերանուրբ ապրումները պեղող գործին՝ «Վերջին քաժակը»-ին մէջ, իր հոգին «կ'ուզէր սքափիլ, յայտնուիլ ու ապրիլ իր բոլոր գորութիւնովը, իր հոգի թափովը, ու այս ձգտումները, այս որոնումները զիս կը մոլորեցնէին, զիս ենթակայ կը դարձնէին սխալմունքներու»: Չ. Եսայեան իր բուն փափաքներուն համաձայն կը տեսնէր արտաքին երեւոյթները եւ ա՛յս է պատճառը, որ յաճախ ինքնախաղութեան զո՛հ կ'ըլլար: Այս անդամ եւս յուսախարութիւնը պիտի չուշանար. հմայաթափ հոգին պիտի տեսնէր իրականութիւնը այնպէս՝ ինչպէս որ էր, ո՛չ թէ այնպէս՝ ինչպէս ուզէր էր տեսնել:

(Շար. 2 եւ մնացեալը յաջորդում)

ՍՈՆԱ ԶԵՅՔԼԵԱՆ.



## ԷՕԺԵՆ ԻՈՆԵՍԻԶՕ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ե Ի

ՀԱԿԱ - ԹԱՏՐՈՆ

ԳՐԵՏ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ



Նման զստանցող սնտիքի մը կազմաորումը չհեռացուց Իոնեսքոն փաստաբանական ու արուեստագիտական աշխարհի վարձատրող հեռանկարներէ: 1955 Նոյեմբերին, «Նուվէլ Բըվի Ֆրանսէզ» հանդէսը հրատարակած էր կարճ պատմութեամբ մը իրմէ, որ հետագային պիտի ըլլար իր մեծագոյն Թատերախաղերէն մէկը: (Իոնեսքոյի Թատերախաղերէն հինգը արդէն գրուած էին իբրեւ պատմութեամբներ: «Պարտականութեան զոհ մը» (Une Victime du Devoir), որ նախապէս հրատարակուած էր «Միտիում»-ի մէջ, աւելի ուշ վերածուեցաւ Թատերախաղի մը՝ «Պարտականութեան զոհերը» (Les Victimes de Devoir) անունով: «Ուրիշ»-ը (Oriflamme) «Նուվէլ Բըվի Ֆրանսէզ»-ի մէջ, 1954 Փետրուարին, կազմեց «Ամէտ» Թատերախաղին նիւթը: 1957 Սեպտեմբերին, «Լէ Լէթրը Ֆրանսէզ»-ի մէջ հրատարակուած «Ռիմուէր»-ը պատմութեամբը եղաւ համանուն Թատերախաղին առաջը: 1955 Նոյեմբերին, «Նուվէլ Բըվի Ֆրանսէզ»-ի մէջ լոյս տեսած «Փնդապետին դիմանկարը» (La Photo du Colonel) դարձեալ Թատերախաղի վերած-

ուեցաւ: 1961 Սեպտեմբերին, «Նուվէլ Բըվի Ֆրանսէզ»-ին մէջ հրատարակուած «Օդային հետեւակ» (Le Piéton de l'Air) անուն պատմութեամբը, իր կարգին, վերածուեցաւ Թատերախաղի):

Առանձնաշատուկ խորք ունեցող պատմութիւններէն մէկը հաշուուող «Փնդապետին դիմանկարը» եղաւ նիւթը Թատերախաղի մը, զոր Իոնեսքո ամբողջացուց 1957 Յոգոտտին, Լոնտոն գտնուած միջոցին, եւ զոր խորագրեց «Անվճար ռմբագործ» (Tueur sans Gages) անունով:

«Անվճար ռմբագործ»-ը երեք արարներէ բաղկացած Իոնեսքոյի գործերէն երկրորդն է եւ ո՛չ միայն իր ամենէն փառասէր (ambitieux), այլեւ Թերեւս լաւագոյնը իր գործերէն: Հերոսը՝ Պիլա, սակայն մարդ մըն է, պարզ, անմիտ, սակայն մարդկային: Անմիտակէս որ Թատերախաղը սկսի, զինք տեսչե-

դին, այսինքն՝ քաղաքապետութեան ճարտարադէտին կողմէ ցոյց կը արուի փառասիրական նոր առաջադրանքի մը դէմ ջանդիման: Գործողութիւնը տեղի կ'ունենայ գիւղաքաղաքին գեղեցիկ մէկ նոր մասին մէջ, որ շինուած է լաւ յատակագծով մը՝ հաճելի պարտէզներով եւ աւազանով: Եւ գեո աւելին, ճարտարագէտին բացատրութեամբ՝ արեւուն փայլփրլու մը մնայուն կերպով կը ցոյց պատըսպարանին խորերէն, թէեւ գիւղաքաղաքին միւս մասերուն մէջ կրնայ առատ անձրեւ տեղալ ա՛յն վայրկեանին, որ կարեօ շողափայլ քաղաքին (cité radieuse) սահմանը եւ մտնեալ յաւերժական զարնան մթնոլորտին մէջ:

Պերանժէ, որ բնաւ չէր ըմբռներ, թէ նման նոր ծրագրի մը կատարելագործումը կրնար դոյութիւն ունենալ, եւ որ կը թափառէր այս նոր աշխարհին մէջ անըսուեր բախտով, խորապէս կը ցընցուի: Բայց ինչո՞ւ, կը հարցնէ ան, սիրելի այս թաղամասին փողոցները ա՛յս քան ամառի են: Ան կը շափշափուի, երբ կը լսէ, թէ բնակիչները կա՛մ հեռացած են եւ կա՛մ բանտարկած են իրենք գիւրնէ՝ իրենց տուներուն մէջ, որովհետեւ խորհրդաւոր ոճրագործ մը հետու կը գտնուի այս օւրախ վայրէն, ոճրագործ մը՝ որ կը հրապուրէ մահուան իր թեկնածուները, ցոյց տալով անոնց «դնդապետին դիմանկարը»: Ծարտարագէտը, որ կը յայտնէ, թէ ի՛նք եւս կը փորձէ գիտակցել ուստիկանի մը, ինչպէս նաեւ բժիշկի մը պարտականութիւններուն, չի կրնար ըմբռնել Պերանժէի օարսափը՝ իր կատարած այդ յայտնութիւններուն դիմաց: Այս բոլորէն ետք, աշխարհը թշուառութեամբ լի է: Վկանուած մանուկներ, սովահար ծերեր, յուսարեկ աշրիներ, որբեր, մարդիկ՝ օրհասի մէջ, դատական սխալներ, տուներ՝ որոնք յանկարծօրէն փռւլ կու գան իրենց բնակիչներուն վրայ, լեռներ, ջրաղբեր, հեղեղներ, ինքնաշարժներէ կոխկոտուած շուներ. — այս բոլորով է, որ թղթակիցները կը լսէին իրենց օրուան հացը: Պերանժէ կը զուշատի:

Եւ երբ կ'իմացուի, թէ վերջին դոճերուն մէջ կայ նաեւ օր. Տէնին՝ ճարտարագէտին երիտասարդ քարտուղարուհին, որուն նոր հանդիպած էր աւսրահարած, ան՝ Պերանժէն, կ'որոշէ իր մէջ մեղցեկ ոճրագործը:

Երկրորդ արարը կը ներկայացնէ Պերանժէի ազատ տնտեսակը, ուր այցելու մը, էտուրբոս, լաւ կը սպասէ տանտիրոջ: Դուրսէն կը լսուի յարկարածի բնակիչներուն աղմուկը, որ կը բարձրանայ անհեթեթ խօսակցութիւններու փրլուանքներով. — ուսուցիչ մը, որ կու տայ պատմութեան անիմաստ դաս մը: Համեմատութեան մէջ հմտացած գիտնական մը, որ կը հաշուէ այն գումարը, որ պիտի խնայուի, եթէ աշխատուորները փորձեն օրական հինգ անգամ շտաճախել լուացարան, այլ իրենց բնական պէտքը կատարեն կեղրոնացած ձեւով մը, տրամագրելով ատոր համար ամսական չորսուկէս ժամ միայն. Ծեր մարդ մը, որ կը խօսի անցեալի մասին — անհեթեթ խօսքի պատասխաններու ամբողջական համաներագ մը, որ կը ծաւալի յար եւ նման Վեմլեյտէ թատերախաղին մէջ գործադրուած բեմական աղմուկին: Պերանժէ կը վերադառնայ եւ ոճրագործին մասին էտուրբոսին կը հաղորդէ սարսափելի լուրեր եւ կը զարմանայ, տեսնելով, որ էտուրբոս, ինչպէս նաեւ ամէն ոք, շատոնց հաշտուած է ոճրագործին արտասահման գտնուած ըլլալու զազափարին հետ: Էտուրբոսի պայտասակը կը բացուի եւ կը տեսնուի, որ անիկա կը պարտուեալէ ոճրագործին տուրկանները, զորս ան ծախել կը ձեւացնէր, զնդապետի մը դիմանկարներուն դէզը եւ նոյնիսկ ոճրագործին անձնաթուղթը: Էտուրբոս կ'ըսէ, որ ինք սխալմամբ պէտք է առած ըլլայ պայտասակը, բայց խորհրդաւոր պայմաններու տակ՝ անոր վերաբերման զրպանէն կը յայտնուի աւելի քան զօրաւոր փաստ մը՝ — ոճրագործին օրագրութիւնը, քարտէս մը, ուր ճշգրտօրէն նշուած են նախորդ եւ նոյնիսկ ծրագրուած ոճրերնու վայրերը: Պերանժէ կ'ուզէ դիմել ուստիկանութեան: Էտուրբոս կը դժկամակի: Ի

վերջոյ, անոնք կ'ներթան, բայց էտուրա պայտասկը հետը չի վերցնէր:

Փողոցին մէջ, քաղաքական միջինի մը տեղի կ'ունենայ, Հրէշակերպ կ'իւն մը, la mère Pipe, որ նկարագրուած է իր-րու ժողովրդային ճաղարներու հոգա-տար եւ որ կը նմանի Պերանժէի Բոն-սիւրմին, քիչէ գաղափարներով տողո-րուն դասաստութիւն մը կու տայ ամ-բողջատիրական կարգերու մասին: Անոր յաղթանակէն ետք, աշխարհի մէջ ամէն բան տարբեր պիտի ըլլայ, ամենապահ-նունդ, թէեւ նիւթը պիտի մնայ անփո-փոխ: Բոնակալութիւնը պիտի վերակոչ-ւի ազատութիւն, անփականատիրութիւնը՝ ազատագրում: Գինով մը կ'ընդմիջէ դա-ստիստութիւնը: Ան կը ներկայացնէ Իո-նեօքոյի հակառակ տեսակէտ մը. իրաւ յեղափոխութիւնը, կ'առարկէ ան, ինչ-պէս Իոնեօքօ ըրաւ Թինանի տուած իր վերջին պատասխանին մէջ, չի կրնար ի-րագործուիլ քաղաքացիներու միջոցով, այլ կրնայ իրագործուիլ արուեստագէտ-ներու եւ մասնորականներու շնորհիւ, ինչպէս Այնթափ, Պրիթոն, Քենտինա-կէ, Փիքասօ, որոնք կը փոխեն մարդկու-թեան տեսնելու եւ մտածելու եղանակ-ները: Փանջ եւ ճիւղի խաղի մը ընթաց-քին, գինովը կը վնասուի: Պերանժէ կ'անդադրանայ, որ պայտասկը կտրու-ւած է: Մզմաւանջային հոգեվիճակի մը շարունակութեան ընթացքին, ան կը փորձէ անցորդներու ձեռքէն խլել նախ-կինին նմանող պայտասկներ, կը փորձէ ոստիկանութիւնը մղել սնրագործը երե-ւան հանելու գործին, բայց ոստիկանու-թիւնը աւելի կարեւոր գործեր ունի կա-տարելիք: Ան պէտք է հսկէ երթեւեկի կանոնաւորութեան:

Պերանժէ առանձին է: Ան կը քալէ պարպ փողոցներու մէջ: Բնամայրդա-րումը կը փոխուի միշտ ան կը շարունա-կէ առանձնաւ: Յանկարծ ինքզինք կը զտնէ ճշացող եւ քրքրացող գաճաճի մը զէմ յանգիման, որ հազած էր ազդուող հազուասներ: Ան կը հաստատէր, որ այդ գաճաճն է սնրագործը: Երկար խօսակ-ցութեամբ (որ տասը տալաքի էջեր զը-

րուած է Ֆրանսերէն օրինակին մէջ) Պերանժէ կը փորձէ համոզել սնրագոր-ծը, որ բացորոշ կերպով աշխատած յի-մար մըն է, ետ կենալ իր սնրածին եւ ա-նիմաստ գործունէութենէն: Ան կ'օգտա-գործէ որեւէ պատճառաբանութիւն՝ ի նպաստ մարդասիրական քարոզչութեան — հայրենասիրութիւն, ինքնամանու-շում, ընկերային պատասխանատուու-թեան ըմբռնում, քրիստոնէութիւն, միտք, որեւէ գործունէութեան ունայ-նութիւնը, մինչեւ իսկ եթէ ատկա ոճիւր մը ըլլայ: Սնրագործը այդ միջոցին ոչ մէկ բառ կ'արտասանէ, այլ կը շարու-նակէ քրքրալ յիմարաբար: Վերջաւորու-թեան, Պերանժէ դուրս կը հանէ երկու-հինգ զէնքեր եւ կը փորձէ սպաննել սն-րագործը, բայց չի յաջողիր: Ան կը նե-տէ զէնքերը եւ լռութեամբ կը յանձնուի սնրագործին բարձրացուցած գանակին:

Մանօթագրութեան մէջ, Իոնեօքօ կ'ընդգծէ այս վերջին տեսարանին նպո-տակը, ըսելով. «Անիկա կարճ արար մըն է՝ ինքնիր մէջ ամբողջ»: Խօսակցութիւ-նը պէտք է ներկայացուի ձեռով մը, որ յայտնակերպէ ճատիճանական անկումը Պերանժէի, անոր կզգիացումը եւ դա-տարկութիւնը բարոյական ըմբռնում-ներուն, որոնք կը խորտակուին ծակ-օղապարիկի մը նման: Իրականութեան մէջ, Պերանժէ, հակառակ իր կամքին, ինքնիր մէջ կը դնէ սնրագործին ի նը-պաստ պատճառաբանութիւններ: Սնրա-գործը (որ ըստ Իոնեօքօյի բեմական մէկ թելադրանքին երբեք պէտք չէ տես-նուի, այլ միայն անոր քրքիջը լսելի ըլլայ ստուերին մէջ), կը ներկայացնէ մահուան անխուսափելիութիւնը, մարդ-կային գոյութեան իսկ անհրաժեշտութիւ-նը: Ատիկա սնրային մնայուն գոյութիւն մըն է, որ թաքնուած է նոյնիսկ ամէնէն առողջ եւ թեթեւ տրամադրութիւններու ու անխառն ուրախութիւններու ետին եւ կը վերածէ զանոնք մեր ամէնօրեայ ցուրտ գոյութեան դուրս եւ անձեռեւտ նոյնմբերին:

Առաջին արարի շղարմակ քաղաքը (cité radieuse) բաժնին մէջ՝ Պերանժէ

մտնրամասնորէն կը նկարագրէ այն փորձառութիւնը, այսինքն՝ ա'յն ջերմութիւնը, որ քաջառողջութեան ու աննկարագրելի արեւոյթի մը ընդմէջէն կը լեցնէր իր Հոգին, կը մղէր զինք ուրախութեամբ պտուտու. «Ես կա՛մ, ես կա՛մ, ամէ՛ն ինչ կայ, ամէ՛ն ինչ կայ»։ Եւ ապա՝ ճիշդ եղերական բաժանումի վայրէջեանին, յանկարծօրէն դատարկութեան զգայնութիւն մը կը խուժէ Հոգիին մէջ, եւ՝ «պառաւնեք իրենց տան բակերէն դուրս եկան եւ ականջներս խլացուցին իրենց բարձր ու գոհնիկ ձայներով, շուներ Հովնցին եւ ինքզինքս լքուած զգացի այս բոլոր մարդոց ու իրերուն միջեւ»։ Ատիկա տոյն միջոյնըն է, ուր կը մըտնեք երբորդ արարով ու կը Հանդիպինք Կաթողիկոսին համերգի մը, որ տեղի կ'ունենայ բակը, ապա՝ ակունքաւ կ'ըլլանք քաղաքական ահաբեկի միջոցի մը եւ, վերջապէս, երեւոյթի մը, որ կը կառավարէ ոստիկանը։ Ատիկա բոլորին կողմէ ընդունուած ա'յն եղբայրացութիւնն է, թէ՛ անխառնափոխ մահուան դիմաց՝ կեանքը անօգուտ է, եւ որ արեւոյթը կը վերածէ յուսարեկութեան։ Մահը զնպաստին դիմանկարն է, որ ուրախութիւնն զոհերուն վրայ կը կատարէ նման ճակատագրական կախարհանք մը։ Բարոյական ոչ մէկ տուեալ կամ պատշաճութիւն կրնան յաղթահարել կէս-Հանճար ու յիմարական ոչնչութիւնը մարդկային կացութեան։

Անգամ մը եւս, ամբողջ Թատերախաղը կը Հանդերձէ բանաստեղծական միակ պատկեր մը, բայց այս անգամ աւոր ուժականութիւնը խաղին զարգացման հետ կը ստանայ իր վաւերականութիւնը ու կը խորանայ, Հակադրաբար «Ամէն» Թատերախաղին երրորդ արարին պրկուածութեան նուազումին։ «Անվար օմրագործը» անուն Թատերախաղին վերջին արարը ա'յնքան փայլուն է եւ կը ներկայացնէ ա'յնքան մեծ ուժ մը, որ կրնայ կողմէ զազաթնակէտ մը, մինչեւ իսկ առաջին տեսարանի շոգարձակ քաղաքը բանաստեղծական շլացուցիչ դիւանէն ետք։

Նշանակալից երեւոյթ է, որ Թատերախաղին նախատարրը Էդուարդ Կատարեւորը չէ կրցած շուքի մէջ ձգել արտասանուած վերին աստիճանի փայլուն ճառը։ Հոն, Հերոսը պարզապէս կ'անդրադառնայ, որ քարեկամական կամ Հեղինակային ոչ մէկ բառ կրնար Համոզել զինք. «Գեղեցկութիւնը չէր կրնար կաշառել զինք, Հեղինակը՝ ամշցնել, եւ ոչ իսկ աշխարհի բոլոր խելացի մարդերը կրնային ըմբռնել տալ իրեն յոգիին, ինչպէս նաեւ ողորմածութեան ունայնութիւնը»։ Այս Հակիրճ պարբերութիւնը, որուն զարգացումը կը յանգի եղբայրացնորէն շնչակտուր ճառի մը, ցոյց կու տայ Իսնեսքոյի Թատերախաղի մեծ ուժը։

1955ին լոյս տեսած կարճ պատմուածքին մէջ կը քաջակայի նաեւ ուրիշ տարր մը, որ կարեւոր տեղ մը կը զբաղէ 1955ին Հրապարակ Հանուած նոյնանուն Թատերախաղին մէջ։ Յաւելումը կը վերաբերի քաղաքական միջոցի մը եւ իրաւ յեղափոխութեան մը փաստարկութեան։ Ատիկա Իսնեսքոյի անող յաճութանքներուն օգտին առնուած միջոցառում մըն է, որ կը պարփակէ Հակահառութիւն մը՝ իր ծախքի քննադատներուն դէմ։ Թատերախաղին մէջ աւելցած այդ Հակա-քաղաքական տարրը, — որ Հակա-քաղաքական բլլալուն իսկ պատճառով քաղաքական է, — կրնայ տարակուսեցնէր ոչ ոք բանալ, ա'յն իմաստով, որ կ'անջատուի Թատերախաղին բանաստեղծական հիւստիւածքէն։ Ի վերջոյ, առաջին տեսարանի շոգարձակ քաղաքը շատ աւելի զօրաւոր փաստարկութիւն մըն է՝ ի նպաստ նոյն կացութեան։ Ատիկա պատկերն է աշխարհի մը, որ լուծուած են ընկերային բոլոր Հարցերը, մեկուսացուած են բոլոր զրգութիւնները, եւ սակայն, նոյնիսկ ա'յդ աշխարհին մէջ, մահուան ներկայութիւնը կեանքը կը դարձնէ փուռ եւ անհեթեթ։ Միւս կողմէ՝ խնդուած ներկայացնող տեսարանները, իրենց մղձաւանջային աղմուկով եւ զրգութիւններով՝

«Անվար օմրագործը» բեմադրուած էր Ինքամիւթ Թատրոնին մէջ, 1959ին

ևս դատած բառական մեծ ընդունելությունն  
մը: Բայց երբ 1960 Ապրիլին Նիւ Եորք  
Հասաւ՝ աւելի նուազ հասկացուեցաւ անի-  
կա եւ քանի մը անգամ Հադիւ բեմ Հան-  
ւած՝ բեմադրիչները Հարկադրուեցան  
դադրեցնել ներկայացումը: Պրուքս Աթ-  
քինսըն երրորդ արարը յայտարարեց  
«պէշ դրուած», առարկելով, որ վերջին  
տեսարանը զուրկ է շարժումէ եւ Հետե-  
ւարար Հանտանելի է թէ՛ շիդերուն Հա-  
մար եւ թէ՛ գեղարդիտականօրէն: Որով-  
Հետեւ փոխանակ կծու եւ զաւեշտականօ-  
րէն ողբերգական երգիծանք մը յատկա-  
նշուելու Պոնեքտի թատրոնը, խոր-  
քին մէջ, աւելի բիրա է, քան ծիծաղա-  
յարժ: Զաւեշտականին եւ ողբերգականին  
խառնուրդը կը Հակադրուի Հասարակու-  
թեան նաեւ բոլորովին նոր պայմանա-  
կանութեամբ մը: Կոսկած չկայ այն մա-  
սին, որ Պրուքս Աթքինսըն թատերախա-  
ղը կը դտնէ աննպատակ Հեգնանքներու  
կուտակում մը: Իր մեկնաբանութեամբ՝  
«Անվճար ռերագործը» ոճային դասա-  
կան բիրեղացման Հասած, ինչպէս նաեւ  
խրախուսուկ լեզու մը (langage) ունե-  
ցող դործ մըն է, ա՛նուազն Փրանսերէն  
իր ընագրին մէջ:

Աւելին. «Անվճար ռերագործը» իր-  
բեւ Հիմք ունի ո՛չ միայն ընդհանուր  
եւ փայլուն մտայնացում մը, այլեւ օժ-  
տուած է մանրամասնութեան մեծ վայե-  
լուշ առեւտրեկով. շոգարմակի քաղաքի  
բոժինը, օրինակ, ունի արեւու շոգեւ  
արձակող այնպիսի՝ կատարեալ կառույց  
մը, որ կրնայ ապակիէ յատուկ տուներու  
ընդմէջէն բոյսերուն սնունդ Հայթայթել  
ա՛յն քանակով, որ անհրաժեշտ է անոնց:  
Ճարտարապետը, Պերանմէն ցոյց տա-  
լով նոր Հրապարակը, կը շարունակէ  
զրաւեցնելային իր աշխատանքը, երբ Հե-  
ռաձայնի վրայ դանուած միջոցին, գիւյ-  
ուածով մը կը պարպէ դրպանը: Անոր  
Քարտուղարուհին, օր. Տէնի չի կրնար  
տանիլ զրաւեցնելային իր սովորական  
աշխատանքը եւ կ'որոշէ լեւել գայն: Այս  
է իր սպանութեան պատճառը. ոճագոր-  
ծը չի յարձակիր քաղաքապետութեան  
դործաւորներուն վրայ, եւ ազատութիւ-

նը ընտրելով՝ քարտուղարուհին կ'ընտրէ  
մահը: Ճարտարապետը պարզապէս ու-  
սերը կը թօթուէ, ժողովրդային մոլուց-  
քով մը, «սոճագործին մոլուցքը կը ստի-  
պէ, որ միշտ վերադառնայ ոճերին վայ-  
րը»: Էտուրտի briefcaseին մէջ զանազան  
օճագործին գործիքներուն մէջ կայ տուփ  
մը իր մէջ, որ, իր կարգին, կը բովան-  
դակէ ուրիշ տուփ մը, եւ այդպէս ան-  
վերջանալիօրէն կը շարունակուի: Քա-  
ղաքական միջիջնկին մասնակցող ամբո-  
խին մէջ, թէեւ Փարիզէն Հետու աղբող,  
բայց իրականութեան մէջ փարիզի փա-  
րահասակ ծեր մարդ մը կը Հարցնէ Դա-  
նուրի ճամբան: Այս բոլորը կը ներկա-  
յացնեն ստեղծումին փարթամութիւնը,  
որ կ'օգնէ Պոնեքտի յատուկ մղձուան-  
ջային աշխարհի կախարդանքին: Շափ-  
լինական հիւմուր մը եւ խոհական  
քնքշութիւն: «Անվճար ռերագործը»  
պէտք է դասուի անհեթեթի թատրոնի  
կարեւորագոյն գործերու կարգին:

«Անվճար ռերագործ»ին առաջին քե-  
մագրութենէն առաջ, Պոնեքտ յայտ-  
նեց, թէ աւարտած է երկարաշունչ թա-  
տերգութիւն մը՝ «Ռինգեղիք» (Rhinocé-  
éros): 1956 Նոյեմբեր 25ին, Վիեո Քա-  
լմպիէ թատերասրահին մէջ, Պոնեքտ  
Հրապարակային ընթերցումով մը ուն-  
կընդերներուն ներկայացուց թատերա-  
խաղին երրորդ արարը, բսելէ ետք ներ-  
կաներուն, թէ «թատերգութիւն մը կը  
գրուի ներկայացուելու եւ ոչ թէ կար-  
դացուելու Համար միայն: Եթէ ես ձեռ  
տեղը ըլլայի՝ ներկայ պիտի չըլլայի  
Հոս»:

Յաջորդ գարնան, թատերախաղը  
լոյս ընծայուեցաւ Հատորով: 1959 Օ-  
գոստոս 20ին, երբ արդէն Ֆերէք Փրաու-  
սի կողմէ անգլերէնի թարգմանուած էր,  
առաջին անգամ ըլլալով Հաղորդուեցաւ  
Պի.Պի.Սի.ի կողմէ: Նոյն տարուան Նո-  
յեմբերին, բեմադրուեցաւ Տիւտիսարֆ  
թատրոնին մէջ: 1960 Յունուար 25ին՝  
Փարիզի Օտեմ թատրոնին մէջ, Ժան-  
Լուի Պարրոյի կողմէ եւ Ապրիլ 28ին՝  
Անգլիոյ Բոյլ Քարթի մէջ, Օրսըն Ուէլ-  
սի կողմէ: Օրսըն Ուէլսի բեմադրութեան

մէջ՝ Պերանժէի գերը կը մարմնացնէր Սըր Լորէնս Օլիվիէն:

Իոնեսքո իբրեւ թատերադիր համախառնային ճանաչում գտաւ շնորհիւ «Ռնգեղիւր»:

«Ռնգեղիւր» թատերախաղին զընթացումը հերոսը, իր կարգին, Պերանժէ կը կոչուի: Այս հանդամանքը անբացատրելի կը մնայ, երբ մտածենք, որ «Անվնար Խնրագործ»-ին Պերանժէն կը մենի վերջին տեսարանին մէջ, թէեւ այս ենթադրութիւնը զօրաւոր հիմք մը չունի, անոր համար մանաւանդ, որ «Գնդապետի» յիմանկարքն անուն պատմութեան կը պատմուի առաջին դէպք երկրորդ, այսինքն՝ հերոսը մեռած չէ, եւ վարադրը կը գոցուի՝ հերոսին որեւէ մահացու հարուած տրուելէ առաջ:

Բայց ստուգումի այս պրպտումները բոլորովին զուր կը դառնան, երբ յիշուի երկու թատերգութիւններուն երկու Պերանժէներուն տրպարները համեմատենք իրարու հետ, որովհետեւ այդ համեմատութիւնը ցցուն պիտի դարձնէ անոնց միջեւ եղած տարբերութիւնները:

«Ռնգեղիւր»-ի Պերանժէն թէեւ նըստաւորութիւն էր զազափարապաշտ անձնաւորութիւն մըն է, այսուհետեւ երբ լինի թանտեսեցնական է, քան «Անվնար Խնրագործ»-ին Պերանժէն: Մինչ վերջինը Փարիզ կը բնակի, միւսը կ'ապրի գաւառական յետնալ գիւղի մը մէջ: Կարճ. անոնք իրենց անձնաւորութիւնը չեն, կարճ չէ նաեւ ենթադրել, թէ «Ռնգեղիւր»-ի Պերանժէն աւելի երիտասարդ Պե-

րանժէ մըն է, որ կը դառնուի իր ասպարէզին տոալին փոխին մէջ:

«Ռնգեղիւր»-ի Պերանժէն կ'աշխատի, ինչպէս ասան մը աշխատած է Իոնեսքո, օրէնսգիտական դիրքեր հրատարակող ընկերութեան մը մէջ: Ան՝ Պերանժէն սիրահարուած է օր. Տէյդին (որուն անունը հետաքրքրականօրէն շատ կը նմանի առաջին Պերանժէի սիրուհիին՝ Տէյիի անունին): Տէյդի ունի ժան անունով բարեկամ մը:

Կերակի առտու մը, անոնք ենթակայ կ'ըլլան դիպուածի մը, որուն մէջ կը տեսնուին, կամ կը կարծուի, թէ կը տեսնուին՝ մէկ կամ թերեւս երկու ողնղեղիւրներ, որոնք զլիսաւոր փողոցին կը յարձակին գիւղին վրայ: Հետզհետէ կը յայտնուին նոր ուղեղիւրներ: Անոնք գիւղին բնակիչներն են, որոնք վարակուած են շատ լուրջ հիւանդութենէ մը, որ ռնգեղիւրայտ (rhinocérosite) կը կոչուի, եւ որ ո՛չ միայն զանոնք՝ բնակիչները ուղեղիւրներու կը վերածէ, այլեւ ուժեղ, յարձակունակ եւ անդալ թանձրամորթներու վերածուելու զօրեղ ցանկութիւն մը կ'արթնցնէ անոնց մէջ: Վերջաւորութեան, ամբողջ գիւղին մէջ, միայն Պերանժէն եւ Տէյդին կը պահեն մարդկային իրենց կերպարանքը, ապա՝ մինչեւ իսկ Տէյդին չի կրնար գիմարել միւսներուն բնականօրէն պարտադրուած վիճակը ընդունելու փորձութեան: Պերանժէ կը մնայ առանձին, մարդկային վերջին էակը եւ յաւակնոտ կերպով կը յայտարարէ, թէ ինք անձնատուր պիտի չըլլայ:

(Շար. 6 եւ վերջը յաջորդով)

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆ

ԱՅԼԵՒՍ

ՅԱԻԵԼՈՒԱԾ 2Է



Ա. Ս. Պուշկինը մի ժամանակ գրել է Նաչչոկինին. «Դու իմն գրում ես ինչ-որ քննադատական ասույթի մասին, որ դեռ չեմ կարդացել: Եթե դու կարդայիր մեր ամսագրերը, ապա կը տեսնեիր, որ այն ամենը, ինչ մեզանում կոչում են քննադատություն, հաւասարապէս յիմար ու ծիծաղելի է: Ես իմովսանն ձեռն եմ քաշել գրանից. լրջօրէն առարկելն անկարելի է, իսկ հասարակութեան առաջ խեղկատակելու մտադիր չեմ»:

Կային ժամանակներ, մեր երկրի համար ծանր մի ժամանակաշրջան, երբ պուշկինեան այս խօսքերը կարող էին տարածուել մեր էլ քննադատութեան այն մասին վրայ, որ նոյնիսկ ոչ այնքան յաւելուած կամ ծանօթագրութիւն էր գրական երկի, որքան համապատասխան առաջնորդող յօդուածի կամ հրահանգի, մանաւանդ՝ որ համարեա՛ իսպառ բացառուած էր բռնապէճի հնարաւորութիւնը:

Սե կտրուելով այս դառն յիշողութիւններից՝ այժմ չի կարելի անկեղծօրէն շուրջապահուիլ, որ վերջին տարիներս մեր քննադատական միտքն ունեցել է նկատելի առաջընթաց: Ամէնից առաջ՝ փոխուել են հենց առաջնորդող յօդուածներն ու հրահանգները: Քննադատութիւնն այլեւս յաւելուած չէ, այլ կենդանի օրգանիզմ: Ուղեղի ծալքաւոր լինելը այլեւս հազուադիպօրէն զարգանք մէջ է վախ յարուցում. ընդհակառակն՝ բոլորն էլ սկսել են հասկանալ, որ այնպիսի ամենափտանդաւոր բանը ուղեղի արգոյկութեամբ չի լինում:

Սե այս ուրախալի երեւոյթը նկատելի է ո՛չ միայն երկրի կենտրոնում, այլև տեղական գրական կազմակերպութիւններում: Ինչքան պատկառելի քննադատների գործունէութեան, առաւել վերջերս հանդէս եկած երիտասարդների մտածողութեան մէջ: Լուրջ, հմուտ, բանիմաց քննադատական յօդուածներն ու գրախօսութիւններն այլեւս չտոնական ճաշերն չեն կենտրոնական հասուարք ամսագրերում. լոյս են ընծայուել գրականադիտական շատ

digitised by

A.R.A.R.@

աշխատութիւններ, որոնք այնպէս հետաքրքրական են վերլուծում ամենազանազան գրական խնդիրներ, որ ակամայ ցանկութիւն են յարուցում վերնաթեւերում եւ Տոսթոյեւսկուն, եւ Շէյքսպիրին, եւ Սալտիկով-Շչեդրինին, եւ Ռաբլէիին, եւ յունական ու հռոմէական գրողներին...

Բայց պատասխանելով Վապրաւի լիտերատուրիչ հանդէսի հարցերին՝ ես ուզում եմ ոչ այնքան գովել ու դրուատել (քանի որ քննադատութիւնը մարդու տալու աղջիկ չունի), որքան բարձրաձայն մտորել քննադատութեան այն գերի մասին, որ պիտի որակուի ոչ թէ «օգտակար» անականով, այլ «լուծէ» մակդիրով:

Ամէնից առաջ ուզում եմ ցուս յայտնել այն տոթիւ, որ գրական գիտութեամբ զրադուողներից շատ-շատերը (յամենայնդէպս, գոնէ Հայաստանում) բաւականին օրոշակի չեն տարբերակում բանասիրութիւնը, գրականագիտութիւնը եւ քննադատութիւնը: Սրանք բոլորն էլ ռահմանակից, բայց տարբեր գիտահիւղեր են: Սրանք թոյլուն էլ գրադուում են գրականութեամբ, բայց պիտի գրականութեանը նային տարբեր կողմերից: Ու եթէ բանասիրական աշխատութիւնը կարող է գրուել «զուտ գիտական» լեզուով, ապա այս նոյն անկարելի է հանդուրժել գրականագիտական դէպքում, այլեւս չիօսելով քննադատական աշխատանքների մասին: Այն կարելի մոռանալ, որ գրականագիտութիւնը ոչ թէ ինչ-որ գիտութիւն է ընդհանրապէս, այլ գրականագիտութիւն է: Եւ արուեստի հարցերից խօսողը պարտաւոր է նախ եւ առաջ խօսել արուեստով, ոճի մասին զատողը պիտի ոճ ունենայ: Մարդկանց գեղարարական հաճոյք պատճառելը եթէ առաջնահերթ պարտքն է գրողի, ապա պիտի պարտադիր պարտականութիւնը լինի նաեւ գրականագէտի:

Կան շատ գրողներ, որոնք առհասարակ չեն կարողում գրականագիտական ու քննադատական երկեր: Անձամբ ես կարող եմ այսպիսի գրողին սիրել, բայց չյարգել: Եւ նոյն ներքին մղումով ու նոյն հաճոյքով կարողում եմ որքան էրենբուրգին՝ նոյնքան Կլովսկուն, որքան Լէոնովին՝ նոյնքան Բախտինին, որքան Լինսկուրովին ու Վոզնեսենսկուն՝ նոյնքան Օգնեւին ու Վիգորսկուն: Բայց յաճախ (դժբախտաբար չա՛տ յաճախ) ստուարածաւալ մեծագրութեան ընթերցումը դեռ նոր սկսած՝ իսկօյն էլ ձեռն եւ քաշում դրանից, որովհետեւ քեզ տիրապետում է միեւնոյն միտքը. «Աստուած իմ, ինչի՞ եւ ո՞ւմ համար է գրուած այս ամէնը»: Իսկ երբ այսօրինակ գրականագէտը դեռ ճղճան ու անձնապատան ձեւով պարսաւում ու հայցոյցում է գրական կենդանի երեւոյթը, ապա ակամայ յիշում ես կաղնու, կաղնիի եւ հանրածանօթ առակի երբորդ «հերոսի» մասին...

Կան ոչ սակաւ գրողներ, որոնք առհասարակ տարակուսում են քննադատական գրականութեան հենց սեռի ու տեսակի օրինականութեան վրայ: Եւ նրանց շարքում չեմ: Բայց ինչի՞ համար է քննադատն ընդհանրապէս: Պէ՞տք է նա: Ի՞նչն է նրա գործի էութիւնը:

Ձեռն յիշում, ցաւօք սրտի, թէ ո՞վ է քննադատին նմանեցրել աստուածաշնչեան Ահարոնին: Սա, ինչպէս գիտէք, եղբայրն էր Մովսէսին՝ Աստուծոյ օրոշածին, բայց Մովսէսը ծանրալիզու էր եւ կակաղ, այս պատճառով էլ չէր կարող ժողովրդին հասցնել Աստծոյ կամքն ու պատուիրանները:

Ահարոնն, ընդհակառակն, ունէր լիզու, ուստի եւ Աստծոյ թուշտուութեամբ ինքն էլ էր մասնակցում Աստծոյ յայանութիւններին, որպէսզի տարածի եւ մեկնարարի Աստծոյ պատուիրանները՝ ժողովրդի մէջ:

Այս համեմատութեան մէջ, ըստ իս, համարեա՛ւ ամէն ինչ ճիշդ է: Ու



րեմն՝ քննադատ-Ահարոնի գործը նոյնպէս «Աստծոյ թոյլտուութեամբ է»։ Բայց նա (այդ քննադատ-Ահարոնը) պարտաւոր է յիշել, որ ինքն ընդամէնը Մովսէսի թարգմանն է եւ ոչ թէ Մովսէսը։ Նա աստուածային զրոյցի ունեւորդն է եւ ոչ թէ զրոյցողը։ Նա միջնորդի օգնականն է եւ ոչ թէ միջնորդը։ Աստծոյ եւ ժողովրդի միջեւ։ Ու եթէ այս ամէնը ճիշդ է, ապա ենթադրուում է երկու նախապայման։ Ահարոն լինելու համար պէտք է, նախ եւ առաջ, չլինել կակազ եւ ապա՝ լինել Մովսէսի հարադատ արեամբ։ Մինչդեռ մեր քննադատները յաճախ կակազում են շատ աւելի սաստիկ, քան իրենց «ծանրաշեղծ» եղբայր գրողը։ Բայց այս էլ զժրատութեան կէտն է։ Դժբախտութիւնը լրիւանում է, երբ յաճախ առանց մանրադիտականի վերլուծութեան էլ պարզապէս «չզինուած աչքով» անկարելի է շնկատել, որ «Ահարոնը ոչ միայն «Մովսէսի» եղբայրը չէ արեամբ, այլեւ խաչեղբայրն էլ չէ, ոչ էլ բախտակիցն ըստ կոչման, այլ ընդամէնը համակուրսեցիմ է, ընկերն՝ բոտ ուսումնական յկայազիր-դիպլոմի։

Այսպիսի դէպքերում արտայայտուում են քննադատի այլեւս ոչ թէ բընածին հակումներն ու հոտառութիւնը, այլ սոսցական-եկամուտ-մեքեր-բովի գիտելիքները չոր ու ցամաք։ Իսկ երբ դիպլոմանտի խելքին միանում է նաեւ ցածրաստիճանի դիպլոմանտի կարողութիւնը, ապա ստացւում է ճաշակի փայլի փոխարէն՝ ճաղատի փայլ, թափի փոխարէն՝ մեքերի թափահարում, հոգու եւ ոգու շաւղութեան փոխարէն՝ սովորական փնթութիւն, փելի-ստփայական հայեացքի փոխարէն՝ հասարակ ու սխալական նայուածք, եւ սկզբունքային կուսակիցութեան փոխարէն՝ պատեհապաշտական կողմնորոշութիւն...

Քննադատները յաճախ այն միտքն են արտայայտում, թէ զրոյցները չեն հասկանում իրենց իբր թէ այն պատճառով միայն, որ քննադատուում են։ Այս կարծիքի մէջ, հարկաւ, կայ ճշմարտութեան մի պնդ, որովհետեւ մարդը մարդ է մնում, եթէ նոյնիսկ նա էլ եւ ճշմարտ է։ Բայց չէ՞ որ զրոյցներին քննադատում են (գրաւոր ու բանաւոր), նրանց դասեր են տալիս ու խրատներ կարդում ոչ միայն քննադատները, այլեւ զրոյցներն իրենք, ըստ որում՝ զրոյցի խրատն ու խորհուրդը զրոյցն, իբրեւ օրէնք, ոչ միայն ընկալում է, այլեւ ընդունում երախտագիտութեամբ։ Ուրեմն՝ բանն այն չէ, որ քննադատուում են. նայած թէ ինչի՞ համար եւ ինչպէ՞ս են քննադատում։

Աւելին. իսկական բնադատը ճանաչում է ոչ այնքան այն բանով, թէ ինչպէ՞ս եւ ինչի՞ համար է բնադատում, այլ այն բանով, թէ ինչպէ՞ս եւ ինչի՞ համար է գովաբանում։ Գայթակգութեան քարը հենց այստեղ է։ Ահաւասիկ գովել են քեզ, պարզապէս երկինք հանել, բայց դու աքլորավարի քոյրէն փոխարէն չըջում ես գլխահակ ու մոլորաբայլ, որովհետեւ տեսնում ես, որ Աստծոյ Աստուածատուր են կոչել, այսինքն՝ գովել են այն, ինչ գովել չ'արժեք, եւ չեն նկատել (իսկ յաճախ էլ ֆարգուփշուր են արել) այն, ինչը չէր ընկատել ու չգովել, եթէ քննադատը լինէր ի բնէ եւ ի ծնէ «ճայնեղ» եւ ոչ թէ ընդամէնը «կոնսերվատորիա աւարտած»։ Ու եթէ քեզ գովաբանող քննադատին չես հաւատում, էլ ինչպէ՞ս վստահես նրան ու իր կարծիքներին, այլեւս չիօսելով նրա հեղինակաւորութեան մասին, առանց որի քննադատական ողջ բազմաբարբառութիւնը այլ բան չէ, քան սովորական «ճայն բարբառոյ յանապատի»։ Իսկ հեղինակաւորութեան հասնելն անկարելի է ոչ բառայ յանապատի։ Իսկ հեղինակաւորութեան հասնելն անկարելի է ոչ հաստատփոր հատորների քանակով, ոչ էլ գիտական տիտղոսների ու կոչումների կուտակմամբ, այլ միայն ու միայն ապացուցելով, որ զգում ես գրա-

կանութիւնը մաշկովդ եւ ոչ թէ դեղատոմսով, գրականութեան զարգացման օրէնքները հասկանում նեարդային բարձրագոյն համակարգով եւ ոչ թէ դասագրքային ճշմարտութիւններով:

Քննադատը, իմ խորին համոզմամբ, պիտի գրողից հասցնուի լինի եթէ ոչ բարձր, ապա գոնէ նրա շափ: Ձէ՞ որ էշմարիտ արուեստագէտը միշտ էլ նայում է այնտեղ, ուր «հասուն է մարդկանց հայեացքը պոչատ» (Վ. Մալախովի «Խոսքով ասած») եւ ձգտում է ընթերցողի առջեւ բաց անել այդ հեռուներն ու հեռուների հեռանկարը: Տերմինների քղամիտը, եթէ անգամ դա լինի կախարդական, այսուհանդերձ չի կարող մեզանից ծածկել գրական կենդանի ընթացքի շահագործող քննադատի կողմից, սերտած Փորձունքով գրական կենդանի ժողովուրդի փոփոխուող ու զարգացող երեւոյթները բացատրելու անկարողութիւնն ու անկարելիութիւնը:

Մեր քննադատական մտքի զարգացման ճանապարհին, իմ կարծիքով, մեծ խոչընդոտ է եւ այն, որ քննադատներից շատերը իրաւամբ իրենց պարտքը համարելով «տոա՛ջ» կոչելը, իրենք չգիտեն, թէ որտե՞ղ եւ ո՞րն է այդ «տոա՛ջը»: Այսպէս է ստացւում, բնու իս, այն պատճառով, որ նմանօրինակ գրականագէտներն արդի գրական հոսանքին ու ընթացքին նայում են ոչ թէ աչքերով, այլ ծածրակով, որովհետեւ դէմքով դարձած են դէպի անցեալը: Այսպէս էլ յամենայնգէպ գոնէ Հայաստանում (եւ ոչ միայն այստեղ): Ինչքան էլ լուսաւոր ու լուսեղէն լինի անցեալի գրականութիւնը, չի կարելի կուրտնալ այդ լուսով, եթէ չես ուզում աղօթել մթնած աչքերով, այլ պարտաւորուած ես զգում ընթանալ ատա՛ջ՝ ոչ թէ հակառակ, այլ հենց յանուն այդ լուսի եւ ի սէր այն բանի, որ նոյն այդ լուսը յարատեւի վերապայծառանալով: Հանրայայտի օրէնքների կրկնութիւնը դործ է աշակերտական: Նոր օրէնքներ յայտնաբերել գրական նոր երեւոյթների մէջ, — ահա՛ գրականագէտների եւ քննադատների գործը. ու եթէ ոչ օրէնքներ, ապա գոնէ օրինաւորութիւններ: Եւ առանց վախի, առանց աչքակալի: Այո՛, անյայտը վախեցնում է: Բայց քննադատը, ինչպէս որ հետախոյզը, չպիտի լինի երկշոտ ու վեհերոտ:

Քննադատութեամբ զբաղուել, չի նշանակում իրեն համար «հարսնացու ընտրել» բնու անձնական ճաշակի (եւ հայուենկատութեան): Ինձ թւում է, թէ հենց այստեղ է մեր քննադատութիւնն անտեսում այն պահանջը, ինչ առաջադրում էր դեռ Դորբոյեուսովը. «Եթէ երկն ունի ինչ-որ քան, ապա ցայց տուէ՛ք մեզ, քէ ինչ ունի. սա առաւել լաւ է, քան ընկնել կշռադատութիւնների ետեւից, քէ ինչ չկայ եւ ինչ պէտք է որ լինի այնտեղ»: Ձէ՞ որ հենց Կրիստիկա բառը նշանակում է քննադատութիւն եւ ոչ թէ դատաւճիւրիւն: Այս պատճառով էլ հազար անգամ իրաւ էր Դորբոյեուսովը, երբ ասում էր, որ քննադատը «տաւալի» դատաւարապետ է, քան դատաւոր: Բոլորս գիտենք դատաւորի տնունը՝ ժամանակ: Ծիւղ այսպէս էլ ծանօթ են նաեւ ատենակալները: Նրանց կարելի է անուանել ընթերցողներ: Ուրեմն՝ դատաւարապետանը պիտի զբաղուի իր ազնիւ ու վսեմ գործով՝ ոչ մի վայրկեան չմոռնալով, որ դրա համար պէտք է ունենալ մեծ սիրտ ու նոյնքան էլ լայն մտահորիզոն, որքան նրբին ճաշակ, նոյնքան էլ ուժուր պահանջկոտութիւն, որ ամենեւին էլ չի նշանակում քարոզ կարդալ ու տալ խրատներ, ինչ ամէնեւից յաջող անում են մեր տատիկներն ու պապիկները:

Այդ ազնիւ ու վսեմ ծառայութեան ճանապարհին, իմ կարծիքով, արդէն էլ հանգիստանում եւ այն, որ մեր քննադատներից շատերը գրականութեան

զոհները բացելու համար ունեն մէկ ու միակ բանալի: Բայց բանաստեղծական-գրողական ճարտարները բնաւ էլ չտեսնեցին միանման-նոյնանման շէնք շէնք, որի բոլոր զոհերին զոհուած լինի միանման-նոյնանման կողպէք: Գրողի ճարտարութիւնը նման է հինաւուրց ամբողջի, որի ամէն զուռն ունի ի՛ր փակն ու փականը, իր կողպէքն ու նիւթը: Ուստի եւ քննադատն իր պաշտօնով նման պէտք է լինի ոչ թէ նորօրինայ հաւաքարարի՝ հսկայական ողջ շէնքի բոլոր զոհները բացող իր մէկ ու միակ բանալիով, այլ հինաւուրց փակակալի՝ բանալիների այն ծանր կապոցով, որ պիտի կախուած լինի նրա նոյնիսկ ո՛չ կողքից, այլ վիզից (որպէսզի ամէն վայրկեան առաւել սուր զգայ զրանց անհրաժեշտ ծանրութիւնը)...

Ուզում եմ վերջում մի երկու խօսք էլ անել այն քննադատութեան մասին, որ հասցէադրուել է անձամբ ինձ, իմ ստեղծագործական աշխատանքին:

Քննադատների մէջ, զժբախտաբար, կան պարզապէս շկամ ու չարակամ մարդիկ, որոնք ղեկավարուած են ոչ միայն յոռի ճաշակով, այլ նաեւ անձնական հաշիւներով: Սրանք մարդիկ են, որոնց համար դատարկ խօսք է վաղնջական ու քրքալան այն առածը, թէ չթանաքը արիւնից պակաս թանկ չէ: Նրանց Աստուածը յաւուր պատշաճութիւնն է, դաւանանքը՝ պատահականապէս թիւնը, կուռքը՝ օրացոյցը: Բայց նրանց թիւը, բարեբախտաբար, մեծ չէ: Քննադատները մեծամասնաբար բարեացակամ, ազնիւ ու սկզբունքային մարդիկ են: Բայց հակառակ այս ամէնի էլ, յաճախ մեր ասույթը նմանում է երկու խուլի խօսակցութեան, որովհետեւ... մեր դրոշին միջամտում է մի երրորդ անձ էլ, որի անունն է ոչ թէ անձնական ճաշակ, այլ արդի զրականութեան վրայ սեւեռած հայիպը:

Յամենայնդէպս, այսօր ոչ պակաս, քան 136 տարի առաջ, տեղին են հնչում պուշկինեան խօսքերն այն մասին, որ «փքուն յորջորջումները, առանց պատճառի զուլքերը, փքուն կոչականները այլեւս չեն կարող գոհացնել ողջամիտ մարդկանց»: Եւ այսօր ոչ պակաս, քան 112 տարի առաջ, հարկաւոր է ունենալ մեծ քննադատի խօսքը. «Քննադատութիւնը, — պահանջում էր Չերնիշևսկին, — որ արժանի է իր անուանը, գրում է ոչ թէ այն բանի համար, որ պարզ լինողը ցուցամուտութիւն անի սրամտութեամբ, ոչ այն բանի համար, որ քննադատիմ քերի հասարակութեանը իր բառախաղերով գաւարնացնող վատկիւյսիմ կուսկետառացի փառք: Սրամտութիւնը, կծութիւնը, մազձը, քիչ այն ամէնի տէրն է քննադատը, պիտի նրան ծառայեն իրեն զենք հասնելու լուրջ նպատակի՝ ընթերցողների մեծամասնութեան մէջ զարգացնելու եւ մաքրելու ճաշակ, պիտի նրանց միջոց տան՝ համապատասխանաբար արտայայտելու կարծիքները հանրութեան լաւագոյն մասին»:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒՄԿ

(«Գրական Թերթ», 1966, թիւ 27)



## Կոմարներ

## Ա Ն Բ Ա Յ Ա Տ Ր Ե Լ Ի Ա Ն Տ Ե Ղ Ե Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

«Իսկ արեւիսայն քննադատութիւնը պարզապէս քրե-  
ցատրեալ ընթերցանութիւն է: Օշակամ չկայ Հայաստանի  
մէջ: Արեւն Տէրութեանը ստուերն իսկ չէ ալեւոր գրա-  
չելիւն»:

Բ. ԹԱՇՆԱՆ

«Բազմն»ի կանխող չփերուն արտագրուած «Քննադատութիւնն այլեւս  
յաւելում չէ» խորագիրը կրող Գ. Սեւակի յօդուածին ընթերցումով, մեզի  
պէս ընթերցողը ինքեւս անպայման յիշեց Բ. Թաշեանի վերի վճիռը, զոր  
արտասանած էր մեր ամառային Յուլիսի Համարին մէջ երեւցած Կ. Փոլա-  
եանի գրույցին մէջ:

Առաջ, Բ. Թաշեանի պէս, ամէնքս ալ պիտի ինքեւս, եւ ամէնուս հետ  
կը հաստատէ նաեւ Գ. Սեւակ, թէ Հայաստանի մէջ քննադատութիւնը յա-  
ւելում էր, մեւսով մը զօնաօթագրութիւն էր գրական երկիչ. աւելին. ունէր  
ինոյթը բառաշարագող յօդուածի կամ հրահանգի, մանաւանդ՝ որ Համարեալ  
ի սպառ բացառուած էր քանակէն հնարաւորութիւնը:

Առաջ այդպէս էր, իսկ հիմա գրութիւնը բոլորովին ուրիշ է, րոտ  
որում՝ քննադատութիւնը այլեւս յաւելում չէ, այլ կենդանի օրգանիկն:  
Երբ քանակէն բազմալի հնարաւորութիւններ սկսան ստեղծուիլ Հա-  
յաստանի մէջ (1954), նորերէն ոմանք, Հրանտ Թաճրաղեան, Սուրէն Աղա-  
բաբեան, Սողոմոն Սողոմոնեան, Վազգէն Մնացականեան եւ Սեւակ Արդու-  
մանեան զգայիւրէն առաջ տարին քննադատութիւնը, իսկ շուրջ քառասնա-  
կան թուականներուն ծնած ու վաթսուական թուականներուն կազմաւոր-  
ւած երիտասարդները՝ Ալբերտ Կոստանեան, Ֆելիքս Միլոյեան, Ստեփան  
Թովեան, Ալեքսանդր Թովեան եւ ուրիշներ քննադատութիւնը բարձրա-  
ցուցին քննադատի կոչումին վայել մակարդակի մը, ուր այլեւս տեղ չունին  
շոր ու ցամաք զստացական-եկամուտ-մեղքերովի գիտելիքները, և Տէրտէր-  
եանական օրերու «բացատրեալ ընթերցանութեան» և պիւրքի մը բովանդատ-  
կութեան անճշտ վերապատմումին փոխարէն՝ կ'իշխեն Սեւակի պահան-  
ջած ճշաւակի փայլը, Թափը, Հոգու եւ ոգու շաւյութիւնը, փոխոտփայ-  
կան հայեացքը եւ բնածին հակումներն ու հոսանքներն:

«Առկառական գրականութիւն» ամսութիւնի Յուլիսեան Համարին մէջ  
Տիրան Զրաքեանի մասին ստորագրած Ալբերտ Կոստանեանի սքանչելի մէջ  
դրութենէն կարգացէ՛ք հետեւեալ երկու պարբերութիւնը ու պարզ կը դառ-  
նայ Հայաստանի քննադատութեան մէջ կատարուած մեծ յեղաշրջումը:

«Վարուժանը գոյնի համադրում է՝ Զրաքեանը՝ լայսի քայքայում»:  
Վարուժանը անմիջական է ու իմբնաբոյս: Զրաքեանի օլտոկեթրը Յոլբերանդ-  
նորի հանդիսարան է. բայց մնայլ է, սառն է, չար է: Վարուժանի խնձորն  
ու ծիծաղը լիարժէք իրականութիւն է»:

Քննադատութեան արեւելութեամբ՝ ահաւասիկ տարբարագրելու, Հա-  
մեմատելու ու Համադրելու արժանիքներով օժտեալ Թանկ նմոյշ մը, ուր,  
ենթական, քննադատը կը բերէ վկայութիւնը լայն մշակոյթի մը, պայծառ  
մտահորդոյնի մը, ճաշակի մը, ոճի՛ մը: Հայաստանի մէջ քննադատութիւնը  
մասն է այս ոլորտին մէջ եւ իրաւունք չունինք քառասուն տարի առաջ կազ-  
մած մեր լափանիքներով մօտենալ երեւոյթին եւ անյարբեր ընդհանրացում-  
ներու մէջ անտեսել դեռ քառասուն տարիքը չբոլորած տղոց նոր ու պայծառ  
ճիւղը:

Աւելի լայն գաղափար մը տալու համար ընթերցողին՝ դիմացի էջին  
միայն կ'արտագրենք Ալբերտ Կոստանեանի վերոյիշեալ գրութենէն քանի մը  
հատուածներ եւս:

Շնորհիւ Ձրաքեանի անխորտակ յոյզի առկայութեան, ներքերուած տարրերը, այնուամենայնիւ, չեն կրում զուտ դիտական կառուցումներ կերպարանք, այլ ներգործում են դեղարուեստական պատկերին յատուկ հմայքի անմիջականութեամբ:

✱ Ամփոփենք չլոյսի հատուածին մասին ասուածը: Իրրիւ յղացում՝ անցնելի վերապրում. կարօտ: Իրրիւ իրադործում՝ յոյսի ակնթարթի որսում. իրաջայում: Ապրումի մնացորդը՝ նրբախոյզ (Չօպանեանի արտայայտութեամբ) նրբազգայութիւն: Ձգտումը՝ ձուլում համայնական զգայնութեանը:

✱ Հեղինակի ուրոյնութիւնը սկսում է բառի նկատմամբ դրսեւորած վերաբերմունքից: Նարեկացու մեծագործութեան եզրը դրանից է սկիզբ առնում: Դժուար չէ նկատել, որ հազարամեակով իրարից անջատուած նարեկացին եւ դարաւորի քանաստեղծներէ մի ամբողջ հոյ (Եղիա, Ձրաքեան, Մեծարեան, Վարուժան) նոյն ձգտումով են ողբելիւնում:

✱ Ձրաքեանը զուտ գրական տարրի է ձգտում, որին հասնում է նկարչական տարրի շնորհիւ: «Լուսաջիղ» բառը նկարչական էֆէկտի վրայ է հիմնուած, այնքանով որ ցանկանում է տեսողական պատրանք առաջացնել, բայց այդ պատրանքը գրական նկարագրութեան շի ենթարկւում, այլ իր արտայայտութիւնն է գտնում ամենամաքուի մեծի միջոցով. բառով:

✱ Ձրաքեանի ստեղծագործութեան մէջ նորը յայտնաբերութեան արդիւնք է, որ մեռ է բերում ինքնակազմարման միեմակում: Վարուժանը, օրինակ, անսահմանօրէն բեղմնաւոր է տարածական առումով: Ձրաքեանը ներհորիզոններ է ընդգրկում: Նրան չաւազրգոտող երեւոյթի արմատն է. նախահիմքը, նախատարբը, ներաշխարհը, ներհիմքիւնը:

Ու չեղանով հասարակական գործօնը, նշենք խորհրդանշանի գործութիւնն ունեցող այն մեակերպումը, որ արտայայտել է Ձրաքեանը, տալաիւնելով ընչաւոր նոճիկների տեւական հայեցողութեան. «չաւերժաբերձ հարկենախաղ հողին»: «Ներաշխարհից չձեռնհասան» անցնող այս արտակարգ դուպ, բայց անսահմանօրէն տաղանաւային ու բազմիմաստ զգայնութեան մէջ է Ձրաքեանի ստեղծագործութիւնը վերծանելու բանալիներէ մէկը:

✱ Վարուժանն ու Միստանթոն սիմվոլը եւրոպական գրականութեան թրեւեցիք բերեցին: Մեծարեանի ու Ձրաքեանի մէջ դա ծնուեց ինքնաբերաբար, իրադրութեամբ պայմանաւորուած: Բաժանումը պայմանական է, անհրաժեշտ է չեղան հետեւեալը. Վարուժանի քանաստեղծութեան մէջ Միմվոլը բանաստեղծական տեխնիկա է: Ձրաքեանի դէպքում՝ աշխարհագրացում:

✱ Ձրաքեանի կառոյցը կուտ է, բիրտ: Մեծարեանի քանաստեղծութեան մէջ ցրուած զգայնութիւնների ժողովումն է քանաստեղծական ամբողջութեան առաջնորդում: Ձրաքեանի քանաստեղծական եռ-ը կերպափոխում է նոճիկների նկարագրի մէջ, մինչդեռ Մեծարեանի մերում է քանկարին:

Ձրաքեանի տողը ծանր է, դանդաղաբայ: Մեծարեանի տողը տարազաւոր է: Ձրաքեանական ծայրագոյն լրջութիւնը հակապատկերն է մեծարեանեան թրթուռն ջերմութեան, ծիծաղկոտ երանգաւորման. խայտանք ու ցնծութիւն կայ նրա տողերի մէջ: Մարդ կայ Մեծարեանի պատկերի մէջ. նրա պարման ենք զգում. մէր է որոնում. հովիկի համբոյրից է ուղեւորում, անընթաց, լուսնական ծայրեր է լսում. ստուերների նրբանցմանն է հետեւում: Ձրաքեանը թանձրացնում է. յոյսի ու մութի սահմանադրն է ճշդում. սուրբ փաղկում. յոյսը նուազում է, մութը տարածւում. գիւրդուայ անդորրի մէջ խաղաղում են կրքերը: Եթէ Մեծարեանի քանաստեղծութեան մէջ գիշերուայ մուտքով է սկսում տեղը, Ձրաքեանի նկարագրած պատկերի մէջ, ընդհակառակը, վերանում են յոյզերը. աւելի ճիշդ, յոյզերը միաւորում են հակառակը, վերանում են յոյզերը. աւելի ճիշդ, յոյզերը միաւորում են հակառակը, վերանում են յոյզերը: Բանաստեղծի իղձն է նոյնանալ այդ գիշերին, այդ անդորրին, այդ անյոյզ միաւորմանը, Լուսնութեանը, Խղճմտանքին, Գաղափարաց կեանքին:

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

## ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



Ողբերգական մահով մեզանից հեռացավ մեծ բանաստեղծը՝ Պարույր Սևակը ապրեց մի գեղեցիկ կյանք։ Բանաստեղծն ու քաղաքացին ներդաշնակ էին նրա մեջ։ Նա արդարության ու ճշմարտության նախանձախնդիր մեաց կյանքում և ստեղծագործության մեջ։

Պարույր Սևակի պոեզիան ժամանակակից հայ բանաստեղծության մի նոր փուլը նշանավորեց։ Դասական բանաստեղծական աճանդները նորովի իմաստավորողն ու գրական երիտասարդությանը փոխանցողն էր նա։ Նրա պոեզիան ապրող ու ապրեցնող, մարտական ու զորեղ, կորովի ու առնական է։

Պարույր Սևակի բեղմնավոր գրչով ժառանգությունն թողածը ծանրակշիռ վաստակի վկայությունն է։ Նրա բանաստեղծական վեց գրքերը, գրականագիտական-քննադատական ուսումնասիրություններն ու հրապարակագրական ելույթները պայծառ կապեն ականավոր բանաստեղծի ու ակտիվ քաղաքացու հիշատակը։ Նա կապրի երկրորդ կյանքով։

«Սովետական գրականությունը» իր բազմաճաշար ընթերցողների անունից խորապես ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու բանաստեղծի արվեստի երկրպագուներին։

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

digitised by

A.R.A.R.@

## «ԱԻԵԼԻ ՅԱՐՄԱՐ ԱԺԽԱՏԱՆՔ»

Դիմացի էջին տրուած Պարոյր Սեւակի նկարը եւ նկարին տակ գետեղւած դրութիւնը «Սովետական Գրականութիւն» ամսագրի յունիստեան համարին կողքի երկրորդ երեսին լուսանկարչական պատճէնն է: Ինչպէս զիտէք, բանաստեղծը ինքնաշարժի զոհ գնաց նոյն ամսոյն 17ին եւ ամսագիրը յայտնապէս աւարտած էր իր ընթացիկ թիւին աշխատանքները եւ հետեւաբար հետաւոր չէր աւելի լայն ծաւալի մը վրայ մատուցանել յարգանքի տուրքը:

Այսպէս ըսինք մենք մեզի ու սպասեցինք ամսագրի յաջորդ համարին, Սեւակին տարողութեան համապատասխան արձագանգը յաջորդին մէջ գտնելու ակնկալութեամբ:

Հասաւ յաջորդ համարը, Սեւակի մահէն աւելի քան ոմիս մը ետք լոյս տեսած Յուլիսի թիւը, ուր, զարմանքով ստուգեցինք, Սեւակի առնչութեամբ կը տիրէր ընդարձակ ամսյութիւն մը: Այնքան ակնբախ է ամսագրին ցուցաբերած անտարբերութիւնը, որ կարծես ոչինչ պատահած է հայ գրականութեան ու իրեն համար հոգին յանձնուածը ունեցած է եւ ունի սովորական գրողի մը հասակը: Ո՛չ արտասույտ մը կատարուած է, ո՛չ բան մը գրուած եւ ոչ ալ տրուած է հետաւոր կամ մօտաւոր թուականի մը քանի մը առջ գրելու խոստում մը, ոչինչ:

Մենք ընտւ չենք վարանիր այս ցրտութեան ետին տեսնել ամսագրին զիտուոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանը, որ եղբորաբախ բանաստեղծին տոբթով կը դորձէ անոր հետ ունեցած առկախ հաշիւները լուծեամբ մաքրել:

Հայաստանի Գրողներու Հինգերորդ Համագումարի բեմէն, Սեւակ քանաստեղծներուն վայել քաջութեամբ մը ցնցած էր գրականութեան այս շարքային միջնակութիւնը, որ հիմա միջնակութիւններուն յատուկ ունակութեամբ վրէժ կը լուծէ արտակարգէն:

Պարոյր Սեւակ, ի միջի այլոց, միաժամանակ հարց կու տար ու կը հաստատէր.—

«... եւ ո՞վ է ամսագրի խմբագրութիւնը: Ի՞նչ հմուտութիւններով ու պոսիւնութիւններով է օժտուած նա: Ինձ քուով է, թէ ընկ. Կուրտիկեանը իր աչքեւ զրուած ամէն մի էջի վրայ կարգում է մի չգրուած ու չեղեալ նախադասութիւն: «Զգուշացէ՛ք, մահացաւ է»: Այո՛, զգուշութիւնն է նրա միակ առաքինութիւնը. աւելին՝ զգուշաւորութիւնը, անեղի կասկածաւորութիւնը: Բայց այս առաքինութեամբ կարելի է գեկավարել, ասեմք, պայքարելի միւրքերի վարչութիւնը, բայց ոչ պայքարելիութեան եւ պայքարելիութեամբ գրականութիւնը:

Այս պատճառով էլ ես չեմ ուզում եմ հաւատալ, որ Գրողների Միութեան նարնտիր գեկավարութիւնը ա՛յ միայն ընկ. Կուրտիկեանի համար կը գտնի աւելի յարմար աշխատանք, այլեւ կը քարմայցնի ամսագրի ողջ գրական կազմը: Դա եւ համարում եմ անյետաճելի հարց»:

Գրողներու Միութեան նորընտիր վարչութիւնը, ցաւօք, չընդառաջեց Պարոյր Սեւակի բողոքներին ու ցաւալի բաները աւելի բողոքացան տմայթերթի էջերուն:

Բայց պէ՛տք է այլեւ «Աւելի յարմար աշխատանք» մը տալ այս մարդուն եւ օր առաջ վերելն «սովետական գրականութիւնը» անոր ճահոնի կասկածաւորութենէն ու... քինանդրութիւններէն...

## Անբարեկամ Հոգիին

### Անեղի Կառոյցը



Պարոյր Սեւակի զրացուած պայծառ էջերուն փոխարէն, «Անվետական գրականութիւն» ամսագրի խմբագրութիւնը վեց էջոց (134-139) ծաւալ մը յատկացուցած է Վալերի Կիրպոտին կոչուած տխրահռչակ անձին հետ կատարուած դրոյցի մը, զոր վարած է Լեւոն Մկրտչեան ստորագրողը եւ, իր կարգին, ոչ բարեւ համբաւ ունեցող Հայաստանի չարքային քննադատներէն մէկը:

Յիշեալ գրոյցը իբրեւ խորագիր կը կրէ Կիրպոտինի հետեւեալ շտաբ լուծիւնը.

«Իմ քրեկամութիւնը Հայաստանի հետ»:

Հայ գրականութեան երկրորդ Ապրիլ 24ի (1937) պատմութեան ծալքերուն ծանօթ մարդը՝ ի լուր Կիրպոտինի անունին՝ վերաւորուեցաւ հարկաւ եւ մարդկային ազնիւ զգացումներ բովանդակող բառերը պոռնկացնող ունոր յանդիմութեան դիմաց՝ անգամ մը եւս արիւնեցաւ քաղժաշակաւոր Հայ ընթերցողներու օխտը:

Վալերի Կիրպոտին...

Ինքզինք Հայաստանի քարեկամ հռչակելու համար ուրիշներուն յիշողութիւնը արհամարհող բաւական մեծ համարժեակութիւն մը պէտք է ունեցած ըլլայ այս մարդը եւ անդամութեան նուազ ընդունակ պէտք չէ համարել այն միւսները, որ դեռ կը շարունակեն գրոյցի նստիլ Կիրպոտինի հետ եւ կը յանդիմանան գրոյցը պաշտօնական օրգաններէ փոխանցել ընթերցողին:

Վալերի Կիրպոտին...

Օրին, «Հայաստանի գրողներու դահլիճը» անուանուեցաւ այս Վալերի Կիրպոտինը եւ իրեն տրուած այդ անունը խոտոր չէր համեմատեր իր սեւ գործունէութեան:

Իր ահաւոր ու տրիւնոտ դերին անծանօթ մարդոց համար, արտագրենք 1937 Ապրիլ 23ի «Գրական քերթ»ին մէջ ստորագրած ընդարձակ դրոյսարտութենէն հատուած մը, որ ամբողջութեամբ կը 'դրսեւորէ ինքզինք Հայաստանի քարեկամ յորժորջող այս անբարեկամ հոգիին անհոգի կառոյցը»:



«Սիմոնեանը, Բակունցը, Ալազանը եւ ուրիշներ՝ գրականութեան մէջ գործեր եւ որպէս վնասարարներ, որպէս հակայնդաստիակներ, որպէս տրոցկիստներ եւ դաշնականներ, որպէս միջազգային կապիտալի գործակալներ, որպէսզի հայ ժողովուրդին շեղէին երջանիկ կեանքի ուղուց եւ վերադարձրնէին անցեալում նրա ապրած թաւոր սարսափներին: Հետագայում, Չարենցը ընկնում է հակայնդաստիակ մագիստրալիստների ազդեցութեան տակ: Մենք ունենալու գիտենք մեր «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրայ: Գրեմք էին Բակունցը, Խանգեանը եւ ուրիշներ»:

Այն օրերուն, մեղքերուն ամէնէն մահացունները «անմեղ մեղաւորներուն» ուսին բարդող եւ հոս արձանագրուածներէն աւելի թունուոր ուրիշ տողեր ոտորագրող անձն է աւաւասիկ, որ կը համարձակէ ինքզինք բարեկամ հռչակել Հայաստանի եւ «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրութիւնը կը ժպտի ընթերցողին ներկայացնել անոր «բարեկամութիւնը», ապաւնց հաշուի առնելու Չարենցի, Բակունցի ու Խանգեանի տասնեակ հազարաւոր երկրպագուներուն զղացումները:

Կը նկատէք հարկաւ, որ վերը արտագրուած թոյներու խմբագրման պահուն, Խանգեանը խորհրդաւոր պայմաններու տակ արդէն չատոնց ոչնչացուած էր եւ «Անյայտ բացակայ» կենսագրադէպին հեղինակ Բակունցը ինք եւս դարձած էր անյայտ յայտնաւոր մը: Կը մնար Չարենցը, որուն համար պատրաստած Կիրպոտինի «Ճանթկան գոթիքը» աստիճանաբար աւելի բորբոքեցաւ եւ շատ շանցած՝ «հակայնդաստիակական նացիոնալիստներ» կարգին՝ մոխրացուց նաեւ «նախըրցի հակայ պոետը»:

Չհաշուած մինչ այդ արդէն սրածուած դժմբուն մասին գրուած չաբաշուէ տողերը՝ մենք կ'անդիտանանք անոնց եղբրական ճակատագրին մէջ Կիրպոտինի բաժինը, բայց կրնանք մտապէս եղբրականել, որ Չարենցի բուն դահիճը եղաւ Վայքի Կիրպոտին: Հակառակ այս փաստին սակայն, Չարենցի նահատակութենէն ճիշդ քառորդ դար հոգ, տասնամեակ մը առաջ (1961), այս նոյն դահիճը, մարդոց յիշողութիւնը արհամարհող այս նոյն ոճով, պիտոտոտական այն նոյն դիւրութեամբ լուաց իր արիւնքու ձեռքերը եւ համակրալից յորդառա՛տ յուշեր գրեց Չարենցի մասին, սարսափելի շահանքեւեմ մը ուրիշներուն վերագրելով բանաստեղծին հասցէագրած իր գրաբարութիւնները եւ անոնց եղբրական հետեւանքը:

Կիրպոտինի յուշերը երեսցան 1961ին լոյս տեսած «Յիշողութիւններ Եղիշէ Չարենցի մասին» անուն հատորի էջերուն վրայ, ուր, ի միջի այլոց, կը հանդիպեն նախկին դահիճին նոր զեղումներուն:

«Չարենցի օրերը, իւրօրինակութիւնը, վիթխարի ծշանակութիւնը հայ գրականութեան մէջ ընդունուած էին բոլորի կողմից: Չարենցը միւսների մէջ աչքի էր ընկնում իր պոետական ոգով, եւ հասկանալի է, թէ ինչու էր մահոր ուղիների հիմնադիր, ռեալիստիկայի երգիչ, մոր օտերի վարպետ: Կային, սակայն, մարդիկ, մոյմիսկ Չարենցի տեսակարար կշիռը հասկացողներին, որոնք ռապալական պրակտիկայի կամ ազգային քաղաքականութեան կեղծ մեկնաբանութեամբ, կամ երբեմն խմբակային ախոյեանութեամբ եւ թափում մախանձի ազդեցութեամբ տակ, աշխատում էին գցել նրա հեղինակութիւնը: Նրան մեղադրել տէ՛ն տեսակ սխալների ու մեղքերի մէջ»:

Չարենցը արժեւորող եւ անոր թշնամիները դատաւարող այս զնահատանքը հիմնուած է 1933ին ստացուած տպաւորութիւններու դրամարի մը վրայ, այն չըջանին, երբ հառաջին անգամ ծանօթացայ Եղիշէ Չարենցի հետ»:

Այն ատեն հային, սակայն, մարդիկ»...

Զարենցի թշնամիները հաղպային քաղաքականութեան կեղծ մեկնաբանութեան տակ՝ դործող կեղծաւորներ պիտակող այս նոյն մարդն էր, որ Զարենցիս հետ ծանօթանալէ եւ դայն համէն տեղակ սխալներն ու մեղքերի մէջ՝ մեղադրող փորձովները հանդիմանէ չորս տարի ետք, ու աւելի՛ անշնչելի մթնոլորտի մը մէջ՝ խօսեցաւ Զարենցի մասին ու բանաստեղծին հաստատանեան թշնամիները չուքի տակ մղող հոանդով մը, կիրքով մը դրեց. «Նա սոնեզնում է մի գիրք՝ «Գիրք ճամնապարհի», որ ամբողջապէս գրուած է սրպէս եայ գրականութեան «ազգային յատկանշանքի խտացման» յետքիւնի իլլուստրացիա»:

«Ազգային քաղաքականութեան կեղծ մեկնաբանութեան» աղդեցութեան տակ Զարենցի դէմ նիդակ ճոճողներուն չափ տուողներէն մէկը ինք չէր կործնէ, կարծես հաղպային յատկանշանքի խտացման» դէմ գրող վերջի տողերը ուրիշ Կիրպոտին մը դտած ըլլար, կարծես ինք որեւէ՛ մութ գեր չէ կատարած, մութ ղերէր կատարած են միայն անոնք, կեղծ մեկնաբանները, նախանշողները, որոնք ըստ անմեղութեան քղամիդ հաղած այս նախկին արիւնաբորտին, «Զարենցին մեղադրում էին անցեալի իտէպականացման մէջ. ասեմք նա, ինչպէս հաղորդում էին, չէր էլ ժխտում մի քանի քեզերի սխալ լինելը, բայց երկիրը շաղկապող «ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԵՄԱՆՈՒԹՅՈՒՆ» նա համարում էր անցեալի սերունդների ՇԱՂԱԽԸ»:

«Ինչպէս հաղորդում էին»։ Ի հարկէ։ Ինչէ՛ր չէին հաղորդում այն սրբունն եւ հաղորդուածները անմիջապէս իմանալու ի՛նչ զգայուն տականք մը ունէր ինք։

Աւելի հետաքրքրական է սակայն Կիրպոտինի չակերտած եւ ընդգծած «ամենապինդ շաղախը», որ առնուած է «Եօթը խորհուրդ քաղաք կառուցողներին» անուն Զարենցի քերթուածէն, քերթուածին աւարտակ քառեակէն.

Պանգի մեռելների մոխիրն է ամենապինդ կերը,  
Ամենապինդ շաղախը եւ անհաւատչեան, —  
Եւ երանով է դառնում երկիրը-երկիր, —  
Եւ ժողովուրդը — ժողովուրդ, եւ գալիքը — գալիք՝  
անյողողող եւ անճառ...

Քերթուածին այս տունը ու անոր վրայ կառուցուած ամբողջութիւնը, որուն կը դիմէ հիմա Զարենցի դահիճը, լոյս տեսած է «Գիրք ճամնապարհի»-ի առաջին տարբերակին (1933) մէջ, որ շրջագայութեան շղրուեցաւ, ու յաջորդ տարին (1934), երբ արտոնուեցաւ հատորին դուրս գալ տպարանէն, այս բանաստեղծութիւնը, անշուշտ իր բովանդակած «ամենապինդ շաղախ»-ին համար՝ դուրս հանուած էր «Գիրք»էն, ուր հարա փոխարէն գեղեցիկ է յաջորդը՝ «Ուղեքն ուր հանճարեղ վարպետներին»:

Երկուան դահիճին այսօրուան սրտաղեղ դովքը հոս չի վերջանար։ Ու չարունակութիւնը ունի նոյնքան շնական բնայթ մը, որուն, տեղի անհուժեան պատճառով, պիտի անդրադառնանք «Բազմիցի յաջորդ թիւով»:

**ՇՆՈՐՀ ԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ**

- Ե՛ Ե՛ ԼՈՅՍ (Բանաստեղծություններ), Պ. Սե-  
ւս հրատարակություն «Մեհան» հրատարակչա-  
տու Պեյրուք, 1971
- ՀԼ Ե՛ Ե՛ ՎԱՅԵԼԶՈՒԹԵԱՆ (Բանաստեղծու-  
թյուն, Սալէք Թաքրիզի, քարգւ. Ռիմա Գա-  
նու թեհրան, 1971
- ՊԼ Ե՛ Ե՛ ՈՒ ՄԱՐԴԸ (Բանաստեղծություն),  
Եյ արդ Պարսումեան, Պեյրուք, 1971
- ՅԼ Ե՛ Ե՛ ՄԱՍՏԵԱՆ ՌՈՏՈՍԹՈՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ (Յու-  
շի Սարգիս Գ. Փափագեան, Պեյրուք, 1971

ՄՕՏ ՕՐԷՆ

ՄՕՏ ՕՐԷՆ

ԼՈՅՍ ԷԸ ՏԵՄԷ

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

Կ Է Տ Ե Ր...

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

**پاكين**

مجلة شهرية ، أدبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد ارتين كارنيك قزائجيان

**PAKINE**

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐԱՆԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒՆԵՍՏԻ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Պ. ՄԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՅԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵԻՆԵԱՆ

Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵՆ

† ԵՒ. ՊՅԱՅԵԱՆ

Խմբագրություն հասցե

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռաձայնի քիւ 296898

ՏԳ. ՀԱՄԱՅՆԱՅԻՐ



digitised by

A.R.A.R.@

ՏՈՒՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ 22 Լ. ՈՍԿԻ

ԱՌՏԱՆՈՒՆԻՐԱՆ 8 ՏՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani

Beyrouth - Liban

digitised by

A.R.A.R.®